HAL open science

[redacted]. [redacted]

Arestakes Simavoryan, Vahram Hovyan, Tigran Ghanalanyan

To cite this version:

Arestakes Simavoryan, Vahram Hovyan, Tigran Ghanalanyan. [redacted]. [redacted]. Dr. Eduard L. Danielyan. 2014, 978-9939-825-24-3. ⟨hal-03293214⟩

HAL Id: hal-03293214

https://hal.science/hal-03293214v1

Submitted on 27 Jul 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Autorisation HAL

HAL Authorization

ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ. ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երևան
2014

ՀՏԴ 061 : 323
ԳՄԴ 66.3
Ա 944

Գիտական խմբագիր՝
ԷԴՈՒԱՐԴ Լ.ԴԱՆԻԵԼՅԱՆ
պատմագիտության դոկտոր

Ա 944 Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2014. - 182 էջ:

Գիրքը նվիրված է Հայաստանից դուրս գործող հայագիտական կենտրոնների արդի իրավիճակի քննությանը: Վերջիններս դիտարկվում են ըստ աշխարհի հետևյալ չորս խոշոր տարածաշրջանների՝ Ամերիկա, Եվրոպա, Մերձավոր Արևելք և հետխորհրդային երկրներ: Ներկայացված են արտերկրում հայագիտական կենտրոնների հիմնման նախադրյալները, այդ կենտրոնների դերը հայության կյանքում, նրանց գործունեության հիմնական ուղղությունները: Անդրադարձ է կատարվել նաև արտասահմանյան հայագիտական կենտրոնների արդի խնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

Գիրքը նախատեսված է հայագետների, սփյուռքագետների, պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 061 : 323
ԳՄԴ 66.3

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2014
© «Նորավանք» ԳԿՀ, 2014

ISBN 978-9939-825-24-3

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Հեղինակային խումբ՝

Արեստակես Սիմավորյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար

Վահրամ Հովյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ

Տիգրան Ղանալանյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ……...…… 5

ԳԼՈՒԽ 1
ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ 9

ԳԼՈՒԽ 2
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 36
2.1 Ամերիկա 36
2.2 Եվրոպա 68
2.3 Մերձավոր Արևելք 94
2.4 Հետխորհրդային երկրներ 120

ԳԼՈՒԽ 3
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 137

ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՑԱՆԿ 155

ԱՄՓՈՓՈՒՄ …….…….....… 170

ՐԵՅՈՄԵ ……..……...……...……..… 174

SUMMARY ….……....……..… 178

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայրենիք-Սփյուռք համագործակցության շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում գիտության ոլորտն ընդհանրապես և հայագիտությունը՝ մասնավորապես։ Այս առումով առաջնային նշանակություն է ստանում արտերկրում գործող հայագիտական կենտրոնների մասին տեղեկատվական շտեմարանի ստեղծումը, որը կարող է արդյունավետ փոխգործակցության նախահիմք հանդիսանալ։

Սույն աշխատանքի հիմնական նպատակն է արտերկրում գործող հայագիտական կենտրոնների գործունեության ընդհանուր նկարագրի ներկայացումը։ Հայկական Սփյուռքի հայագիտական կենտրոնները հայրենի գիտակրթական կառույցների ուշադրության ոլորտում են, միևնույն ժամանակ ներդաշնակ համագործակցության որոշակի հայեցակարգ մշակելու անհրաժեշտություն է առաջացել։

Արտասահմանի հայագիտական կենտրոնների մասին առանձին հրապարակումներ հայաստանյան գիտական մամուլում եղել են նաև խորհրդային ժամանակաշրջանում։ Հայաստանի անկախացումը նոր ազդակ հանդիսացավ նրանց հետ հայաստանյան կառույցների հաղորդակցության համար, որը, սակայն, դեռևս բավարար չէ։ Հայագիտական կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Մայր Հայրենիքում հայագիտության տարբեր ոլորտներում առկա խնդիրները քննար-

կելու տեսանկյունից իրադարձային էին 2003 և 2013 թվականներին անցկացված համահայկական հայագիտական համաժողովները: Միաժամանակ, ակնհայտ է, որ անհրաժեշտ է ավելի հաճախ կազմակերպել նման միջոցառումներ Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների համագործակցության հարցերը լուծելու նպատակով:

ՀՀ կառավարությունը հայագիտության զարգացմանն ուղղված աշխատանքներում, արտերկրի առանձին կենտրոններին օգնություն ցուցաբերելուց բացի, հայեցակարգային մակարդակով իրականացրել է որոշ քայլեր, մասնավորապես՝ «Հայագիտության զարգացման հայեցակարգի» մշակումը: Դրա իրագործման համար ստեղծվեց «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը», որը ներառում է աշխարհի հայագիտական հաստատությունների հետ համագործակցության կազմակերպման և աշխատանքների ընդհանուր համակարգման խնդիրները[1]:

Մինչև աշխատանքների կազմակերպումն ու համակարգումն, իհարկե, պետք է պատկերացում կազմել, թե ներկայում ինչ կենտրոններ կան, որ երկրներում են դրանք գտնվում, ինչ կառուցվածքային միավորներ են, ինչ խնդիրներ ունեն, որոնք են համագործակցության հեռանկարները: Կարծում ենք՝ դրանց ուղղակի ենթարկումը որևէ կառույցի (նույնիսկ համահայկական) և նրանց վերահսկողությունը թե՛ անհնար է, թե՛ անիմաստ: Դրա փոխարեն անհրաժեշտ է հաշվի առնել նրանց բոլորի առանձնահատկությունները, հնարավորություններն ու

[1] Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ, Մեր մասին, http://www.haygithimnadram.am/aboutus.php?langid=1

հետաքրքրությունները, միավորել նրանց հայագիտության արդի խնդիրների շուրջ քննարկումներում: Այս ամենի արդյունքում կձևավորվի համագործակցության հայաստանակենտրոն առանցք՝ խթանելով հայագիտության զարգացումն արդի մարտահրավերների պայմաններում:

Սույն հետազոտությունն իրականացնելիս փորձել ենք արտասահմանի հայագիտական կենտրոնների խնդիրների վերաբերյալ լսելի դարձնել նաև նրանց ներկայացուցիչների ձայնը: Դրա համար կազմված հարցումն ուղարկել ենք շուրջ յոթ տասնյակ կենտրոնների, որոնցից, ցավոք, միայն վեցն են լրացրել հարցաթերթիկները՝ նշելով իրենց կենտրոններում առկա խնդիրները: Դրանք են՝ Լոնդոնի Հայկական ինստիտուտը, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնը, Դիրբոռնի Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը, Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը, Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտական ամբիոնը: Մեր նախաձեռնությանը նպաստող օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկերներին՝ Լևոն Զեքյանին, Տիգրան Եկավյանին, Վարուժան Սիրափյանին, Ժիզմունդ Բենեդեկին:

Այս հետազոտության շրջանակներից դուրս է արտերկրի բոլոր հայագիտական կենտրոնների գործունեության ներկայացումը: Միաժամանակ, հարկ է նշել, որ արտասահմանի հայագիտական կենտրոնների զգալի մասը բավարար չափով ներ-

կայացված չէ համացանցում, ուստի դժվար է նրանց այսօրվա պատկերի ու գործունեության մասին պատկերացում կազմելը։ Բացի այդ, որոշ կենտրոնների մասին տեղեկատվությունը խիստ սահմանափակ է, իսկ կայքերի առկայության պարագայում դրանց մի մասը հազվադեպ է թարմացվում։ Ուստի, մեր աշխատանքում հնարավոր սխալների ու թերությունների համար ակնկալում ենք ընթերցողի ներողամտությունը։

Աշխատանքում անդրադարձել ենք արտերկրի հայագիտական կենտրոնների արդի վիճակին, ապա ներկայացրել դրանք ըստ խոշոր տարածաշրջանների՝ Ամերիկա, Եվրոպա, Մերձավոր Արևելք, հետխորհրդային երկրներ։

Առանձնակի ուշադրություն է դարձվել Թուրքիայում գործող «հայագիտական» կենտրոնների գործունեությանը, որոնք բնույթով և նպատակներով սկզբունքորեն տարբերվելով մյուսներից՝ հակագիտական ու հակահայագիտական են, և սնում են նաև Ադրբեջանի հակահայկական քարոզչությանը։

Ամփոփման մեջ ներկայացրել ենք արտերկրի հայագիտական կենտրոնների հիմնական խնդիրներն ու արել որոշ առաջարկներ՝ դրանց հետ հայաստանյան ակադեմիական և բուհական համապատասխան կառույցների համագործակցության ու հայագիտության զարգացմանն ուղղված համատեղ աշխատանքներն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով։

Աշխատանքի վերջնամասում ներկայացված է միայն արտերկրի՝ սույն հետազոտության ընթացքում հաշվառված հայագիտական կենտրոնների ցանկն ըստ երկրների։

ԳԼՈՒԽ 1
ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայագիտական կենտրոններն այն կառույցներն են, որոնք իրականացնում են գիտահետազոտական և կրթական գործունեություն հայոց լեզվին և պատմությանը, հայկական մշակույթին, քաղաքականությանը և ընդհանրապես Հայաստանին ու հայությանը վերաբերող թեմաներով։ Ներկայումս արտերկրում կան 7-8 տասնյակ այդպիսի կառույցներ։ Աշխարհագրական առումով դրանք սփռված են հիմնականում Ամերիկայի, Եվրոպայի, հետխորհրդային տարածքի և Մերձավոր Արևելքի որոշ երկրներում։

Հայագիտական կենտրոնները կարող են լինել առանձին հաստատություններ կամ էլ մաս կազմել ավելի մեծ հաստատությունների, այսինքն՝ լինել դրանց ստորաբաժանումներից մեկը։

Առանձին կառույցները հիմնականում պատկանում են Սփյուռքին։ Որպես օրինակներ կարելի է վկայակոչել Մխիթարյան միաբանությունը (Վենետիկ, Իտալիա; Վիեննա, Ավստրիա), Զորյան ինստիտուտը (Արլինգթոն, ԱՄՆ; Տորոնտո, Կանադա), Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանը (Վաշինգտոն, ԱՄՆ) և այլն։

Ինչ վերաբերում է այն հայագիտական կենտրոններին, որոնք մաս են կազմում ավելի մեծ կառույցների, ապա դրանք, ըստ պատկանելության, կարելի է բաժանել երկու մասի։ Առա-

ջին խմբի մեջ մտնում են այն հայագիտական կենտրոնները, որոնք մաս են կազմում հայկական ավելի մեծ կառույցների։ Այդպիսիք են, օրինակ, Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնը, Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոնը, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքը, «Խաչեր Գալուստեան» մանկավարժական կենտրոնը, Զմմառի հայ կաթողիկե պատրիարքարանի դպրեվանքերը (Իգնատիոս Մալոյան, Ս. Միքայել) և այլն։

Ինչպես երևում է, այսպիսի հայագիտական կենտրոնները հիմնականում ունեն եկեղեցական պատկանելություն՝ Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների հովանու ներքո։ Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը և Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանն իրենց թանգարաններում, գրադարաններում, ձեռագրատներում (մատենադարաններ) ունենալով ուսումնասիրության կարոտ հարուստ հայագիտական նյութ՝ իրենց ենթակա վերոհիշյալ կառույցների միջոցով, ըստ էության, շարունակում են միջնադարյան հայոց վանքերի՝ որպես գրչության և գիտության կենտրոնների, ավանդույթը։ Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանը, չնայած կրոնական հաստատություն լինելու հանգամանքին, «չեղաւ միայն աղօթքի ու սրբակերտումի կեդրոն, այլ նաեւ դարձաւ օրրան գիտութեան եւ հոգեւոր ու մտային զարգացման եւ հետազօտութեանց»[1]։

Բեյրութի Հայկազյան համալսարանը, պատկանելով Հայ Ավետարանական եկեղեցուն, «կոչված է ապահովելու հայ գրա-

[1] Յուշամատեան Զմմառու Տիրամօր վանքին հիմնարկութեան (երկու հատորով), հատոր Ա., Զմմառ ներկայիս, Բեյրութ, 2001, էջ 253։

կանության, պատմության, քաղաքագիտական խնդիրների և մշակույթի ակադեմիական հիմնարար գիտելիքների մատուցում»[1]: Համալսարանում լուրջ ուշադրություն են դարձնում Սփյուռքի խնդիրներին: Համալսարանի նախագահ, վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոստյանի գնահատմամբ. «Մշակութային իր բացառիկ աւանդով ու հայկական արմատական ու հոծ ներկայութեամբ յատկանշուող Լիբանան խթան կը հանդիսանայ, Հայկազեան համալսարանը նկատելու բնական վայրը՝ հայութեան ու անոր միջինարեւելեան սփիւռքի ուսումնասիրութեան»[2]: Դրանով էր պայմանավորված 2012թ. հունվարի 25-ին համալսարանում Սփյուռքի հետազոտության կենտրոնի բացումը:

Երկրորդ խումբը կազմում են այն հայագիտական կենտրոնները, որոնք ոչ հայկական կառույցների մասն են կազմում: Այդպիսի կառույցներ են հանդիսանում տարբեր համալսարանների և ակադեմիական հաստատությունների հայագիտական ամբիոնները, ծրագրերը և այլն (օրինակ՝ ԱՄՆ Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայագիտության ինստիտուտը, Բոստոնի համալսարանի Հայոց նոր պատմության և գրականության ամբիոնը, Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտական ծրագիրը):

Այս խմբի կառույցների մեջ գերակշիռ են համալսարանական ստորաբաժանումները: Դրանք ստեղծվում և գործում են տարբեր ֆակուլտետների կազմում: Օրինակ՝ Երուսաղեմի եբ-

[1] *Ղանալանյան Տ.,* Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս», 2013, թիվ 2, էջ 46:
[2] Տեղի ունեցաւ Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի բացում Լիբանանի մէջ, http://hayernaysor.am/1327564076 հղումը՝ ըստ *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 49-50:

բայական համալսարանի Հայագիտական ծրագիրը գործում է Հումանիտար ֆակուլտետի Ասիական և աֆրիկյան հետազոտությունների ինստիտուտի Հնդկական և իրանական հետազոտությունների բաժնի (դեպարտամենտի) կազմում՝ որպես ինքնուրույն ճյուղ[1], Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Հայագիտության կենտրոնը՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմում[2], Կահիրեի համալսարանինը՝ Արվեստի ֆակուլտետի կազմում[3] և այլն։

Հատկանշական է, որ արտերկրի բուհերի հայագիտական ստորաբաժանումները հաճախ ստեղծվում են որպես դասընթացներ, որոնք ժամանակի ընթացքում զարգացում ապրելով՝ վերածվում են լուրջ կենտրոնների։ Այդպիսի զարգացում է ունեցել, օրինակ, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հայագիտության կենտրոնը[4]։

Հայագիտական կենտրոնների բացման հիմքերը

Արտերկրում հայագիտական կենտրոնների բացման հիմքեր են հանդիսանում հետևյալ հանգամանքները.

1. Օտար երկրներում հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը։ Օրինակ՝ 18-19-րդ դդ. Ֆրանսիայում և Ռուսաս-

[1] *Սարուխանյան Ս. և ուրիշներ,* Հայությունն Իսրայելում. որոշ խնդիրներ, Երևան, 2009, էջ 91։

[2] В Нижнем Новгороде открылся Центр армеведения, http://mediagid.am/ru/news/v-nizhnem-novgorode-otkrilsya-centr-armenovedeniya-503054

[3] New Armenian Studies Center in Cairo, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=356hlg14

[4] Տե՛ս В Нижнем Новгороде открылся Центр армеведения, http://mediagid.am/ru/news/v-nizhnem-novgorode-otkrilsya-centr-armenovedeniya-503054

տանում սկսեցին ուսումնասիրել հայ ժողովրդի պատմության խնդիրները՝ ելնելով մարդկության պատմության և մշակույթի մեջ Հայաստանի ունեցած քաղաքակրթական ներդրման արժեքորումից[1]: Նշվել է, որ հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրությունը և Հայաստանին ռուսական մտքի անդրադարձը 18-19-րդ դդ. ունեցել է օբյեկտիվ նախադրյալներ[2]:

2. Հայկական Սփյուռքի ջանքերը՝ ուղղված արտերկրում հայ ինքնության պահպանմանը: Սփյուռքի ձևավորումից ի վեր նրա օրակարգի առանցքային խնդիրներից է եղել օտար միջավայրում ազգային նկարագրի պահպանումը: Դրան սպառնացող մարտահրավերի[3] դիմագրավման արդյունավետ ուղիներից են հայոց լեզվի, պատմության, մշակույթի, գրականության, հայկական խնդիրների ուսումնասիրությունը և քարոզչությունը, ինչին էլ լծված են Սփյուռքի հայագիտական կենտրոնները: Ինչպես նշում է Ա.Սիմոնյանը, ներկայիս գլոբալացման պայմաններում «Ամենուրեք ծավալվող գիտական ու մշակութային համաշխարհային ընդհանուր զարգացումներում ինտեգրվելուց զատ, մեզ համար առաջնայինը շարունակում է մնալ ազգա-

[1] Դ.Ա. Կալմեն (1672-1757) (*Rev. Pére Dom Augustin in Dictionnaire de la Bible-Paris: Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846*) և Ս.Ն. Գլինկան (1776-1847) Հայաստանի պատմությունն իմաստավորել են մարդկության պատմության ակունքների հետ հոգևոր շփումների առումով (*Глинка С.Н.,* Обозрение истории армянского народа, М., 1832, տե՛ս *Даниелян Э.Л.,* Философское осмысление истории Армении в сочинении Сергея Глинки, «21-й век», N3, 2009): 19-րդ դ. Ֆրանսիայում Սեն-Մարտենի և Մարի Բրոսեի ջանքերով հիմնվեցին և զարգացան հայագիտական ուսումնասիրությունները:

[2] *Саядов С.,* Арменоведение в России: историографический очерк, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիազումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 44:

[3] Մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Հայկական սփյուռքի անվտանգության մարտահրավերները, «Գլոբուս», 2014, թիվ 5, էջ 39-40:

պահպանումը: Այս համատեքստում ռազմավարական մեծ նշանակություն է ձեռք բերում հայագիտությունը՝ որպես գիտահետազոտական բնագավառի գերակա ուղղություն»[1]: Հետևաբար, ժամանակակից գլոբալացման դարաշրջանում, երբ արագ տեմպերով են ընթանում ձուլման գործընթացները, Սփյուռքում «ազգային ինքնության, ավանդույթների պահպանման համար անհրաժեշտ է, որ ոչ միայն մշակույթը, այլև գիտությունը նպաստի դրան»[2]:

3. Հայաստանի ջանքերը՝ ուղղված ինչպես Սփյուռքում հայ ինքնության պահպանմանը, այնպես էլ ամբողջ աշխարհում հայագիտության զարգացմանը և հայկական մշակույթի ու քաղաքակրթության տարածմանը: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես աշխարհասփյուռ հայության ազգային պետություն, շահագրգռված է Սփյուռքի հայ համայնքներում ազգային ինքնության պահպանությամբ և հայ մշակույթի ու քաղաքակրթության տարածմամբ ամբողջ աշխարհում: Այդ պատճառով այն մշտապես աջակցել է արտերկրում հայագիտական կենտրոնների ստեղծմանը, պահպանմանը և զարգացմանը: Այդ միտումը տարեցտարի խորանում է: Պատահական չէ, որ վերջին շրջանում մեծ տարածում ունի ՀՀ դիվանագիտական շփումների, ինչպես նաև Հայաստանի գիտակրթական հաստատությունների արտաքին կապերի արդյունքում հայագիտական ամբիոն-

[1] *Սիմոնյան Ա.,* Հայագիտության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 92:

[2] В Нижнем Новгороде открылся Центр арменоведения, http://mediagid.am/ru/news/v-nizhnem-novgorode-otkrilsya-centr-armenovedeniya-503054:

ների ստեղծումը արտերկրի բուհերում: Օրինակ՝ 2007թ. Կահիրեի համալսարանի բանասիրական ֆակուլտետի կազմում հիմնադրվեց Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը[1], որը գործեց մինչև 2011թ. «արաբական գարունը»:

2011թ. հոկտեմբերին ԵՊՀ և Թեհրանի համալսարանի ռեկտորների հանդիպման ժամանակ որոշում կայացվեց հայագիտական ամբիոն բացել Թեհրանի համալսարանում[2]: Կամ ՀՀ-ում Ուկրաինայի նախկին արտակարգ և լիազոր դեսպան, հայագետ Ա.Բոժկոն 2010թ. սեպտեմբերին Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտելիս խոստացավ ջանքեր գործադրել Կիևի համալսարանում հայագիտական ամբիոն բացելու ուղղությամբ[3]: Մեկ այլ օրինակ է բարձրագույն կրթության ոլորտում հայ-ամերիկյան համագործակցության շրջանակներում ԱՄՆ Քոնեկթիկուտի համալսարանում հայագիտական ամբիոնի բացման նախաձեռնությունը[4]: Վերջերս ՀՀ օժանդակությամբ հայագիտական նոր կենտրոն է բացվել Զալցբուրգում (Ավստրիա)[5]: Այսպիսով, ՀՀ դիվանագիտական հարաբերությունները, ինչպես նաև միջբուհական համագործակցությունը ՀՀ և

[1] *Դանիելյան Է.,* Հայաստան-Եգիպտոս. Հայագիտական կամուրջ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», թիվ 1, 2011:

2 В университете Тегерана откроется кафедра арменоведения, http://www.yerkramas.org/2011/10/19/v-universitete-tegerana-otkroetsya-kafedra-armenovedeniya/

[3] В Государственном университете Киева будет открыта кафедра арменоведения, http://www.panarmenian.net/rus/society/news/53666/

[4] Университет Коннектикута откроет кафедру арменоведения, http://news.mail.ru/society/arc676658/

[5] *Կալցուարի Վ.,* Եվրոպական հայագիտութեան արդի վիճակը եւ խնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիազումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 40:

արտասահմանյան բուհերի միջև կարևոր նշանակություն ունեն մեր օրերում աշխարհում հայագիտական կենտրոնների թվաքանակի աճի և հայագիտության տարածման համար։

4. Արտերկրում հայկական մշակութային և գրական հարուստ ժառանգության առկայությունը հայագիտական հետազոտությունների լուրջ նյութ է և ինչ-որ տեղ հիմք է հանդիսանում հայագիտական կենտրոնների ստեղծման ու պահպանման համար՝ հայագիտական հետազոտություններով զբաղվելու նպատակով։ Օրինակ՝ Սպահանի համալսարանի հայագիտական կենտրոնը զբաղվում է տեղի հայկական եկեղեցիներում պահվող ձեռագրերի և մյուս հոգևոր արժեքների ուսումնասիրությամբ։ Հայագիտական արժեք ներկայացնող և հայագիտական ուսումնասիրությունների նյութ ծառայող ձեռագրեր և այլ հոգևոր արժեքներ (հայկական դրամներ, նկարներ, քանդակներ և այլն) կան նաև Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունում, Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանում, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանություններում և այլուր։

Հայագիտական կենտրոնների դերն արտերկրում

Սփյուռքի հայագիտական կենտրոնները, իրականացնելով կրթական և հետազոտական գործառույթներ, ունեն որոշակի դեր և նշանակություն հայության կյանքում։ Հատկապես կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Հայապահպանություն։ Արտերկրի հայագիտական կենտրոններն իրենց գործառնությամբ նպաստում են հայապահպանությանը Սփյուռքում։ Եկեղեցիների, դպրոցների, մամուլի և այլ կառույցների կողքին դրանք հանդիսանում են այն

հաստատությունները, որոնք համախմբում են հայերին արտերկրի համայնքներում և դրանց հաղորդում ազգային նկարագրին համապատասխան գիտելիքներ: Մասնավորապես, արտերկրի բազմաթիվ համալսարանների շրջանակներում գործող հայագիտական կենտրոններում ուսանում են մեծ թվով հայ երիտասարդներ, որոնք այդ կերպ սովորում են հայոց լեզու, ծանոթանում են հայոց պատմությանը, գրականությանը, մշակույթին, արդի կյանքին: Հայագիտական կենտրոններում երբեմն ուսանելու են գալիս հայ երիտասարդներ, որոնք չեն տիրապետում հայերենին: «Փաստը, որ այստեղ դասավանդվում է հայոց լեզու, ստեղծվել է հայագիտական կենտրոն, որը կաշխատի հայ համայնքի հետ սերտ կապի մեջ, վկայում է այն մասին, որ հայերի ազգային ինքնությունը կպահպանվի»,- Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմում Հայագիտության կենտրոնի բացման առիթով նշում է կենտրոնի տնօրեն Ռեգինա Սաֆարյանը[1]: Կամ Բեյրութի Հայկազյան համալսարանի առնչությամբ Տ.Ղանալանյանը նկատում է. «Որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ մեծ է համալսարանի դերը Լիբանանի հայկական համայնքի կյանքում, որն արտահայտվում է ինչպես ուսանողներին ժամանակակից անհրաժեշտ գիտելիքների փոխանցմամբ, այնպես էլ նրանով, որ ապահովում է հայոց լեզվին, պատմությանն ու մշակույթին նրանց հաղորդակցությունը»[2]: Իսկ Երուսաղեմի եբրայական համալսարանի Հա-

[1] В Нижнем Новгороде открылся Центр арменоведения, http://mediagid.am/ru/news/v-nizhnem-novgorode-otkrilsya-centr-armenovedeniya-503054

[2] *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 50:

յագիտական ծրագրի առնչությամբ նշվել է, որ հայագիտական հետազոտությունների և կրթության հնարավորության պահպանումը Երուսաղեմում «կնպաստի հայկական թաղամասի ազգային-քրիստոնեական նշանակության պահպանմանը և հարատևմանը»[1]:

Այսպիսով, հայագիտական կենտրոններում ուսանելու ընթացքում ձեռք բերված գիտելիքները հայոց լեզվի, հայոց պատմության, հայկական մշակույթի և առհասարակ Հայաստանի ու հայության վերաբերյալ ամրապնդում են սփյուռքահայերի ազգային ինքնագիտակցությունը և այդ կերպ նպաստում հայապահպանությանը Սփյուռքում:

2. Հայկական քաղաքակրթության տարածում: Հայության կյանքում արտերկրի հայագիտական կենտրոնների ունեցած երկրորդ կարևոր նշանակությունը հայկական քաղաքակրթության տարածումն է: Դրանք, այլ կերպ ասած, հանդիսանում են արտերկրում հայոց լեզվի, հայկական մշակույթի, հայության և Հայաստանի մասին գիտելիքների ստեղծման ու տարածման գործակալներ: Նաև նրանց գործունեության միջոցով են արտասահմանում օտարերկրացիներին հասու դառնում հայկական քաղաքակրթության ստեղծած արժեքները, ինչպես նաև Հայաստանին ու հայությանը հուզող խնդիրները: Չէ՞ որ, օրինակ, արտերկրի համալսարանների հայագիտական ամբիոններում ուսանում են ոչ միայն հայեր, այլև այլազգիներ: Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հայագիտության կենտրոնում հայե-

[1] *Սարուխանյան Ս. և ուրիշներ*, նշվ. աշխ., էջ 101:

րի հետ միասին հայոց լեզու են սովորում նաև ռուսներ[1]: Այստեղ 2011թ. գիտական բարձր մակարդակով կազմակերպվեց «Հայաստանը քաղաքակրթությունների երկխոսությունում» թեմայով գիտաժողով[2]: Կամ ունենալով այլազգի ուսանողներ՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը «նաև ներդրում է ունենում օտար միջավայրում հայության և, մասնավորապես, նրա հոգևոր արժեքների ներկայացման գործում»[3]: Կամ Վաշինգտոնում Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանի առկայությունը չի կարող չնպաստել համաշխարհային հանրությանը Հայոց ցեղասպանության մասին իրազեկելու գործին[4]: Իսկ 1717թ. Վենետիկի Ս. Ղազար կղզում հիմնադրված Մխիթարյան միաբանությունը «հսկայական գործ կատարեց (և մինչ օրս էլ շարունակում է կատարել) հայ մշակույթի ինչպես զարգացման, այնպես էլ դրա արժեքների տարածման ասպարեզում»[5]:

3. Հայագիտության զարգացում: Ունենալով հստակ հայագիտական ուղղվածություն՝ այդ կենտրոններն իրենց լուման են ներդնում աշխարհում հայագիտության զարգացման գործում:

---

[1] Տե՛ս В Нижнем Новгороде открылся Центр арменоведения, http://mediagid.am/ru/news/v-nizhnem-novgorode-otkrilsya-centr-armenovedeniya-503054:

[2] «Армения в диалоге цивилизаций», 28 апреля 2011, Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского; տե՛ս *Э.Л. Даниелян,* Философское осмысление истории Армении в историографическом контексте российско-армянского цивилизационного диалога, Доклад прочитанный на международной конференции «Армения в диалоге цивилизаций», 28 апреля 2011, Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского, сб. Армения в диалоге цивилизаций, Нижний Новгород, с.11-18.

[3] *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 50:

[4] *Հովյան Վ.,* Ամերիկահայ համայնք. գործողությունների նոր ասպարեզ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2358&sphrase_id=17224

[5] *Զաքարյան Ս.,* Հայ փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 2004, էջ 56:

Այս առումով անուրանալի է Մխիթարյան միաբանության, Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնի և հայագիտական այլ կառույցների դերը։

4. Պայքար հակահայկական քարոզչության դեմ։ Այս կենտրոնները կարևոր նշանակություն ունեն ժամանակակից տեղեկատվական պատերազմների պայմաններում հայոց պատմության, մշակույթի և այլնի նկատմամբ թուրք-ադրբեջանական ոտնձգություններին դիմագրավելու և հակազդելու մեջ։ Համեմատաբար նոր այս ուղղությունն արդի հայագիտության կարևոր խնդիրներից է[1]։ Այն առնչվում է ոչ միայն միջազգային ասպարեզում Հայաստանի և Սփյուռքի շահերի պաշտպանությանը, այլև հայության տեղեկատվական անվտանգությանը[2]։ Հետևաբար, հայագիտության «նվաճումները հայոց պետականության հետագա ամրապնդման և հակահայկական կեղծ գիտականության ու քարոզչության դեմ հուսալի պատվար պետք է դառնան»[3]։ Խոսելով մեր օրերում հայագիտության դերի մասին՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Ա.Մելքոնյանը նշում է. «XXI դարում հայագիտության կողմից լուծվելիք

[1] Տե՛ս *Սուվարյան Յ.,* Հայագիտության արդի վիճակը Հայաստանում և զարգացման հիմնախնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 29։ Տե՛ս նաև *Է.Լ.Դանիելյան,* Հայաստանի և այլ երկրների պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունների քննադատությունը, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», էջ 8։

[2] Տե՛ս *Саядов С.,* նշվ. աշխ., էջ 75։

[3] *Հակոբյան Հ.,* Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 91։

խնդիրների մեջ դժվար է գերագնահատել թուրք-ադրբեջանական պատմագրության դեմ պայքարի կարևորությունը: Հայ մասնագետները պետք է կարողանան միջազգային մակարդակով գիտական հանրությանը ցույց տալ ողջ տարածաշրջանի համար այդ կեղծարարության քաղաքական վտանգավորությունը և ծանր հեռանկարի հավանականությունը»[1]:

Տեղեկատվական պատերազմներում հայագիտության խնդիրը ոչ միայն հակահայ քարոզչությանը հակազդեցությունն է, այլև հայությանը ճշմարիտ լույսի ներքո ներկայացնելը: Այս տեսակետից, Ա.Սիմոնյանի գնահատմամբ՝ պատմագիտության ոլորտում հայագիտության խնդիրներից է հայի կերպարը «պատմական ուսումնասիրություններով աշխարհին ներկայացնելը»[2]:

5. Հայ և այլ ժողովուրդների միջև գիտամշակութային կապերի ամրապնդում և խորացում: Այսպիսի դերակատարում ունեն հատկապես Հայաստանի հարևան և մոտ երկրներում գործող հայագիտական կենտրոնները, որոնց հետ հայ ժողովուրդը դարերի ընթացքում ունեցել է քաղաքակրթական, մշակութային, գիտական և այլ կապեր: Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իրանում և այլ երկրներում գործող հայագիտական կենտրոնները, իրականացնելով մեծ ծավալի թարգմանչական աշխատանք, էապես նպաստում են հայկական և այդ քաղաքակրթությունների երկխոսությանը և փոխճանաչմանը: Հայ գրող-

[1] *Մելքոնյան Ա.,* Հայ պատմագիտության խնդիրները արդի ժամանակաշրջանում, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 102:

[2] *Սիմոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 98:

ների, գիտնականների, փիլիսոփաների ստեղծագործությունները թարգմանելով այլ լեզուներով և հակառակը՝ արտերկրի հայագիտական կենտրոնները մեծ դեր են խաղում հայ և այլ ժողովուրդների գիտամշակութային կապերի ամրապնդման և խորացման գործում: Թարգմանչական գործունեությունից բացի, արտերկրի հայագիտական կենտրոնները, հայ և այլ ժողովուրդների գիտամշակութային կապերի ընդլայնմանը նպաստում են նաև հայագիտության ոլորտում օտար լեզուներով իրենց իրականացրած հետազոտություններով, ցուցահանդեսների, գիտաժողովների և այլ գիտամշակութային միջոցառումների կազմակերպմամբ և այլն:

6. Հայ համայնքների համար մանկավարժական կադրերի և համայնքային գործիչների պատրաստում: Սփյուռքի հայագիտական կենտրոնների այս դերակատարումը մեծ նշանակություն ունի հայ համայնքների և ընդհանրապես Սփյուռքի կենսունակության ապահովման տեսանկյունից: Առանց մանկավարժական կադրերի արտերկրում հայկական դպրոցները չեն կարող իրականացնել հայապահպանության իրենց առաքելությունը, ինչը գրեթե լիովին անպաշտպան կդարձնի արտերկրի հայությանն ուծացման սպառնալիքին դեմ-հանդիման: Իսկ առանց համայնքային գործիչների՝ արտերկրի հայկական կառույցները չեն կարող արդյունավետ իրականացնել իրենց հայանպաստ գործունեությունը: Այդ պարագայում, առանց արդյունավետ գործող համայնքային ու համազգային կառույցների և համայնքային գործիչների՝ արտերկրի հայ համայնքները կդադարեն լինել այդպիսին: Սփյուռքի հայ համայնքների համար

մանկավարժական կադրերի և հասարակական գործիչների պատրաստման տեսանկյունից մեծ է հատկապես Բեյրութի Հայկազյան համալսարանի դերը, որի «շրջանավարտներից շատերը կարևոր դերակատարություն են ստանձնում սփյուռքահայ տարբեր կառույցներում: Հատկանշական է, որ համալսարանի շրջանավարտներն ակտիվորեն ներգրավվում են ոչ միայն Լիբանանի, այլև այլ երկրների հայկական համայնքային կառույցներում»[1]:

7. Կիրառական հետազոտությունների (քաղաքական, տնտեսական և այլ բնույթի) իրականացում: Այսօր արտերկրում գործում են նաև այնպիսի հայագիտական կենտրոններ, որոնք իրենց գործունեությամբ նմանվում են «ուղեղային կենտրոնների»: Նրանք զբաղվում են Հայաստանի և հայության համար հրատապ և գործնական նշանակություն ունեցող խնդիրների ուսումնասիրությամբ և հետազոտությամբ: Այդպիսի կենտրոններ են Հայկական փաստագրության և հետազոտության Զորյան հիմնարկը (ԱՄՆ), Չոպանյան ինստիտուտը (Ֆրանսիա), *«Time to analyze»* կենտրոնը (Ռուսաստան) և այլն, որոնք «իրականացնում են այնպիսի գիտական նախագծեր, ինչպիսիք են Սփյուռքի ուսումնասիրությունը, Ցեղասպանության փաստագրումը, Հայաստանի և հայերի վերաբերյալ սեմինարների, դասախոսությունների, գիտաժողովների անցկացումը»[2]: Նման հայագիտա-

[1] «Анив», Москва, 2009, N 3 (18), http://aniv.ru/archive/10/livanskie-eskizy134/ հղումը՝ ըստ *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 48:

[2] *Մինասյան Էդ.,* Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2009, էջ 268:

կան կառույցների գործունեությունը բնական է, քանի որ «Այսօր օրակարգային դարձած ազգային-պետական մի շարք կարևորագույն հիմնահարցեր, ինչպիսիք են հայ-թուրքական հարաբերությունները, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը և այլն, պահանջում են միանգամայն նոր մոտեցումներ և նոր արժևորումներ։ Ըստ այդմ՝ հայագիտությունն այսօր դարձել է ազգային-հասարակական կյանքի, երկրի անվտանգության ապահովման կարևորագույն գործոն»[1]։

Այսօր արտերկրում կան նաև այնպիսի «հայագիտական» կենտրոններ, որոնց գործունեությունն ունի վերոհիշյալներից տարբեր և հաճախ դրանց հակառակ նշանակություն։ Դրանք կարելի է բնորոշել որպես «հակահայագիտական կենտրոններ», քանի որ զբաղվում են հակահայկական, հակագիտական և հակաքարոզչական գործունեությամբ։ Այդ կենտրոնները կարելի է բնորոշել նաև որպես «կեղծ հայագիտական կենտրոններ»։

Նման կառույցներ ստեղծվում և գործում են Թուրքիայում, Ադրբեջանում, այդ երկրների նախաձեռնությամբ և հովանավորությամբ՝ նաև այլ երկրներում (ԱՄՆ և այլն)։ Այդ կենտրոնների հիմնական նպատակը տեղեկատվական հարթությունում հիշյալ երկրների քաղաքական՝ հակահայկական շահերի սպասարկումն է։ Նման կառույցների գործունեությունը դուրս է սույն աշխատանքի թեմատիկայից։ Այն բազմիցս քննվել է թուրք-ադրբեջանական կեղծարարություններով զբաղվող, տեղեկատ-

[1] *Սիմոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 99։

վական անվտանգության և այլ մասնագետների կողմից[1]:

Պետք է նշել նաև, որ Թուրքիայում և Ադրբեջանում հայագիտությունն ու հայագիտական կենտրոնները ոչ միայն օգտագործվում են հակահայ քարոզչության նպատակներով, այլև սպասարկում են հատուկ ծառայությունների գործունեությանը: Այդ նպատակով ոչ միայն հայագիտական կենտրոններ են հիմնվում, այլև համապատասխան կադրեր են գործուղվում արտերկրի հայագիտական կենտրոններ՝ պատրաստվելու համար: Օրինակ՝ 1999թ. մի շարք թուրք մասնագետներ մեկնել են Սանկտ Պետերբուրգի համալսարան՝ հայոց լեզու ուսումնասիրելու և հետագայում հայագետ կադրերի պատրաստման համար Անկարայի համալսարանում հայոց լեզվի և գրականության

[1] Մանրամասն տե՛ս *Նահապետյան Հ.,* Անկարայի Հայկական հետազոտությունների ինստիտուտ, «Գլոբուս. ազգային անվտանգություն», 2008, թիվ 3, էջ 15-16, *Սիմավորյան Ա.,* Թուրքական վերլուծական կենտրոններ. ընդհանրական բնութագիր, «Գլոբուս. ազգային անվտանգություն», 2008, թիվ 3, էջ 17, 19, նույնի՝ «21-րդ դար թուրքական ինստիտուտ»-ի վերաբերյալ, «Գլոբուս. ազգային անվտանգություն», 2008, թիվ 4, էջ 62, 63, 64, նույնի՝ Թուրքական վերլուծական կենտրոններ. տեսություն և արդիականություն, «Գլոբուս. ազգային անվտանգություն», 2009, թիվ 3, էջ 17-18, նույնի՝ Թուրքիա-թյուրքական աշխարհ հարաբերությունների շուրջ, «Գլոբուս. էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», 2011, թիվ 2, էջ 37, 38, նույնի՝ Թուրքիան 2015-ին ընդառաջ, «Գլոբուս», 2013, թիվ 6, էջ 33, 37-38, 39-40, նույնի՝ Սփյուռքի վերլուծական հանրույթը որպես պետության ներուժ. միջազգային փորձը, «Գլոբուս», 2013, թիվ 12, էջ 24-25, նույնի՝ Հայկական հետազոտություններ թուրքական ուղեղային կենտրոններում, «Գլոբուս», 2014, թիվ 5, էջ 33-38, նույնի՝ Հայկական խնդիրները երրորդ համաշխարհային թյուրքական ֆորումի օրակարգում, «Գլոբուս», 2014, թիվ 7, էջ 62-65, նույնի՝ Թուրքիայի ուղեղային կենտրոնների զարգացման նախադրյալները. այժմեական խնդիրները, «21-րդ ԴԱՐ», 2012, թիվ 6, էջ 33, *Мелик-Шахназарян Л.,* Академия мошенников, http://voskanapat.info/?p=83; Дезинформация относительно армянской церкви в Нахичеване, на сей раз, на сайте Eurasianet, http://dezaz.info/dezinformaciya-otnositelno-cerkvi/; Ուղեղային կենտրոններ և աղբահորեր, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12527&sphrase_id=39538 և այլն:

ամբիոն բացելու նպատակով[1]: Այս քայլերի հետևում «հստակ նշմարվում են Թուրքիայի որոշակի քաղաքական և երկարաժամկետ հետախուզական նպատակները և խնդիրները՝ ուղղված... Հայաստանի դեմ արդյունավետ հետախուզական գործունեություն ծավալելու նպատակով թուրքական հատուկ ծառայությունների ներկա և ապագա աշխատակիցների ու գործակալների լեզվագիտական և երկրագիտական պատրաստմանը»[2]:

Թուրքիայում գործող «հայագիտական» կենտրոնների հիմնադրումը մի քանի համալսարանների հումանիտար ֆակուլտետներում իրականացվել է կառավարության որոշմամբ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների գերակա մարմնի առաջարկությամբ: Այդ որոշումների արդյունքում ստեղծվել են մի քանի նեղ մասնագիտացված ինստիտուցիոնալ բաժիններ, տարբեր ակադեմիական ստորաբաժանումներ: Նման կենտրոնների հիմնադրումը պայմանավորված էր 1990-2000թթ. տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ Թուրքիայի կողմից իրականացվող ժխտողական քաղաքականությամբ:

Թուրքիայում «հայագիտական» համալսարանական բաժիններ ստեղծելու գաղափարն առաջ էր քաշվել դեռևս 1984թ. Էրզրումի (Կարին) Աթաթյուրքի անվան համալսարանում Հայկական հարցի վերաբերյալ տեղի ունեցած գիտաժողովում[3]: Իսկ

[1] *Հարությունյան Ա.,* Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը արդի փուլում, «Թուրքիա. անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները», Երևան, 2007, էջ 170:

[2] Նույն տեղում:

[3] Ermeni Dili Bölümü ilk mezunlarını veriyor, (31.05.2014), http://www.sabah.com.tr/Egitim/2014/05/31/ermeni-dili-bolumu-ilk-mezunlarini-veriyor

2001թ. Անկարայի համալսարանում հիմնադրվեց առաջին հայագիտական բաժինը՝ մասնագետներ և հետազոտողներ պատրաստելու համար: Հետաքրքիր է, որ նույն թվականին հիմնադրվեցին ևս մի քանի հայագիտական կենտրոններ, որոնք իրականացնում են ոչ թե կրթական, այլ հետազոտական գործառույթներ: Դրանք համալսարաններին և վերլուծական կենտրոններին կից գործող հաստատություններ էին (օր.՝ Սաքարիայի համալսարանի Թուրք-հայկական հարաբերությունների հետազոտական կենտրոնը, Հայկական հետազոտությունների ինստիտուտը): Անկարայի համալսարանի Հայոց լեզվի և մշակույթի բաժնում պատրաստվում էին հետազոտողներ, որոնց ներգրավմամբ վերը հիշատակված կենտրոնները ցեղասպանության հետազոտությունների շրջանակներում, ժխտողականության դիրքերից, իրականացնում էին քարոզչական բնույթի աշխատանքներ: «Հայագիտական» նոր բաժիններ բացվեցին 2009-2011թթ.: Դրանք են՝

- Անկարայի համալսարանի Հայոց լեզվի և մշակույթի բաժինը *(Ankara Üniversitesi Ermeni Dili ve Kültürü Anabilim Dalı)*[1],
- Նևշեհիր համալսարանի Հայոց լեզվի և գրականության բաժինը *(Nevşehir Üniversitesi Ermeni Dili ve Edebiyatı Bölümü),*
- Թրակիայի համալսարանի Հայոց լեզվի և գրականության բաժինը *(Trakya Üniversitesi Ermeni Dili ve Edebiyati bölümü),*

[1] Համացանցային կայքի հասցեն՝ http://www.dtcf.ankara.edu.tr/akademik_birim.php?ermeni-dili-ve-kulturu-anabilim-dali&bid=74&icerik=bolum_hakkinda&ang=tr#breadcrumb

- Արճեշի համալսարանի Հայոց լեզվի և գրականության բաժինը *(Erciyes Üniversitesi Ermeni Dili ve Edebiyatı Bölümü):*

Վերը հիշատակված Հայոց լեզվի և գրականության բաժինները գործունեություն են ծավալում հիմնականում *ուսումնակրթական* ծրագրերի ու դասընթացների շրջանակներում, կատարվում են նաև հետազոտություններ և թարգմանություններ: Միևնույն ժամանակ, ակադեմիական ամբիոններն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնց ուղղությամբ մի քանի տարի շարունակ ձեռնարկվում են որոշակի քայլեր: Թուրքական կողմի համար մտահոգիչ է համալսարանական բաժինները դասախոսական անձնակազմով համալրելու հարցը[1]: Նման խնդիրների առջև կանգնած են ինչպես նորաստեղծ, այնպես էլ հայագիտական բաժին ստեղծել ցանկացող համալսարանները: Երբ 2011թ. Թուրքիայի ԱԳՆ նախաձեռնությամբ հայերեն իմացող դիվանագետներ պատրաստելու խնդիր դրվեց Քաղիր Հաս համալսարանի առջև, որին ֆինանսական աջակցություն ցույց տվեց նաև ԱՄՆ «Մարշալի հիմնադրամ»-ը ($32,5 հազ.)[2], դասախոսական անձնակազմով համալրման փորձերն ապարդյուն եղան, ինչի հետևանքով «հայագիտական» բաժնի բացումը ժամանակավորապես կասեցվեց[3]: Այժմ այն գործում է ոչ որպես

[1] Մանրամասն տե՛ս Erciyes Üniversitesi'nin açtığı Ermenice bölümü, hoca bulmakta zorluk çekiyor, http://www.taraf.com.tr/haber-yazdir-56785.html, Ermenice bilen öğretim görevlileri aranıyor, http://www.milliyet.com.tr/default.aspx?aType=SonDakika&ArticleID=1058913

[2] Kadir Has'ta ücretsiz Ermenice kursları başlıyor sırada Kürtçe var,(18.05.2011), http://www.haberturk.com/yazarlar/pervin-kaplan/631678-kadir-hasta-ucretsiz-ermenice-kurslari-basliyor-sirada-kurtce-var, տե՛ս İsteyene Ermenice, (04.25.2011), http://www.hurriyet.com.tr/gundem/17628774.asp

[3] Հայերենը որպես օտար լեզու (05. 18. 2011), http://www.aravot.am/2011/05/18/341858/

«հայագիտական» բաժին, այլ իրականացնում է հայերեն լեզվի դասընթացներ[1]:

Միևնույն ժամանակ, որոշ համալսարաններում ստեղծվել են նաև հետազոտական կենտրոններ, որոնց հետազոտական բուն նպատակը Հայոց ցեղասպանության ժխտումն է: Այդպիսի կենտրոններ են՝

- Սաքարիայի համալսարանի «Թուրք-հայկական հարաբերությունների հետազոտական կենտրոնը» (*Sakarya Üniversitesi Türk-Ermeni İlişkileri Araştırma Merkezi*),
- Աթաթյուրքի համալսարանի «Թուրք-հայկական հարաբերությունների հետազոտական կենտրոնը» (*Atatürk Üniversitesi Türk-Ermeni İlişkileri Araştırma Merkezi*):

Հատկանշական է, որ կեղծարարությամբ զբաղվող վերոհիշյալ կենտրոնների ռազմավարական նպատակներից մեկն իբր հայերի կողմից թուրքերի հանդեպ իրականացված «գենոցիդի» թեզիսի զարգացումն ու տարածումն է արտերկրում: Պատահական չէ, որ թուրքական ազգայնականության օջախ համարվող՝ ցեղասպանությամբ զավթված Կարին-Էրզրում քաղաքում գործող Աթաթյուրքի համալսարանի վերը նշված կենտրոնն այդ նպատակով մի քանի գյուղերում հիմնել է «ցեղասպանության թանգարաններ»[2] և 2015թ. իրականացվելիք սադրիչ միջոցառումների կազմակերպիչներից մեկն է: Երկու կենտրոններն էլ ժամանակին գործակցում էին Անկարայի հայկական

[1] http://www.khas.edu.tr/egitim/yasam-boyu-egitim-merkezi/komsu-diller-akademisi/ermenice-dil-kursu.html

[2] Նման թանգարան է գործում Յեշիլյայլա գյուղում (հայկական անվանումը՝ Արծաթի):

ինստիտուտի հետ, իսկ այժմ ավելի սերտ են հարաբերությունները *AVIM* «հայագիտական» բաժնի հետ։

Պետական բուհերի համեմատ այլ աշխատանք են իրականացնում վերլուծական կառույցները։ Ժամանակին ստվարաթիվ վերլուծական կենտրոնների հիմնական մասի, այդ թվում՝ «փակ անալիտիկ» խմբերի հետազոտական աշխատանքները կենտրոնացված էին հիմնականում Սփյուռքում տեղի ունեցող տեղաշարժերի և մեծ մասամբ ԱՍԱԼԱ-ի գործունեության վերաբերյալ հետազոտությունների վրա։ Ներկայումս հայ-թուրքական հարաբերություններին, Հայոց ցեղասպանությանը, Սփյուռքին և ընդհանրապես Հայաստանին ու հայությանը վերաբերող քաղաքական, ռազմավարական նշանակության հիմնախնդիրները դարձել են նաև թուրքական վերլուծական հաստատությունների հակահայկական հետազոտությունների առարկան։

Աչքի անցկացնելով վերջին հինգ տարիներին մոտ 10 հետազոտական կենտրոնների հրատարակած՝ կեղծարարությամբ հագեցած «ինտելեկտուալ արտադրանքը» (հոդվածներ, գրքեր, զեկույցներ), գալիս ենք այն եզրակացության, որ այն կարելի է բաժանել երկու մասի՝ պատմական և արդի։ Պատմական հետազոտություններն են՝

- Հայերը տարածաշրջանում թյուրքական նվաճումից առաջ;
- Հայերը սելջուկյան ժամանակաշրջանում;
- Հայերն Օսմանյան կայսրությունում (սոցիալական, քաղաքական, ժողովրդագրական, կրթական և մշակութային իրադրությունը);
- Հայկական կուսակցություններն Օսմանյան կայսրությունում;

- Հայոց ցեղասպանությունը;
- Լոզանի պայմանագիրը և Հայկական հարցը;
- Հայկական համայնքը հանրապետական Թուրքիայում։

Ուսումնասիրվող արդի խնդիրներն են՝

- ՀՀ հիմնումը;
- ՀՀ ժողովրդագրական, մշակութային խնդիրները, հանրության սոցիալական կառուցվածքը;
- Թուրքիա-Հայաստան և Թուրքիա-Ադրբեջան-Հայաստան հարաբերությունները;
- ԼՂ հիմնախնդիրը;
- Հայկական հարցը միջազգային հարաբերությունների համատեքստում;
- Հայկական Սփյուռքը;
- Հայերի ներկայությունը կիբեռտարածությունում;
- Հայկական ԶԼՄ և մեդիա-դաշտի ուսումնասիրություններ;
- ՀՀ արտաքին քաղաքականությունը և այլն։

Երկու դեպքում էլ շարքը կարելի է շարունակել՝ հավելելով նաև այլ ուղղություններ, սակայն վերոհիշյալ թեմատիկայով «հետազոտություններին» ավելի մեծ տեղ է հատկացվում։ Թեև «ուղեղային կենտրոնները» (ՈՒԿ) միշտ չէ, որ պատմական հետազոտություններ են իրականացնում, այդուհանդերձ, դրանք հազվադեպ, բայց պատահում են։ Մնացած դեպքերում պատմական «հետազոտություններ» կատարվում են կամ համալսարաններին կից հետազոտական-վերլուծական կառույցներում (օրինակ՝ Սաքարիայի և Աթաթյուրքի համալսարաններում գործող թուրք-

հայկական հարաբերությունների հետազոտությունների կենտրոններում), կամ «հայագիտական» հարցերով մասնագիտացված ՈւԿ-ներում։

ՈւԿ-ների շարքում պատմական և արդի ժամանակաշրջանին վերաբերող խնդիրներով զբաղվող խոշորագույն «հայագիտական» կենտրոնը ժամանակին Թուրքիայի Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնին կից գործող՝ 2001թ. հիմնադրված և քարոզչական մեծ ապարատի վերածված «Հայկական հետազոտությունների ինստիտուտն» (*Ermeni Araştırmaları Enstitüsü*) էր[1]։ 2009թ. վերոհիշյալ կենտրոնը դադարեցրեց գործունեությունը[2]։

«Հայկական հետազոտությունների ինստիտուտն» այժմ շարունակում է աշխատանքները մեկ այլ հետազոտական կենտրոնում՝ *AVIM*-ում (Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոն), Կովկասի և Հայկական հարցի բաժնի կարգավիճակով՝ նախկին դիվանագետ Օմեր Էնգին Լյութեմի նախագահությամբ։ *AVIM*-ը և մեկ այլ ռազմավարական կենտրոն՝ *ORSAM*-ը (Մերձավորարևելյան ռազմավարական հետազոտությունների կենտրոն) հիմնադրվել են Թուրքմենական համագործակցության և մշակույթի հիմնադրամի կողմից։ Միջինարևելյան թուրքմենական կապիտալի ներդրումը Թուրքիայի «գիտավերլուծական» կենտրոնների գործունեության մեջ նոր երևույթ է, որը նկատելի է վերջին հինգ տարիներին։ Կենտրոնը

[1] Մանրամասն տե՛ս *Նահապետյան Հ.,* Անկարայի հայկական հետազոտությունների ինստիտուտ,
http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELE MENT_ID=486

[2] Մանրամասն տե՛ս *Միմավորյան Ա.,* Թուրքիայի ուղեղային կենտրոնների զարգացման նախադրյալները. այժմեական խնդիրները, «21-րդ ԴԱՐ», 2012, թիվ 6, էջ 25-26։

հրատարակում է երկու ամսագիր՝ «Հայկական հետազոտությունների հանդես»-ը (թուրքերեն) և *«Review of Armenian Studies»*-ը (անգլերեն)։ Որոշ տվյալների համաձայն՝ այն վերահսկվում է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդին կից Ազգային ակադեմիական ցանցի և տեղեկատվական կենտրոնի կողմից։

Ամսագրերում գերակայում են Հայոց ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ հրապարակումները, ինչը վկայում է, որ դրանք շարունակում են գործել Անկարայի «հայկական ինստիտուտի» որդեգրած սկզբունքներով։ Բացի թուրք հեղինակներից, ամսագրերում հրապարակվում, ինչպես նաև խմբագրական խորհրդում ընդգրկված են արևմտյան և ադրբեջանցի հեղինակներ, ինչը «միջազգային» բնույթ է տալիս պարբերականներին։ Հակահայկական, քարոզչական հրապարակումները չեն սահմանափակվում սույն պարբերականներով։ Կենտրոնը նման աշխատանքներ ներկայացնում է նաև զեկույցների տեսքով։

Հակահայագիտական կենտրոնների գործունեությանը զուգահեռ՝ հակահայկական քարոզչության տիրույթում են հայտնվում տնտեսական և սոցիալական հետազոտական ուղղվածություն ունեցող կենտրոնները (օրինակ՝ Անկարայում գործող Եվրասիայի տնտեսական հարաբերությունների ասոցիացիան -*EkoAvrasya-www.ekoavrasya.net* կամ Սոցիալական և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամը - *www.koksav.org.tr*)։ *EkoAvrasya*-ն համաթյուրքական նշանակություն ունի, և ակնհայտ է ադրբեջանական կեղծարարության ձեռագիրը։ Եվ սա չի վերաբերում միայն այս կառույցներին։

ՈւԿ-ների համար ընդհանրականն այն է, որ ՀՀ-ի և Հայության վերաբերյալ հետազոտությունները հիմնականում պարբերական են, մնացած դեպքերում՝ դիպվածային կամ իրավիճակային: Դրանց մեծ մասն իրականացվում է կովկասյան, տարածաշրջանային և այլ անվանումներ կրող ենթաբաժինների կողմից: Այսպիսով, հակահայագիտական հետազոտությունների ոլորտում մեծ է նաև ՈւԿ-ների դերը, որոնք ներկայանում են որպես հավելյալ ներուժ:

Ինստիտուցիոնալ կապերի տեսանկյունից հայկական հետազոտություններով և ուսումնական գործունեությամբ զբաղվող թուրքական կառույցների (լինեն ակադեմիական բաժիններ, թե վերլուծական) միջև համագործակցության մակարդակը բարձր է: Նրանք աշխատում են փոխլրացման սկզբունքով: Այդ հարաբերությունները հնարավորություն են տալիս հակահայկական քաղաքականության ոլորտում իրականացնել մի քանի առանցքային գործառույթներ. կադրերի վերապատրաստում, ռազմավարական նպատակների հստակեցում և իրագործում, համատեղ ծրագրերի, գիտաժողովների իրականացում և այլն:

Չնայած առկա միտումներին, «*...հայկական կողմն առայսօր որոշակի առավելություն ունի Թուրքիայի հանդեպ, քանի որ անցնող տասնամյակների ընթացքում Հայաստանում զարգացել է թուրքագիտությունը, և ներկայումս որոշակի թվով մասնագետներ կան նշված ուղղությամբ աշխատելու համար: ...Արևելահայերենի հանդեպ աճող ուշադրությունը և հայոց լեզուն թուրքական բուհական համակարգ ներմուծելու աշխատանքն ու ինստիտուտի* (Հայկական հետազոտությունների

ինստիտուտ, Անկարա– *Ա.Ս.*) *գործունեությունն ընդհանրապես վկայում են, որ Անկարան ձգտում է լրացնել բացը*»[1]:

Ներկա միտումները ցույց են տալիս, որ Թուրքիայում գործող հայագիտական կենտրոնների գործունեությունը չի կարելի թերագնահատել, քանի որ դրանք մեծածավալ քարոզչական աշխատանք են իրականացնում ինչպես Թուրքիայում, այնպես էլ արտերկրում: Հետևաբար, մեր խնդիրն է մշտապես ուշադրության կենտրոնում պահել դրանք՝ կանխարգելող և պատասխան քայլեր իրականացնել, որում, անկասկած, իրենց խոսքն ունեն ասելու Հայաստանի և արտերկրի իրական հայագիտական կենտրոնները:

Այսպիսով, հայագիտությունն արտերկրում, ընդհանուր առմամբ հայության համար մի շարք կարևոր դերակատարություններ ունենալով, որոշ դեպքերում, սակայն, խեղաթյուրվում է և ծառայեցվում հակահայկական և հակահայագիտական նպատակներին:

[1] *Նահապետյան Հ.,* Անկարայի հայկական հետազոտությունների ինստիտուտ, http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=486

ԳԼՈՒԽ 2
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2.1 Ամերիկա

Սույն գլխում խոսելու ենք ԱՄՆ-ում, Արգենտինայում, Բրազիլիայում և Կանադայում գործող 37 հայագիտական կազմակերպական միավորների (ինստիտուտ, թանգարան, ընկերակցություն, ամբիոն, ծրագիր և այլն) մասին: Դրանցից չորսը գտնվում են Արգենտինայում, մեկական՝ Բրազիլիայում և Կանադայում, իսկ մնացած ավելի քան երեք տասնյակը՝ ԱՄՆ-ում: Ըստ որում, Հարավային Ամերիկայում գործում են միայն ամբիոններ՝ տարբեր համալսարանների կազմում:

Ձևավորման պատմությունը

Մինչև 20-րդ դարի կեսերը հայագիտության զարգացումն Ամերիկայում իրականացնում էին առանձին անհատներ, և այդ ոլորտում գործող մարմիններ գոյություն չունեին: Չնայած դրան, կատարվել են որոշ աշխատանքներ, որոնք հող են նախապատրաստել ապագայում հայագիտական կենտրոնների ձևավորման համար[1]: Դրանց ձևավորումը հիմնականում պայ-

[1] Մինչև հայագիտական կենտրոնների հանդես գալը Ամերիկայում հայագիտության մասին տե՛ս *Աբգարյան Գ.,* Հայագիտությունը Ամերիկայում, «Սովետական Հայաստան», 1987, թիվ 3, էջ 16-21:

մանավորված էր 1950-ական թթ. ամերիկահայ գործիչների կողմից հայոց լեզվի, պատմության ու մշակույթի վերաբերյալ գիտական կառույցներ ստեղծելու անհրաժեշտության գիտակցմամբ: Հատկապես կարևոր նշանակություն ունեցավ 1955թ. Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցության (*The National Association for Armenian Studies and Research, NAASR*) հիմնումը: *NAASR-ը ձևավորվեց 60 ամերիկահայերի և Հարվարդի դասախոսների տեսլականով, որոնք ցանկանում էին առաջ մղել հայագիտական ուսումնասիրություններն ԱՄՆ-ում: Կառույցի առջև խնդիր դրվեց դառնալ շահույթ չհետապնդող, ապաքաղաքական, միավորող կազմակերպություն, որը կհասներ լուրջ արդյունքների հայագիտական ուսումնասիրություններին և պարբերական հրատարակություններին գիտական և օբյեկտիվ հիմքերի վրա աջակցելու գործում*[1]: Դրանից յոթ տարի առաջ արդեն հիմնվել էր մինչ օրս գործող Ամերիկայի առաջին հայագիտական հանդեսը՝ *«Armenian Review»*-ն: 1950-1960-ական թթ. *NAASR-ի* կատարած աշխատանքների արդյունքում հայագիտական ամբիոններ հիմնվեցին Հարվարդի և Լոս Անջելեսի Կալիֆորնիա համալսարաններում: Այս նույն ժամանակ հիմնվեց նաև Սան Պաուլոյի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը: Չնայած հետագայում այլ համալսարաններում էլ տարվեցին աշխատանքներ, որոնցից կարելի է հիշատակել Ֆրեզնոյում Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական ծրագիրը, Արգենտինայի Ջոն Ֆ. Քենեդու անվան համալսարանի հայագիտա-

[1] Տե՛ս National Association for Armenian Studies and Research: History, http://www.naasr.org/index.php/about-us-site-map-menu-93/history-site-map-menu-123

կան ամբիոնը, այնուամենայնիվ, հայագիտական կենտրոնների հիմնումը նոր ծավալներ ստացավ 1980-ական թթ.: Հենց այս ժամանակ հիմնվեցին Միջիգան-Էնն Արբոր համալսարանի երկու հայագիտական ամբիոնները, Զորյան ինստիտուտը և այլն: Պետք է նշել, որ նոր կենտրոններ են հիմնվում նաև վերջին տարիներին:

Այսպիսով, կարող ենք խիստ պայմանականորեն հայագիտական կենտրոնների հիմնումն Ամերիկայում բաժանել երեք հիմնական փուլերի: 1-ին փուլը ներառում է 1950-1970-ական թթ.: Այս ժամանակ, երբ հիմնվեցին առաջին ամբիոնները, չափազանց կարևոր նշանակություն ուներ *NAASR-ը:* Այս շրջանում, երբ Խորհրդային Հայաստանը գտնվում էր ԱՄՆ-ին հակադիր քաղաքական ճամբարում, հայագիտական ուսումնասիրությունները (մանավանդ ժամանակակից խնդիրների վերաբերյալ) որոշ չափով ԽՍՀՄ ուսումնասիրությունների մաս էին կազմում: 2-րդ փուլն ընդգրկում է 1980-ական թթ.: Այս ժամանակ ամենաշատ թվով հայագիտական կենտրոնները հիմնվեցին: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, որոնց թվում էր այն, որ ԱՄՆ-ը դարձել էր Սփյուռքի ամենամեծ հայկական համայնքը և առաջ էին եկել մի շարք մարտահրավերներ: Այս շրջանում մեծացավ հայ համայնքի հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը: Բացի այդ, թերևս խթանող հանգամանքներ դարձան Հայաստանի անկախացման գործընթացն ու Արցախյան շարժումը, որոնք նոր կարևորություն հաղորդեցին հայագիտական, մասնավորապես՝ արդի խնդիրները շոշափող ուսումնասիրություններին: 3-րդ պայմա-

նական փուլը կարելի է համարել 2000-ական թվականներից մինչև մեր օրերը: Այս շրջանում, չնայած որոշ նախկին կենտրոնների գործունեությունն աստիճանական կամ հարաբերական անկում ապրեց, այնուամենայնիվ, հիմնվեցին նաև նոր կենտրոններ, որոնց թվում են Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտական ամբիոնը, Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը (Տորոնտո), Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Քոսթըն հնագիտության ինստիտուտի Հայ հնագիտության և ազգագրության հետազոտական ծրագիրը և այլն: Այս շրջանում նկատվում է հայագիտական ուսումնասիրությունների շրջանակի լայնացում գիտակարգային առումով, քանի որ այսօր ամերիկյան հայագիտությունն ընդգրկում է ոչ միայն լեզուն, պատմությունը, մշակույթը, այլև ազգագրությունը, հնագիտությունը, սոցիոլոգիան և այլն:

Երկրորդ և երրորդ փուլերի համար բնութագրական պետք է համարել հայրենիքի հետ կապերի էական ակտիվացումն առաջին փուլի համեմատ: Այնուամենայնիվ, ներկայումս ամերիկյան հայագիտական կենտրոնների համագործակցությունը Հայաստանի համապատասխան գիտակրթական կառույցների հետ դեռևս բավարար մակարդակի չի հասել:

Կենտրոնների տեսակները

Այս աշխատանքի ընթացքում հաշվառված՝ Ամերիկայում գործող 37 հայագիտական կենտրոնները բաժանվում են տարբեր տեսակների: Այստեղ ներկայացնում ենք առաջարկվող դասակարգումը՝ ըստ գործունեության բնույթի: Համառոտակի կնկա-

բագրենք առաջին երեք տեսակի կառույցների (ընկերակցություններ, ինստիտուտներ և հետազոտական կենտրոններ) երկուական օրինակներ, իսկ մյուս բոլոր տեսակներից կանդրադառնանք մեկական օրինակի՝ դրանց ընդհանուր պատկերը ներկայացնելու համար։

1. Ընկերակցություններ (Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցություն (*NAASR*), Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն, Ֆրեզնո (*SAS*)

Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցություն (NAASR). Ընկերակցության հիմնական նպատակներն են.

1. աջակցել հայագիտական ուսումնասիրություններին՝ կրթաթոշակների, հետազոտությունների և հրատարակությունների միջոցով,
2. աշխատել հիմնադրել ապահովված պրոֆեսորություններ, ընկերակցություններ, կրթաթոշակներ, բաժանմունքներ և հայագիտական ուսումնասիրությունների դասընթացներ՝ քոլեջներում, համալսարաններում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում,
3. հավաքել և ղեկավարել ֆինանսավորումը, համագործակցել համալսարանների, հիմնադրամների և նմանատիպ կազմակերպությունների հետ հայագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների աջակցության համար,

4. աջակցել կրթական, մշակութային և այլ գործողություններին ու նախագծերին՝ ուղղված ընկերակցության նպատակների իրականացմանը[1]:

Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն, Ֆրեզնո (SAS). Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցությունը հիմնադրվել է 1974թ., որի նպատակներն են հայկական մշակույթի, պատմության, լեզվի, գրականության, սոցիալական, քաղաքական և տնտեսական հարցերի ուսումնասիրությանն աջակցելը, աշխարհով մեկ հայագիտության վերաբերյալ ակադեմիական տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև հայագիտության վերաբերյալ նախագծերն ու գիտաժողովները հովանավորելը: Ընկերակցության ծրագրերը ներառում են իր գործունեության և հայագիտական ընթացիկ հետազոտություններին նվիրված տեղեկատվական պարբերականի՝ *«Journal of the Society for Armenian Studies»*-ի լույսընծայում, հայագիտական հետազոտություններին աջակցություն ու հրատարակում, ինչպես նաև գործունեության այնպիսի ձևեր, որոնք կարող է որոշել Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության խորհուրդը[2]:

2. Ինստիտուտներ (Հայկական ազգային ինստիտուտ (Վաշինգտոն), Զորյան ինստիտուտ, Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների ինստիտուտ)

[1] Տե՛ս Purposes, National Association for Armenian Studies and Research, http://www.naasr.org/index.php/about-us-site-map-menu-93/purposes-site-map-menu-121
[2] Տե՛ս Aims, Society for Armenian Studies, http://societyforarmenianstudies.com/

Հայկական ազգային ինստիտուտ (Վաշինգտոն). Առաջին անգամ Հայոց ցեղասպանության խնդիրներով զբաղվող ինստիտուտ ստեղծելու հայեցակարգը ներկայացվել է 1996թ. մարտին Ամերիկայի հայկական համագումարի կողմից: Տասնամյա կազմակերպչական աշխատանքներից հետո Հայկական ազգային ինստիտուտը (*ANI*) բացեց իր դռները 1997թ. հունվարի 3-ին: Այն շահույթ չհետապնդող կազմակերպություն է: *ANI*-ն համագործակցում է Ցեղասպանության և Հոլոքոստի ուսումնասիրություններով զբաղվող փորձագետների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ՝ կենտրոնանալով մարդկության դեմ հանցագործությունների վրա: 1997թ. *ANI*-ն հիմնվեց Հրայր Հովնանյանի նվիրաբերած $1 մլն-ի շնորհիվ, որին աջակցեց նաև Ամերիկայի հայկական համագումարի բարեգործական արշավը: Ինստիտուտի ֆինանսական եկամուտները ձևավորվում են նվիրատվությունների հաշվին ձևավորված նպատակային կապիտալից, դրամաշնորհներից և մասնավոր նվիրատվություններից[1]:

Ինստիտուտի խնդիրներն են.

- աջակցել Հայոց ցեղասպանության մասին տեղեկացվածությանը հետազոտության, վերլուծության, հրատարակչության և հանրային ֆորումների միջոցներով,
- հավաքել և պահպանել Հայոց ցեղասպանության մասին փաստաթղթավորված վկայությունները և հիշողությունները,

[1] Տե՛ս Frequently Asked Questions about ANI, ANI, http://www.armenian-genocide.org/anifaq.html

- մեծացնել հասարակության տեղեկացվածությունը ցեղասպանության հանցագործության, ժխտման և մեր օրերում դրա երկարատև ազդեցության մասին[1]:

Զորյան ինստիտուտ. Ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների և փաստագրման Զորյան ինստիտուտը հիմնադրվել է 1982թ. Քեմբրիջում (Մասաչուսեթս): Դրան հաջորդեց Կանադայի Զորյան ինստիտուտի հիմնումը 1984թ. Տորոնտոյում, որպես ոչ առևտրային գիտահետազոտական ինստիտուտ: Նրանք միավորում են իրենց ջանքերը, որպեսզի ձևավորեն միջազգային գիտական կենտրոն՝ նվիրված մարդու իրավունքների, ցեղասպանության, սփյուռքագիտության, հայրենիքի վերաբերյալ նյութերի փաստաթղթավորմանը, հետազոտմանը և տարածմանը[2]: Սկզբից ևեթ Զորյան ինստիտուտի աշխատանքներում կարևոր դեր են ունեցել սփյուռքահայերի նվիրատվությունները, որոնք նրա բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրն են:

3. Հետազոտական կենտրոններ (Հայկական հետազոտական կենտրոն (Տորոնտո), Դիրբորնում Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն)

Հայկական հետազոտական կենտրոն (Տորոնտո). Հայկական հետազոտական կենտրոնը (*ARC*) հիմնադրվել է 2013թ. օգոստոսի 31-ին Տորոնտոյում: Այն հիմնադրվել է, որպեսզի աջակցի հայկական մշակույթի տարածմանը, հետազոտու-

[1] Տե՛ս Mission and Objectives, ANI, http://www.armenian-genocide.org/mission.html
[2] Տե՛ս About Us, Zoryan Institute, http://www.zoryaninstitute.org/about.html

թյունների իրականացմանը, գրքերի, հոդվածների հրատարակմանը, սեմինարների, համացանցային սեմինարների, ցուցահանդեսների կազմակերպմանը: Կենտրոնի նպատակներից է նպաստել հայ երիտասարդության կողմից սեփական մշակութային ժառանգությանը, լեզվին, պատմությանը ծանոթանալուն, որպեսզի վերջինս նաև ի վիճակի լինի դրանցով կիսվելու հարևան ազգերի հետ[1]:

Դիրբոռնում Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն. Դիրբոռնի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հիմնադրվել է 1985թ.՝ հայագիտական փաստաթղթավորման և հրատարակչական գործունեություն իրականացնելու համար: «Վարդանանց ասպետներ» կազմակերպությունը ֆինանսապես օգնել է կենտրոնի կայացմանը[2]: Կենտրոնի գործունեությունը նվիրված է Հայոց ցեղասպանության և ընթացիկ հայկական խնդիրներին ու ուսանողներին, դասախոսներին և հանրությանը հասանելի ռեսուրսային կենտրոնի ստեղծմանը: Այն պետք է մասնակցի ապատեղեկատվության դեմ աշխատանքներին, հայկական շահերի և խնդիրների մասին իրազեկի օրենսդիրներին, պաշտոնյաներին և հանրությանը[3]: Կենտրոնն ունի սեփական գրադարան՝ ավելի քան 25 հազար անուն գրքերով: Այն համագործակ-

[1] Տե՛ս Armenian Research Center (ARC), http://www.armenianresearchcenter.com/main.htm

[2] Տե՛ս *Papazian D.,* The role of organizations, institutions and research centers in Armenian studies in the United States, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2004, էջ 308:

[3] Center for Armenian Research and Publication: History, https://www.umdearborn.edu/dept/armenian/aboutarc/history.html

ցում է Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի բազմաթիվ հայագիտական կենտրոնների, իսկ Հայաստանում՝ Հայաստանի Ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության, Պատմության, Հնագիտության ու ազգագրության ինստիտուտների, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ: Բացի այդ, կենտրոնը համագործակցում է Դեթրոյտի շրջանի Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների, ինչպես նաև նույն շրջանի և Արևելյան ԱՄՆ հայ քաղաքական, մշակութային ու հայրենակցական կազմակերպությունների հետ: Կենտրոնն իրականացրել է մի շարք հրատարակումներ, իսկ այժմ Միչիգանի համալսարանի հրատարակչության հետ համագործակցաբար աշխատում է *«Michigan Armenian Studies»* անվամբ մատենաշար հաստատելու վրա[1]:

4. Ամբիոններ (Բոստոնի համալսարանի Հայոց նոր պատմության և գրականության ամբիոն, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայոց նոր պատմության ամբիոն, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայոց լեզվի և մշակույթի Գրիգոր Նարեկցու անվան ամբիոն, Քլարկի համալսարանի Հայոց նոր պատմության և Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ամբիոն, Հարվարդի համալսարանի Մաշտոցի անվան հայագիտական ուսումնասիրությունների ամբիոն, Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայոց նոր պատմության Ալեք Մանուկյանի անվան ամբիոն,

[1] Այս տեղեկությունները մեզ 2014թ. մայիսի 27-ին հաղորդել է Դիրբոռնում Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի վարիչ Արա Սանջյանը՝ այս հետազոտության համար իրականացված հարցման շրջանակներում:

Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյանի անվան ամբիոն, Սան Պաուլոյի համալսարանի Հայոց լեզվի ամբիոն, Արգենտինայի Ջոն Ֆ. Քենեդու անվան համալսարանի հայագիտական ամբիոն, Դել Սալվադոր համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայագիտական ամբիոն, Բուենոս Այրեսի համալսարանի հայագիտության ազատ ամբիոն, Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտական ամբիոն)

Սան Պաուլոյի համալսարանի Հայոց լեզվի ամբիոն. Սան Պաուլոյի համալսարանի Փիլիսոփայության, լեզուների և գրականության, հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայերենի դասընթացը պաշտոնապես գործունեությունը սկսել է 1963թ.: Դասընթացի առաջին դասախոսը պրոֆեսոր Եսայի Գռուզյանն էր, որը մեծ ներդրում ունեցավ դասընթացի կազմավորման և առաջին ուսումնական նյութերի (պորտուգալերենով հայոց լեզու սովորելու համար) ստեղծման մեջ: Գռուզյանը, բացի հոդվածներից, հրատարակել է գրքերի շարք՝ նվիրված հայոց լեզվին, գրականությանը և պատմությանը: Ավելի քան հինգ տասնամյակների ընթացքում հայագիտական դասընթացը նպաստել է հայոց մշակույթի տարածմանը, ինչպես նաև հայոց լեզվի, գրականության և մշակույթի ուսումնասիրությունների բնագավառում դասախոսների և հետազոտողների պատրաստմանը: Կուրսային աշխատանքները ներառում են հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը, մշակույթը և ինքնությունը: 2008-2013թթ. իրականացվել են 8 գիտական ուսումնասիրություններ, այս տարի սկսվել են վեցը: Դասընթացն ունի համա-

ձայնագիր Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հետ, որն աջակցում է ամբիոնի գործունեությանը[1]: Կարդացվում են հանրային դասախոսություններ Հայոց ցեղասպանության և հայոց պատմության ու մշակույթի զանազան խնդիրների վերաբերյալ: Կա հատուկ ծրագիր տարեց մարդկանց համար՝ սկսած 60 տարեկանից, որի նպատակն է տարբեր առարկաների միջոցով բավարարել նրանց հետաքրքրությունները, ինչպես նաև երիտասարդներին փոխանցել նրանց ունեցած տեղեկատվությունը[2]:

5. Ծրագրեր (Ֆրեզնոյի Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագիր, Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիր, Բերքլիի Կալիֆորնիայի պետական համալսարանի Սլավոնական, արևելաեվրոպական և եվրասիական ուսումնասիրությունների ինստիտուտի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագիր, Իրվինում Կալիֆորնիայի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիր, Լոս Անջելեսում Կալիֆորնիայի պետական համալսարանի Քոսթըն հնագիտության ինստիտուտի Հայ հնագիտության և ազգագրության հետազոտական ծրագիր, Քոնեկթիկուտի համալսարանի Նորյան հայագիտական ծրագրեր)

Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիր (ASP). Ծրագրի ծագումը պայմանավորված է հայոց լեզվի, ավելի ուշ՝ նաև պատմության դասընթացներ Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հետ, որն աջակցում է ամբիոնի գործունեությանը[1]: Կարդացվում են հանրային դասախոսություններ Հայոց ցեղասպանության և հայոց պատմության ու մշակույթի զանազան խնդիրների վերաբերյալ: Կա հատուկ ծրագիր տարեց մարդկանց համար՝ սկսած 60 տարեկանից, որի նպատակն է տարբեր առարկաների միջոցով բավարարել նրանց հետաքրքրությունները, ինչպես նաև երիտասարդներին փոխանցել նրանց ունեցած տեղեկատվությունը[2]:

[1] Տե՛ս Histórico, Departamento de Letras Orientais, Armenio, http://letrasorientais.fflch.usp.br/armenio/390

[2] Տե՛ս Universidade Aberta à Terceira Idade, http://letrasorientais.fflch.usp.br/node/443

թացներով 1976թ.՝ մի շարք նշանավոր գիտնականների և ուսուցիչների կողմից։ *ASP*-ը պաշտոնապես հիմնադրվել է 1981թ., երբ Ալեք և Մարի Մանուկյանները հովանավորեցին Ալեք Մանուկյանի անվան արդի հայոց պատմության ամբիոնը (Պատմության բաժանմունքում), որի վարիչը 1981-1997թթ. եղավ Ռոնալդ Սյունին, 1997-2000թթ.՝ Ստեֆանի Պլացը, իսկ 2001-2012թթ.՝ Ժիրայր Լիպարիտյանը։ 1987թ. Մանուկյան ընտանիքը հովանավորեց երկրորդ հարթակը՝ Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի և գրականության ամբիոնը, որի վարիչը, սկսած այդ պահից, Գևորգ Բարդակչյանն է։ 1997թ. Մարի Մանուկյանի ամբիոնը Սլավոնական բաժանմունքից տեղափոխվեց Մերձավորարևելյան ուսումնասիրությունների բաժանմունք։ Ծրագիրն իր հիմնադրումից՝ 1981 թվականից մինչև 1995թ. տնօրինեց Ռոնալդ Սյունին։ 1995-2007թթ. ծրագրի տնօրենն է եղել Գևորգ Բարդակչյանը, իսկ 2007-2012թթ.՝ Ժիրայր Լիպարիտյանը։ Ներկայիս տնօրենն է Կատրին Բաբայանը։ *ASP*-ը Միչիգանի համալսարանի Միջազգային ինստիտուտի միավոր է։ Ղեկավար խորհուրդը վարում է ծրագրավորումը և բյուջետային քաղաքականության կազմումը, մինչդեռ գործադիր կոմիտեն համակարգում է ծրագրերի ներդրումը[1]։

6. Բաժին (Նորթրիջի Կալիֆորնիայի պետական համալսարանի Նոր ու դասական լեզուների և գրականության բաժանմունքի Հայկական բաժին)

[1] Տե՛ս About Us, University of Michigan, Armenian Studies Program, https://www.lsa.umich.edu/asp/aboutus

Նոր ու դասական լեզուների և գրականության բաժանմունքն առաջարկում է ուսումնական ծրագրեր, ծառայություններ, հետազոտություններ լեզվի, գրականության և մշակույթի ոլորտներում: Բաժանմունքի ծրագրերը ծառայում և աջակցում են համալսարանի բոլոր ակադեմիական բաժանմունքներին, հատկապես ուսանողներին լեզվի և մշակույթի ուսուցմանը, որն անհրաժեշտ է միջազգային և միջմշակութային գործունեությանն աջակցության համար:

7. Նախագիծ (Մինեսոթայի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնի Հայագիտակական հետազոտական նախագիծ)

Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնի հիմնադրած Հայագիտական հետազոտական նախագիծը ներառում է հետևյալ չորս ուղղությունները.

1. Հավաքում և տարածում է Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ կարևոր փաստաթղթերը: Որպես այդ ջանքերի օրինակ կարելի է վկայակոչել Կոստանդնուպոլսի (Ստամբուլի) թերթերի 1908-1922թթ. հավաքածուն, այն է՝ այդ շրջանի թուրքական թերթերի թվայնացում և տարածում, քանի որ թերթերն Օսմանյան կայսրության, երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության և Հայոց ցեղասպանության պատմության քննական աղբյուր են:
2. Ուսումնասիրում է երիտթուրքերի կայացրած որոշումները 1914-1916թթ., որոնք վերականգնում են Հայոց ցեղասպանության քաղաքականության ամենօրյա իրականացումը:

3. Հետազոտում է նշանավոր նկարիչների կողմից Հայոց ցեղասպանության հիշողությունն անմահացնող աշխատանքները:
4. Ուսումնասիրում է Գերմանիայում 1878-1945թթ. մարդկության դեմ կատարված հանցագործությունները, որի շրջանակներում հաշվի է առնում գերմանական հետաքրքրություններն Օսմանյան կայսրությունում և դիտարկում է Հայոց ցեղասպանությունն արդի շրջանի այլ ոճրագործությունների համայնապատկերում:

8. Բակալավրի ծրագիր (Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և մշակույթների բաժանմունքի Հայագիտության բակալավրի ծրագիր)

Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և մշակույթների բաժանմունքի Հայագիտության բակալավրի ծրագիրը ներառում է արդի արևմտահայերենի և արևելահայերենի՝ տարբեր մակարդակների դասընթացներ, ինչպես նաև հայոց լեզվի պատմությունը, հայկական քաղաքակրթությունը Հայոց Բագրատունյաց և Կիլիկիայի Հայկական թագավորությունների ժամանակաշրջաններում, հայկական երաժշտության ներածությունը, հայ գրականության և արվեստի վերաբերյալ մի շարք առարկաներ[1]:

[1] UCLA registrar's office, A department of Student Affairs, General Catalog Current Course Descriptions,
http://www.registrar.ucla.edu/schedule/catalog.aspx?sa=ARMENIA&funsel=3

9. Խմբեր (Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբ, Հայոց եկեղեցու հետազոտության և վերլուծության խումբ)

Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբ (AIPRG). Խումբն ակադեմիական կամուրջ է Հայաստանի և Սփյուռքի գիտնականների համար: Բացի այդ, այն ծառայում է որպես հարթակ Հայաստանի զարգացման, այդ թվում՝ գիտությանը վերաբերող հարցերի քննարկման համար: *AIPRG* ամեն անդամի դիրքորոշումներն ու հետաքրքրություններն արտահայտվում են նրա գործունեության մեջ: Խումբը ղեկավարվում է խորհրդատվական և գործադիր խորհուրդների կողմից: Խորհրդատվական խորհուրդը բաղկացած է հայտնի գիտնականներից և քաղաքականություն իրականացնողներից, որոնք պատրաստ են ապահովել փորձագիտական գիտելիքներ և կառավարում՝ կապված ամբողջական ուղղվածության և խմբի հետազոտական խնդիրների հետ: Գործադիր խորհուրդը դիտարկում է *AIPRG* ամենօրյա գործունեությունը: Այն բաղկացած է ակտիվ հետազոտողներից և քաղաքականություն իրականացնողներից, որոնք համակարգում են խմբի գործունեությունն իրենց մասով[1]:

10. Լեզվի ուսուցման ծրագիր (Կոլումբիայի համալսարանի Միջինարևելյան, հարավասիական և աֆրիկյան ուսումնասիրությունների բաժանմունքի հայոց լեզվի ծրագիր, Չիկագոյի համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և քաղաքա-

[1] About Us, The Armenian International Policy Research Group, http://www.aiprg.net/en/content/64/

կրթությունների բաժանմունքի Հայոց լեզվի ուսուցման ծրագիր, Արիզոնայի պետական համալսարանի ռուսերենի, եվրասիական և արևելաեվրոպական լեզուների հետազոտությունների «Մելիքյան» կենտրոն)

Չիկագոյի համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և քաղաքակրթությունների բաժանմունքի Հայոց լեզվի ուսուցման ծրագիր. Ժամանակակից հայոց լեզվի ծրագիրը բաղկացած է եռաստիճան ուսուցումից՝ տարրական, միջանկյալ և բարձր: Կա հատուկ դասընթաց՝ նախատեսված ասպիրանտների համար, որի շրջանակներում նրանք կարող են բարելավել իրենց կարդալու ունակությունները: Դա անհրաժեշտ է նրանց՝ իրենց հետազոտությունների վերաբերյալ գիտական նյութերից օգտվելու համար: Որպես լեզվաբանական դասընթացի լրացում առաջարկվում են մշակութային դասընթացներ: Բացի պաշտոնական ուսումնական դասացուցակից, կա նաև հայկական խմբակ, որը հավաքվում է երկու շաբաթը մեկ անգամ: Նրա նպատակն է հայերեն և Հայաստանին վերաբերող ֆիլմերի դիտումը, տարբեր թեմաների մասին դասախոսությունների ունկնդրումը, ինչը տեղեկատվություն կհաղորդի Հայաստանի մշակույթի և պատմության վերաբերյալ, կհանդիսանա հայոց լեզվի պրակտիկա: Ուսանողները հնարավորություն ունեն իրականացնելու նաև իրենց սեփական շնորհանդեսները: Արտադրական պրակտիկան, որը կազմակերպվում է հայոց լեզուն կիրառելու համար, անցկացվում է հայկական համայնքի կենտրոններում[1]:

[1] The Armenian Program, Center for Middle Eastern Studies University of Chicago, http://cmes.uchicago.edu/page/armenian

11. Առարկայի դասավանդում (Թաֆթսի համալսարանի Արվեստի և արվեստի պատմության բաժանմունք. Քրիստինա Մարանչին դասավանդում է «Art of the Armenian Manuscript» առարկան)

Այս դասընթացն ուսումնասիրում է միջնադարյան Հայաստանի ձեռագրերը՝ դիտարկելով ոչ միայն աստվածաշնչյան աշխատանքների պատկերազարդման փուլերը, այլև թագավորական դիմանկարների գեղանկարչությունը, հրաշագործ տեքստերը և պատմվածքները: Դասընթացի շրջանակներում իրականացվող քննարկումները ձգտում են Հայաստանի ձեռագրերի արվեստը տեղադրել մշակութային բարդ փոխազդեցությունների շրջանակներում, որը ներառում էր Բյուզանդիան, իսլամը, Կենտրոնական Ասիան և Արևմտյան Եվրոպան: Առարկան ներառում է նաև տեքստերի և պատկերների փոխհարաբերությունները, պատկերների դերը հայկական ժամանակակից հասարակությունում, ոճական և նկարչական անհատականության խնդիրները[1]:

12. Թանգարան (Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարան, Վաշինգտոն)

Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանը (*AGMA*) նվիրված է 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհերին և վերապրողներին: Այն ձգտում է առաջին պլան մղել հայերի պատմական ինքնությունը, արվեստն ու մշակույթը և տոկունությունն արհավիրքների ժամանակ: *AGMA* նպատակն

[1] The Department of Art and Art History, Spring 2014 Course Listings, http://ase.tufts.edu/art/documents/courses2014Spring.pdf

է կազմակերպել ինտերակտիվ ցուցահանդեսներ և կրթական ծրագրեր՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, այցելուներին առաջարկել լայնածավալ տեղեկատվություն Հայոց ցեղասպանության վերաբերյալ[1]:

13. Գիտական պարբերական *(«Armenian Review»)*

«Armenian Review»-ն անգլերեն լեզվով բազմագիտակարգային գրախոսվող ամսագիր է, որը հրատարակվում է 1948 թվականից և հիմնականում նվիրված է Հայաստանին ու հայությանն առնչվող հարցերի լուսաբանմանը: *«Armenian Review»*-ն այժմ հրատարակվում է տարին երկու անգամ՝ մայիսին և նոյեմբերին: Հանդեսի գլխավոր խմբագիրն է Ասպետ Գոչիկյանը[2]:

14. Տեղեկատվական կենտրոն (Գրիգոր և Կլարա Զոհրաբ տեղեկատվական կենտրոն)

Գրիգոր և Կլարա Զոհրաբ տեղեկատվական կենտրոնը հետազոտական և կրթական ռեսուրս է, որը ձգտում է առաջ մղել հայագիտության բոլոր ոլորտները և օգնել ուսանողներին, գիտնականներին, հայկական համայնքին և լայն հանրությանը հայոց պատմության, քաղաքակրթության և մշակույթի գնահատման խորացման հարցում: Զոհրաբ կենտրոնի միջուկը նոր առցանց գիտական գրադարանն է, որն ունի ավելի քան 40 հազար գիրք, պարբերական, լուսանկար և այլ ռեսուրսներ հայագիտության բոլոր բնագավառներում: Հատկապես հարուստ է կենտրո-

[1] Armenian Genocide Museum of America, http://www.armeniangenocidemuqeum.org/
[2] Տե՛ս The Armenian Review, http://www.armenianreview.org/

նի աշխարհասփյուռ հայկական պարբերական մամուլի հավաքածուն, մեծաքանակ է 19-20–րդ դդ. հայկական գրականությունը և հազվադեպ հայկական ձեռագրերի ու գրքերի գանձարանը: Առցանց գրադարանի քարտադարանը հնարավորություն է տալիս փնտրել նյութեր՝ մուտք գործելով համացանց[1]:

Կրթական գործունեություն

Ուսումնասիրված 37 միավորների մեծ մասը զբաղվում է կրթական գործունեությամբ, դրանց մի զգալի մասը սահմանափակվում է դրանով: Մասնավորապես, զուտ կրթական ոլորտում են գործում բաժիններ ու ծրագրեր, ինչպես, օրինակ, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և մշակույթների բաժանմունքի Հայագիտության բակալավրի ծրագիրը, Նորթրիջի Կալիֆորնիայի պետական համալսարանի Նոր ու դասական լեզուների և գրականության բաժանմունքի Հայկական բաժինը, Չիկագոյի համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և քաղաքակրթությունների բաժանմունքի Հայոց լեզվի ուսուցման ծրագիրը: Բնականաբար, կրթական գործունեություն է նաև առանձին հայագիտական առարկաների դասավանդումը. Թաֆթսի համալսարանի Արվեստի և արվեստի պատմության բաժանմունքում Քրիստինա Մարանչին դասավանդում է *«Art of the Armenian Manuscript»* առարկան:

Ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր գործառույթ են ստանձնում տարբեր համալսարաններում գործող հայագիտական ամբիոնները, որոնցից են Լոս Անջելեսում

[1] The Zohrab Information Center: About the Zohrab Center, http://zohrabcenter.org/about/

Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայոց նոր պատմության ամբիոնը, Սան Պաուլոյի համալսարանի Հայոց լեզվի ամբիոնը և այլն: Դրանք, անշուշտ, չեն սահմանափակվում ուսումնական գործընթացի կազմակերպմամբ և ունեն հետազոտական գործառույթ:

Կրթական գործառույթները հետազոտականի հետ համադրում են նաև մի շարք համալսարաններում գործող հայագիտական ծրագրերը, որոնց թվում են Ֆրեզնոյի Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագիրը, Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիրը, Բերքլիի Կալիֆորնիայի պետական համալսարանի Սլավոնական, արևելաեվրոպական և եվրասիական ուսումնասիրությունների ինստիտուտի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագիրը և այլն:

Կրթական գործառույթները որոշակի տեղ ունեն նաև ինստիտուտներում և հետազոտական կենտրոններում: Անշուշտ, նշանակալի դերակատարում այս հարցում ունեն նաև հայագիտական ընկերակցությունները, որոնց համար կրթական գործառույթը պակաս կարևորություն չունի, քան հետազոտականը:

Դասավանդվող առարկաների թվում են հայոց լեզուն (և՛ արևմտահայերենը, և՛ արևելահայերենը), հայոց պատմությունը, մշակույթը և այլն: Հայոց պատմության շրջանակներում դասավանդվում են հետևյալ առարկաները. Հայոց պատմություն (հին ժամանակներից մինչև արդի շրջան), Հայոց բանավոր պատմության ներածություն, Կովկասը ռուսական և խորհրդային իշխանության տակ, Սփյուռքը, Հայոց ցեղասպանությունը և

այլն: Հայոց լեզվի շրջանակներում անցկացվում են գրաբարի, արևմտահայերենի և արևելահայերենի տարբեր մակարդակի (տարրական, միջին, բարձր) դասընթացներ: Հայ գրականությանը վերաբերող դասընթացներից են Արվեստը, քաղաքականությունը և ազգայնականությունն արդի հայ գրականությունում, Հայ գրականությունը 19-20-րդ դդ., Ամերիկահայ գրականությունը և մշակույթը: Իսկ, օրինակ, Ֆրեզնոյի հայագիտական ծրագրի շրջանակներում առաջարկվում են հայ արվեստի, մասնավորապես նկարչության, ճարտարապետության և կինոյի վերաբերյալ դասընթացներ: Քոնեկթիկուտի համալսարանի Նորյան հայագիտական ծրագրերի շրջանակներում կազմակերպվում են հնագիտական դաշտային աշխատանքներ Հայաստանում՝ «Հայոց նախապատմության հնագիտական դաշտային դպրոց» խորագրով:

Մի շարք դասընթացներ է առաջարկում Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և մշակույթների բաժանմունքի Հայագիտության բակալավրի ծրագիրը: Տարբեր լեզուների ուսուցման շարքում հայոց լեզվի դասընթաց է առաջարկում Արիզոնայի պետական համալսարանի «Մելիքյան» կենտրոնը, որը, բացի տեղում հայոց լեզվի ուսուցման կազմակերպումից, առաջարկում է երկամսյա դասընթաց Երևանում:

Հետազոտական գործունեություն

Խոսելով ամերիկյան հայագիտության հետազոտական ոլորտի մասին՝ առաջին հերթին պետք է նշենք այստեղ գործող ինստիտուտներն ու հետազոտական կենտրոնները, որոնց թվում են

Հայկական ազգային ինստիտուտը (Վաշինգտոն), Զորյան ինստիտուտը, Դիրբոռնում Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը և այլն: Ինչպես կրթական բաժնում արդեն նշեցինք, հետազոտական գործունեությունը կարևոր տեղ ունի հայագիտական ամբիոնների և ծրագրերի գործունեության մեջ[1]: Գիտահետազոտական աշխատանքներով են զբաղվում նախագծերն ու խմբերը, օրինակ՝ Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբը, Մինեսոթայի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնի Հայագիտական հետազոտական նախագիծը:

Գիտահետազոտական բնագավառում կարևոր դեր ունի *«Armenian Review»* գիտական պարբերականը, որը հարթակ է ապահովում հայագիտության զանազան խնդիրների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների հրատարակման համար:

Հետազոտական աշխատանքների մասին խոսելիս, անշուշտ, ուշագրավ է, թե որ թեմաներն են առաջնային համարվում ամերիկյան հայագիտական կենտրոնների համար: Այս հարցում կարևոր դերակատարություն ունեն անձնական հանգամանքները, օրինակ, թե տվյալ պահին ամբիոնի վարիչ նշանակվող անձն ինչ գիտական հետաքրքրություններ ունի: Նույնիսկ հնարավոր է, որ ամբիոնի թեմատիկ գործունեությունը պայմանավորվի հարմար նկատվող պրոֆեսորի հետաքրքրություններով և ոչ հակառակը, երբ ամբիոնը հիմնելիս որոշվի, թե

[1] Այստեղ, իհարկե, միայն լեզվի ուսուցման ծրագրերը նկատի չունենք, այլ նաև բազմակողմանի գործունեություն ծավալող ծրագրերը:

ինչ թեմատիկ ուղղվածություն այն պետք է ունենա և ըստ դրա ընտրվեն անհատները։ Այս իրողությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մանավանդ սկզբնական շրջանում չկար պրոֆեսորադասախոսական կազմի մեծ ընտրություն։

Քանի որ հայագիտական կենտրոնները հիմնականում ստեղծվել են հայկական համայնքի և նրա առանձին ներկայացուցիչների նվիրատվությունների շնորհիվ, ուստի բնական է, որ նրանց հետաքրքրեն այնպիսի հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հայության և համայնքի ներկայացուցիչների համար։ Դրանց թվում պետք է առանձնացնել հայոց լեզվի ուսումնասիրությունը, ինչպես նաև հետազոտական աշխատանքը հայոց պատմության զանազան, բայց առանձնապես՝ Հայոց ցեղասպանության խնդիրների վերաբերյալ։

Առաջին փուլում ուսումնասիրողների ուշադրությունը հիմնականում կենտրոնացած էր հայոց պատմության հին և մանավանդ միջնադարյան շրջանի վրա[1], որն արդյունք էր վերոնշյալ հանգամանքի՝ դրանց ղեկավարների գիտական հետաքրքրությունների։ Հետագայում հանդես եկած հայագետները սկսեցին զբաղվել նաև ավելի արդիական՝ Ցեղասպանության, Սփյուռքի պատմության, ինչպես նաև հայագիտության այլ խնդիրներով։ Այսօր ամերիկյան որոշ հայագիտական կենտրոնների գործունեությունն ուղղված է բացառապես կամ գլխավորապես Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը։ Դրանց թվում կարելի է նշել Հայկական ազգային ինստիտուտը (Վաշինգտոն), Քլարկի համալսարանի Հայոց նոր պատմության և

[1] Տե՛ս *Гарсоян Н.,* Арменоведение в США, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, թիվ 10, էջ 23-34:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ամբիոնը, Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանը (Վաշինգտոն), Բուենոս Այրեսի համալսարանի հայագիտության ազատ ամբիոնը և այլն։ ԱՄՆ հայագիտական կենտրոնները ցեղասպանության խնդրում երբեմն կատարում են նաև լոբբիստական գործունեություն[1]։

Աստիճանաբար ի հայտ եկան նաև արդի խնդիրներով, մասնավորապես՝ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներով զբաղվող կենտրոններ։ Եթե սկզբնական շրջանում դրանք ուսումնասիրում էին Հայաստանը որպես Խորհրդային Միության մի մաս՝ գտնվելով քաղաքական հակառակ բևեռում, ապա հետագայում Հայաստանի անկախացումը մեծացրեց տեղի հայկական համայնքների հետաքրքրությունն առ հայրենիք։ Այդպիսի կենտրոնների թվում պետք է նշել Զորյան ինստիտուտը, Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբը և այլն։

Ինչպես սկզբնական շրջանում, այնպես էլ այժմ հայագիտական հետազոտությունները կարևորվում են նաև մերձավորարևելյան տարածաշրջանի վերաբերյալ պատմա-բանասիրական ուսումնասիրությունների համատեքստում։ Մի քանի կենտրոններ իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրությունների վրա։ Դրանցից են Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական

[1] Հայկական հարցի խնդրում ունեցած դերակատարության մասին տե՛ս *Մարուքյան Ա.,* Սփյուռքի ջանքերը միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերը ընդունելու գործում, «Սփյուռքագիտություն» տարեգիրք, Երևան, 2013, էջ 40։

համալսարանի Հայոց լեզվի և մշակույթի Գրիգոր Նարեկացու անվան ամբիոնը, Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյանի անվան ամբիոնը, Սան Պաուլոյի համալսարանի Հայոց լեզվի ամբիոնը և այլն։

Վերջին շրջանում ի հայտ եկան ծրագրեր, որոնց գործունեության մեջ հիմնական տեղը հատկացվեց հնագիտության ուսումնասիրությանը։ Դրանք են Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Քոսթըն հնագիտության ինստիտուտի Հայ հնագիտության և ազգագրության հետազոտական ծրագիրը, ինչպես նաև Քոնեկթիկուտի համալսարանի Հայոց նախապատմության հնագիտական դաշտային դպրոցը։

Հակագիտական քարոզչության հակազդման խնդիրը

Նշենք, որ ԱՄՆ-ում գործող որոշ հայագետներ հանդես են գալիս նաև խնդրահարույց տեսակետներով։ Երբեմն դրանք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ջուր լցնել հայոց պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարների ջրաղացին։ Այսինքն՝ առաջ են քաշվում դրույթներ, որոնք ակնհայտորեն հակասում են ընդունված գիտական մեթոդներով ստացված արդյունքներին և ունեն քաղաքական ու հակագիտական բովանդակություն։ Այն, որ կարող են տարբեր տեսակետներ լինել ցանկացած հարցի շուրջ, բնական է և ողջունելի, սակայն, երբ մի գիտնական դուրս է գալիս գիտական մոտեցման սկզբունքներից, սկսում ոչ թե քննադատական մոտեցում ցուցաբերել սկզբնաղբյուրի վերաբերյալ, այլ պիտակավորել այն, վերջնական եզրակացություններ կատարել առանց բավարար փաստական նյութերի հիշատակման, անշուշտ, մեղմ ասած, կասկածներ է

առաջացնում տվյալ անձի գիտական որակների ու ազնվության վերաբերյալ։ Այս հարցին մանրամասնորեն անդրադարձել է քաղաքագետ, պատմաբան Արմեն Այվազյանը[1], որի կատարած մեջբերումները բավական են՝ հասկանալու համար, որ որոշ գիտնականներ հայագիտությանը վերաբերվում են ոչ թե գիտական, այլ քաղաքական, տվյալ դեպքում՝ հակահայկական դիրքերից։ Այս պարագայում նրանք դառնում են թուրքական լայնածավալ հակահայկական քարոզչության գործիք, ու նման մոտեցումը, համոզված ենք, անընդունելի պետք է համարվի ոչ միայն Հայաստանի և հայության, այլև ցանկացած գիտնականի համար։ Այստեղ հարկ ենք համարում ավելացնել, որ առկա տարաձայնությունների հարթման և իրական գիտական նվաճումների հասնելու նախապայման կարող է լինել ներդաշնակ փոխտեղեկացումը։ Ընդ որում, ոչ միայն հայաստանցի հայագետները պետք է ծանոթանան ԱՄՆ-ում հրատարակվող անգլերեն լեզվով հրատարակված աշխատանքներին, այլև ամերիկյան հայագիտության ներկայացուցիչները՝ իրենց հետազոտած խնդրի շուրջ Հայաստանում կատարված աշխատանքներին։

Միաժամանակ, կարևոր նշանակություն ունի հայագիտական աշխատանքների և առաջին հերթին հայկական սկզբնաղբյուրների թարգմանությունն անգլերեն։

ԱՄՆ հայագիտական կենտրոնների առջև ծառացած մարտահրավերների թվում պետք է նշել պայքարը թուրքական պատմակեղծարարության դեմ։ Այն առաջին հերթին պետք է կրի գիտական բնույթ, սակայն միաժամանակ հայկական հա-

[1] Տե՛ս *Այվազյան Ա.,* Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, Երևան, 1998։

մայնքային տարբեր կազմակերպությունների հետ համագործակցաբար կարող է ունենալ նաև էական քարոզչական դերակատարություն։ Այս խնդիրը գիտակցում են նաև հենց կենտրոնների ներկայացուցիչները[1]։

Համագործակցության հեռանկարներ

Ամերիկյան հայագիտական կենտրոններն ունեն մի շարք խնդիրներ, որոնց լուծման մեջ կարևոր դեր կարող են ունենալ ինչպես տեղի համայնքային կառույցները, այնպես էլ ՀՀ-ն։ Մասնավորապես, դրանց հետագա զարգացման և ավելի արդյունավետ գործունեության ծավալման համար անհրաժեշտ է ֆինանսական աջակցության ապահովում։ Չնայած ֆինանսական խնդիրների լուծման պարագայում հայագիտական կենտրոնները հնարավորություն կունենան ընդլայնել իրենց գործունեությունը։

Կան նաև այլ խնդիրներ։ Մասնավորապես, կարևոր ենք համարում հայագիտական տարբեր կենտրոնների՝ հայաստանյան հայագիտական նվաճումներին ծանոթացումը։ Առաջնակարգ նշանակություն ունի Հայաստանում հրատարակվող հայագիտական մենագրությունների, պարբերականների և այլ հրատարակությունների առաքումը Սփյուռքի հայագիտական կենտրոններ։ Այս խնդիրը կարող է լուծվել նաև համացանցում դրանց թվային տարբերակների զետեղմամբ, որը դեռևս մասնակիորեն է իրականացվում։ Չնայած հայագիտական կենտրոններում ուսանող և աշխատող գիտնականներից բնական է

[1] Տե՛ս *Papazian D.,* նշվ. աշխ., էջ 307։

ակնկալել հայոց լեզվի տիրապետում, այնուամենայնիվ, իրական վիճակը պատկերացնելով, ինչպես նաև այդ ուսումնասիրությունները լայն շրջանակներին (այդ թվում ոչ հայկական) ծանոթացնելու նպատակով առաջնային նշանակություն ունի հայագիտական սկզբնաղբյուրների և գիտական գրականության թարգմանությունն անգլերեն: Հաճախ մեզ համար անընդունելի ձևակերպումների առկայությունն ամերիկյան հայագետների աշխատանքներում կարող է պայմանավորված լինել նրանով, որ խնդրահարույց թեմաների վերաբերյալ գրականությունն անմատչելի է նրանց համար:

Հայագիտական կադրերի պատրաստման տեսանկյունից դրական դեր կունենար ամերիկյան հայագիտական կենտրոնների սաների, մասնավորապես՝ ասպիրանտների գործնական աշխատանքների կազմակերպումը Հայաստանում, որտեղ նրանք կկարողանային աշխատել Մատենադարանում և ակադեմիական ու բուհական հաստատություններում, Հայաստանի ազգային արխիվում և այլուր: Սա մեծապես կնպաստեր նաև հայոց լեզվի տիրապետմանը՝ այստեղ լեզվի կատարելագործման դասընթացների կազմակերպմամբ: Միաժամանակ, պրակտիկայի շրջանակներում հնարավորություն կընձեռվեր շփումներ և խորհրդակցություններ ունենալ հայաստանյան հայագետների հետ:

Արդիական և կարևոր թեմաներով հետազոտությունների կատարմանը կարող էր նպաստել նաև դրամաշնորհների տնօրինման մարմնի (որևէ ձևաչափով) ստեղծումը, որտեղ ներկայացված կլինեին նաև հայաստանյան հայագետներ: Դրա

շնորհիվ նաև բազմաթիվ ամերիկահայերի նվիրատվությունները հնարավոր կլիներ ավելի արդյունավետ օգտագործել:

ԱՄՆ հայագիտական կենտրոնների համեմատ Արգենտինայի և Բրազիլիայի համապատասխան կառույցներին, թերևս, ավելի մեծ չափով կարելի էր ֆինանսավորում հատկացնել Հայաստանի կողմից, կամ հայաստանյան որևէ կառույց կարող էր համակարգել նրանց ֆինանսական խնդիրների լուծումը: Օրինակ՝ վերջին շրջանում հիմնադրված կենտրոններից Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտական ամբիոնը սկսել է ակտիվ գործունեություն ծավալել՝ համագործակցելով տեղի ներուժի հետ: Այսպիսի կենտրոններն օգնում են ոչ միայն գիտական, այլև տեղեկատվական ասպարեզում աշխատանքների կատարմանը, և նման կառույցներին ֆինանսական աջակցության տրամադրումը կարող է բավական արդյունավետ լինել[1]:

Արդյունավետ կարող է լինել նաև անկախ հայագիտական կենտրոնների հիմնումը, որոնք ամբողջությամբ կգործեն հայկական համայնքի և Հայաստանի հետաքրքրությունների շրջանակում և ենթական չեն լինի որևէ այլ կառույցի: Դրանք կարող են կատարել հայ համայնքի և Հայաստանի համար կարևոր հետազոտություններ[2]: Նման կենտրոնի ստեղծումը, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է ԱՄՆ-ին, որտեղ է գտնվում աշխարհի ամենահզոր հայկական համայնքներից մեկը:

[1] Կենտրոնի գործունեության և առկա խնդիրների մասին 2014թ. սեպտեմբերի 30-ին մեզ հաղորդել է Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Սաբրինա Դեմիրճյանը՝ այս հետազոտության համար իրականացված հարցման շրջանակներում:

[2] Տե՛ս *Հովհաննիսյան Ռ.,* Հայագիտությունը խաչմերուկում, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2004, էջ 95:

Անհրաժեշտ է, որ հայաստանցի հայագետներն իրենց ուշադրության կենտրոնում պահեն ամերիկյան հայագիտության արդյունքները: Անհրաժեշտ է, որ այդ աշխատանքները գոնե նվազագույն քանակով ուղարկվեն Հայաստան, ինչպես նաև խրախուսելի պետք է լինի դրանց վերաբերյալ գրախոսությունների հրապարակումը հայաստանյան հայագիտական դպրոցի ներկայացուցիչների կողմից[1]: Ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի հայագիտական կենտրոնների հետ գրքերի փոխանակման տեսանկյունից օրինակելի պետք է համարել Դիրբոռնի Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը, որը նաև խիստ պատրաստակամ է համագործակցության այլ ձևաչափերի հանդեպ:

Արտասահմանի հայագիտական կենտրոնների գործունեության լուսաբանման, արդյունավետության բարձրացման, Հայաստանի գիտակրթական կառույցների հետ համագործակցության ընդլայնման տեսանկյունից առաջնային նշանակություն ունի դրանց ներկայացվածությունը համացանցում: Պետք է նշել, որ ամերիկյան հայագիտական կենտրոններն ընդհանուր առմամբ բավարար չափով են ներկայացված համացանցում:

[1] Հայաստանյան հայագիտական մամուլում տարբեր տարիների հրատարակվել են այդպիսի մի շարք գրախոսություններ (տե՛ս, օրինակ, *Տեր-Ղևոնդյան Ա.,* Գրախոսություն: Agathangelos, History of the Armenians, translation and commentary by R.W. Thomson, Albany, State University of New York Press, 1976, 527p., *Ագաթանգեղոս,* Հայոց պատմություն, թարգմանություն և ծանոթագրություններ՝ Ռ.Թոմսոնի, Ալբանի, Նյու Յորքի պետական համալսարան, 1976, 527 էջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, թիվ 4, էջ 240-242, *Դանիելյան Է.Լ.,* Գրախոսություն: Journal of the Society for Armenian Studies (JSAS). Vol. 3, 1987, p. 192. University of California, Los Angeles, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, թիվ 1, էջ 235-238, նույնի՝ Գրախոսություն: Արտասահմանի հայագիտական հանդեսներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, թիվ 3, էջ 210-218 և այլն:

Այնուամենայնիվ, այս ուղղությամբ շատ անելիքներ կան։ Մասնավորապես, կան առանձին միավորներ, որոնք ոչ միայն ներկայացված չեն առանձին կայքով, այլև նույնիսկ իրենց մասին բաժին չունեն այն մեծ կառույցի, օրինակ՝ համալսարանի կայքում, որի մաս են հանդիսանում։

Այսպիսով, ամերիկյան հայագիտական կենտրոնները ներկայացնում են զանազան կառուցվածքային տեսակների համադրություն։ Այստեղ արդեն ձևավորվել են հայագիտական որոշակի ավանդույթներ։ Ներուժի տեսանկյունից միանշանակ առաջատարի դերում են ԱՄՆ հայագիտական կենտրոնները, որոնք ունեն որոշակի կշիռ ընդհանրապես հայագիտական աշխատանքներում, դրանով բարձրանում է նրանց պատասխանատվությունը յուրաքանչյուր ծրագիր իրագործելիս։ Մյուս երկրների հայագիտական ներուժը շատ ավելի համեստ է, որն ունի իր տրամաբանական պատճառները։ Նկատվում է հայագիտական ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրության ավելացում՝ ի դեմս նոր կենտրոնների ստեղծման։ Միաժամանակ, որոշ կառույցների աշխատանքում նկատվում է անկում։ Կարող ենք ասել, որ Հայաստանի և Սփյուռքի հայագիտական կենտրոնների համագործակցության ակտիվացման խնդիրը խիստ արդիական է։

2.2 Եվրոպա

Ի տարբերություն այլ մայրցամաքների, Եվրոպայում հայագիտությունն ունի խոր արմատներ և ավանդույթներ։ Պատմական տարբեր ժամանակաշրջաններում Եվրոպայի երկրներում ակադեմիական և վանական հաստատություններում գործել են հայագիտական մի շարք հեղինակավոր կենտրոններ։ Հայագիտության զարգացումն այստեղ, ինչպես նշում են մի շարք հեղինակներ, համընկավ եվրոպական լուսավորության և հետլուսավորության շրջանների հետ, որտեղ իր ուրույն տեղն ունի Մխիթարյան միաբանությունը։ Միաբանության հայագիտական գործունեությամբ պայմանավորված՝ Եվրոպայում էլ ավելի մեծ հետաքրքրություն առաջացավ հայոց լեզվի և պատմության հանդեպ։ Չնայած հայագիտությունը Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Անգլիայում մեծ հետաքրքրություն էր առաջացրել, այդուհանդերձ, երկար տարիներ ի վեր Եվրոպայում որպես եզակի հայագիտական կենտրոններ մնում էին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունները և հատուկենտ համալսարանական ամբիոներ, բաժիններ։

Ակադեմիական հայագիտական ուղղվածության նոր ամբիոններ ստեղծվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մի շարք գիտնականների անհատական նախաձեռնությունների շնորհիվ։ Դրանց ստեղծմանն իրենց նպաստն են բերել նաև հայկական համայնքներն ու հատկապես Սփյուռքի մի շարք հիմնադրամներ (Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, Ղուկասյան եղբայրների հիմնադրամ) և սփյուռքյան կազմակերպություններ։ Նման ամբիոններ են Օքսֆորդի համալսարանի Գա-

լուստ Գյուլբենկյան հայագիտական պրոֆեսորական ամբիոնը, Բոլոնիայի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի Հայագիտության ամբիոնը, Վենետիկի Կա-Ֆոսկարի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և այլն։

Եվրոպայում հայագիտությամբ զբաղվող հաստատությունները բաժանել ենք հետևյալ խմբերի՝

1. Համալսարանական ամբիոններ և բաժիններ

- Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Հայագիտության բաժին (Ֆրանսիա-*INALCO*),
- Պրովանսի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոն (Ֆրանսիա),
- Վենետիկի Կա-Ֆոսկարի անվան համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոն (Իտալիա),
- Բոլոնիայի համալսարանի Բանասիրության ֆակուլտետի Հայագիտության ամբիոն (Իտալիա),
- Օքսֆորդի համալսարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան Հայագիտության ամբիոն (Մեծ Բրիտանիա),
- Լուվենի Կաթոլիկ համալսարանի Հայագիտության բաժին (Բելգիա),
- Զալցբուրգի համալսարանի Հայագիտության բաժին (Ավստրիա)։

Օքսֆորդի համալսարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան Հայագիտության ամբիոնի օրինակը։ Հայագիտական հետազոտություններն Օքսֆորդի համալսարանում իրականացվել են 19-րդ դարի կեսերից սկսած։ Ներկայումս Օքսֆորդի համալ-

սարանի արևելագիտության ինստիտուտի Հայագիտական ամբիոնը հիմնադրվել է 1965թ. Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի նվիրատվության միջոցներով (*Calouste Gulbenkian Professorship of Armenian Studies Oxford*): *Բակալավրիատում* հայագիտությունն ուսումնասիրվում է աստվածաբանության և արևելագիտության ուսումնասիրությունների շրջանակներում: *Մագիստրատուրայում* արդեն առաջարկվում է դասական հայերենի առանձին մագիստրոսական ծրագիր: Փիլիսոփայության ծրագրում հայագիտական դասընթացները կարող են արևելաքրիստոնեական, ուշ անտիկ և բյուզանդական ուսումնասիրությունների, ընդհանուր և համեմատական լեզվաբանության ծրագրերի մաս կազմել: Կարող է իրականացվել նաև հայ բանասիրության դոկտորանտուրա[1]: Դասական հայերենի մագիստրատուրայի շրջանակներում ուսանողներն անցնում են հին և միջնադարյան Հայաստանի պատմությունը, լեզուն, գրականությունը և մշակույթը, ապա՝ գրականության վերաբերյալ առանձին դասընթացներ: Ամբիոնը հետազոտական աշխատանքներ է տանում այլ ինստիտուտների հետ համատեղ:

Խտացված ձևով ներկայացնենք հայագիտական ամբիոնների և բաժինների գործունեության մի քանի կողմերը:

Կրթական, հետազոտական, համագործակցության և ընդհանրապես աշխատանքային գործունեությունն ապահովող համակարգված և կանոնավոր ծրագրեր գործում են բոլոր հայագիտական ամբիոններում և բաժիններում: Կախված որոշ հան-

[1] THE FACULTY OF ORIENTAL STUDIES M.ST. IN CLASSICAL ARMENIAN STUDIES (2013-2014), http://www.orinst.ox.ac.uk/docs/Handbooks/Handbook_MSt_Classical_ Armenian_Studies.pdf.

գամանքներից՝ կրթական ծրագրերը յուրաքանչյուր տարի կարող են ենթարկվել փոփոխության, իսկ ահա հետազոտական աշխատանքներն իրականացվում են հիմնականում երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում։

Կրթական գործունեություն։ Դասավանդվում են հայագիտության տարբեր ճյուղեր՝ ժամանակակից հայոց լեզու (արևելահայերեն և արևմտահայերեն, դասական հայերեն), լեզվաբանություն, գրականություն (հին և միջնադարյան), Հայոց պատմություն, Սփյուռքի պատմություն, հայ արվեստի պատմություն, Հայ Առաքելական եկեղեցու պատմություն և այլն։ Տարբեր ամբիոններ հայագիտության դասընթացներն անց են կացնում փուլային մեխանիզմով, որը կարող է տևել 3-4, որոշ դեպքերում՝ 5 տարի՝ սկսնակների, բակալավրերի, մագիստրոսների և դոկտորական աստիճանի ձգտողների շրջանում։ Որոշ ամբիոններում գործում են նաև հետավարտական դասընթացներ։

Հետազոտական գործունեություն։ Հետազոտական աշխատանքների մեծ մասն իրականացվում է երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում, որոնք ունեն թեմատիկ տարբեր ուղղվածություններ. բարբառագիտություն (օր.՝ Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի հայագիտական բաժին-*INALCO*)[1], հին և միջնադարյան գրականություն (Օքսֆորդի համալսարան), աստվածաբանություն և քրիստոնեություն (Լուվենի կաթոլիկ համալսարան) և այլն։ Մնացած

[1] *«INALCO»*-ն մասնագիտական ուսուցման շրջանակներում ապահովում է դասընթացների շարք, տե՛ս *Եկավյան Տ.,* Հայկական ինքնությունը Ֆրանսիայում՝ ոգեկոչումների պատանդ, http://www.repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenian-diaspora-ar/the-armenian-identity-in-france-in-the-grip-of-memorialization-armenian

դեպքերում հետազոտությունները կենտրոնանում են հիմնականում հայոց պատմության, հայ բանասիրության, հայկական մշակույթի, ազգագրության և այլ գիտական ուղղությունների խնդիրների վրա։

Կարելի է նշել, որ ամբիոններում և բաժիններում հետազոտական աշխատանքների հիմնական մասը հատկացվում է հայոց լեզվին, արվեստի պատմությանը, հին և միջնադարյան պատմությանը, հայկական գաղթօջախներին և այլն։ Վ.Կալցոլարիի կարծիքով՝ քիչ են այն կենտրոնները, որտեղ կարելի է ուսումնասիրել արդի հայ գրականություն կամ պատրաստել ավարտաճառեր[1]։

Համագործակցություն։ Ամբիոնների և բաժինների համագործակցությունն ընթանում է մի քանի ձևերով՝ գիտահետազոտական (գիտական թեզի համատեղ ղեկավարում), մասնագետների և աշխատանքային փորձի փոխանակման և այլն։ Որպես օրինակ կարող ենք նշել Վենետիկի համալսարանի Հայագիտական ամբիոնի համագործակցության փորձը։ Այստեղ գիտական փոխանակման ծրագրեր են իրականացվել Երևանի պետական և Ժնևի համալսարանների, ինչպես նաև Բոլոնիայի, Միլանի կաթոլիկ համալսարանների ամբիոնների հետ (նաև շրջանավարտների համար)։ Ընդհանուր առմամբ, բոլոր հայագիտական ամբիոններն էլ համագործակցում են ինչպես իրենց երկրների, այնպես էլ արտերկրի ակադեմիական և ոչ ակադեմիական հաստատությունների և ամբիոնների հետ, սակայն հնարավոր է, որ որոշ դեպքերում այդ համագործակցությունը կրում է ֆորմալ բնույթ։ Սովորաբար համագործակցության արդյունքում

[1] *Կալցոլարի Վ.*, նշվ. աշխ., էջ 39։

ձևավորված կապերը, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել հետազոտական համատեղ աշխատանքներ, համագործակցության ավարտից հետո ինստիտուցիոնալ կապերից վերածվում են անհատականի կամ հակառակը։

Վերջին տասը տարում տարբեր ծրագրերի շրջանակներում Եվրոպայի հայագիտական ամբիոններն ու բաժինները համագործակցել են ԵՊՀ-ի, Մատենադարանի, Գիտությունների Ազգային ակադեմիայի և այլ գիտակրթական հաստատությունների հետ՝ գիտական ասպարեզում փոխադարձ համագործակցության զարգացման նպատակով (ուսանողների, գիտնականների փոխանակում, հոդվածների հրատարակում, հայագիտական գիտաժողովներին մասնակցություն և այլն)։

2. Հայագիտական ինստիտուտներ։ Եվրոպայում հաշվառել ենք հայագիտական հետազոտություններ իրականացնող յոթ ինստիտուտ։ Ինստիտուտներից մի քանիսը հայության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող, «թինկ-թանկի» ոճով աշխատող վերլուծական կառույցներ են, որոնք երբևէ չեն ընկալվել որպես հայագիտական կենտրոններ։ Այնինչ, դրանք լոբբիստական տեսանկյունից կարող են նշանակալի գործունեություն ծավալել տվյալ հանրությունների ներսում, քանի որ այստեղ ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից քաղաքական նշանակության այնպիսի խնդիրների, որոնք ներկա ժամանակաշրջանում Եվրոպա մայրցամաքում քիչ են լուսաբանվում, մասնավորապես Հայոց ցեղասպանության դատապարտման և միջազգային ճանաչման, Հայ դատի, Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ և այլն։ Այս հատկանիշներով

վերլուծական կառույցների «ինտելեկտուալ արտադրանքը» խիստ տաբերվում է համալսարանական հայագիտական աշխատություններից և գործունեությունից: Սակայն տարբեր կառույցները միմյանց փոխլրացման հսկայական ներուժ են պարունակում: Կան ինստիտուտներ, որոնք վերլուծական և անկախ ակադեմիական կառույցներ են կամ համալսարաններին կից գործող հետազոտական ստորաբաժանումներ:

Այդ ինստիտուտներն են՝

- Կոմիտաս ինստիտուտը (Մեծ Բրիտանիա-*Gomidas Institute*),
- Հայկական ինստիտուտը (Մեծ Բրիտանիա-*Armenian Institute*),
- Հայկական հարցերի հաստատությունը (Գերմանիա-*Instituts für armenische Fragen*),
- Չոպանյան ինստիտուտը (Ֆրանսիա-*Institut Tchobanian*),
- Հայկական ուսումնասիրությունների Սայաբալիան ինստիտուտը (Ֆրանսիա- *Institut Sayabalian d'Etudes Arméniennes*),
- Հայկական հետազոտությունների Միջերկրածովյան ինստիտուտը (Ֆրանսիա-*Institut Méditerranéen de recherches Arméniennes*),
- Հայագիտության ինստիտուտը (Ռումինիա-Կլուժ-Նապոկայի Բաբեշ-Բոյայ համալսարան):

Անդրադառնանք դրանցից մի քանիսի գործունեությանը:

Կոմիտաս ինստիտուտ: Հայագիտական ուսումնասիրություններ իրականացնող հաստատությունների շարքում Եվրոպայում որոշակի տեղ ունի Լոնդոնի «Կոմիտաս ինստիտուտը»,

որն ուսումնասիրում է Հայաստանի պատմական և արդի տարբեր ժամանակաշրջանների խնդիրները: Այս ինստիտուտի հետազոտական աշխատանքների մեծ մասը վերաբերում է Մեծ եղեռնին՝ ներառելով վավերագրերի և վերապրածների հիշողությունների ուսումնասիրությունները (իրականացվում է «Հայոց ցեղասպանության փաստագրման նախագծի» շրջանակներում), որին հաջորդում են ժամանակակից հայ գրականությունը և հայագիտական այլ ոլորտները:

«Կոմիտաս ինստիտուտը» չի սահմանափակվում միայն գիտական աշխատանքների իրականացմամբ: Այն հովանավորում և ապահովում է հայերենով հրատարակված հայրենական գիտական և գեղարվեստական աշխատանքների թարգմանությունն անգլերեն և դրանց հրապարակումները[1]:

Հայկական ինստիտուտ: Լոնդոնում գործում է հայագիտական ուղղվածություն ունեցող ևս մեկ կառույց՝ «Հայկական ինստիտուտը» (*The Armenian Institute*): Հիմնադրվել է 2001թ.: Գործունեությունը հիմնված է մասնավոր ներդրումների վրա: Ստանում է դրամաշնորհներ Մեծ Բրիտանիայի ոչ կառավարական մարմիններից, միջազգային կազմակերպություններից: Ինովացիոն ծրագրերի միջոցով իրականացնում է հանրային դասախոսություններ, ակադեմիական դասընթացներ, ցուցահանդեսներ և թատերական ներկայացումներ հայկական համայնքի և բրիտանական հանրության շրջանում:

[1] *Գրիգորյան Խ.,* Թարգմանություններ հայերենից անգլերեն, որոնք կատարվել են Միացյալ Թագավորությունում 1990-2012թթ., *«Next Page»* հիմնադրամի թարգմանական նախագիծ, սեպտեմբեր, 2012, http://www.cultural.am/hy/norutyunner/hodvacner/targmanutyunner-hayerenic-angleren

Ինստիտուտն իր հետազոտական նախագծերն իրականացնում է այլ գիտական կառույցների հետ համատեղ, օրինակ՝ «Հայկական բառարանի նախագիծը»՝ *University College London*-ի, «Ազոխի քարանձավի[1] նախագիծ»-ը՝ *Blandford Town Museum & University College London*-ի հետ: Կարելի է ասել, որ ինստիտուտը հատուկ նախընտրած թեմաներ չունի, և որևէ համագործակցության առաջարկ դիտարկվում է թեմայի նպատակահարմարության և արդիականության տեսանկյունից:

Ինստիտուտը համագործակցության փորձ ունի հատկապես Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում գործող հայկական կազմակերպությունների, գիտական և մշակութային կառույցների հետ, ինչպիսիք են Լոնդոնի Հայկական տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնը (*Centre for Armenian Information and Advice*), ԱՄՆ Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ասոցիացիան (*National Association for Armenian Studies and Research*), Լոնդոնի Երկիր և մշակույթ կազմակերպությունը (*Land & Culture Organisation*): Ինստիտուտը համագործակցում է նաև այլ երկրների հայագիտական (Ֆրեզնոյի համալսարանի Հայագիտական ծրագիր) և այլ գիտակրթական կառույցների (Լեհաստանի Գրոտովսկի ինստիտուտ), ինչպես նաև անհատ հայագետների հետ:

Սույն հետազոտության շրջանակներում հայագիտական կառույցներին ուղղված հարցումներից պարզվեց, որ Հայկական ինստիտուտը ՀՀ գիտական ոչ մի կենտրոնի հետ համագործակցության փորձ չունի, մինչդեռ անհատ հայագետների և այլ մասնագետների հետ համագործակցությունը բարձր մակարդակի

[1] Գտնվում է Արցախում:

վրա է։ Բազմաթիվ անհատ հետազոտողներ ներառված են հայկական ավանդական հագուստի, Շիրվանզադեի «Նամուս»-ի, 1988թ. Սպիտակի երկրաշարժը բրիտանական մամուլում և այլ թեմատիկ աշխատանքներում։

Կրթական ծրագրով դասավանդվում են արևելահայերեն և արևմտահայերեն, ինչպես նաև ներդրվում է հայոց պատմության դասընթաց։ Հրատարակվում է «Պարտեզ» պարբերականը, ուր տպագրվում են հայ համայնքի կյանքի, ինչպես նաև հայագիտության վերաբերյալ տարբեր հրապարակախոսական և գիտական հոդվածներ։ Հայկական ինստիտուտը հրատարակել է հայկական ինքնության և հայկական համայնքների վերաբերյալ մի քանի արժեքավոր աշխատություններ։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ինստիտուտի հայագիտության վերաբերյալ տասը հազար բազմալեզու գրքերից և պարբերականներից բաղկացած գրադարանը։

Ի լրումն վերն ասվածի՝ նշենք, որ ներկայումս ինստիտուտն ունի երկու հիմնական խնդիր՝ տարածքային և ֆինանսական։

Չոպանյան ինստիտուտ։ Չոպանյան ինստիտուտի գիտավերլուծական գործունեությունն ամբողջովին հայագիտական չէ։ Այստեղ հայագիտությունը հետազոտական ուղղություններից մեկն է։ Կարելի է ասել, որ Եվրոպայում միակ հայկական վերլուծական կենտրոնն է՝ իր բազմազգ անդամներով։ Հիմնադրվել է Փարիզում 2004թ.՝ Արշակ Չոպանյանի մահվան 50-ամյա տարելիցի կապակցությամբ։ Համագործակցում է տարբեր երկրների հայ և օտարազգի հայագետների, քաղաքագետների և այլ մասնագիտությունների տեր հետազոտողների, ինչպես նաև

տարբեր գիտական կառույցների հետ: Ինստիտուտն օժանդակություն չի ստանում որևէ պետությունից և չի հարում որևէ քաղաքական կուսակցության: Բյուջեն ձևավորվում է անդամների կողմից և նվիրատվությունների շնորհիվ: Հայագիտական աշխատանքներն ընթանում են երկու ուղղությամբ: Ինչպես նշում է ինստիտուտի հիմնադիր նախագահ Ժան Վարուժան Սիրափյանը, վերլուծությունները կատարվում են Հայկական հարցի և աշխարհաքաղաքական խնդիրների շուրջ, որի ծիրում են ինչպես Հայաստանը, այնպես էլ Սփյուռքը[1]:

Ընդհանուր առմամբ, ինստիտուտը գործունեություն է ծավալում ներքոհիշյալ ուղղություններով.

- Հրատարակում է ֆրանսերեն-անգլերեն երկլեզու «Եվրոպան և Արևելքը» հանդեսը և գրքեր՝ նվիրված Թուրքիայի, Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի քաղաքական, տնտեսական, տարածաշրջանային և այլ խնդիրներին:
- Հրատարակում է հոդվածներ և գրքեր՝ նվիված հայոց պատմությանը, Հայկական հարցին, արվեստին, մշակույթին, հայության համար առաջնահերթ քաղաքական նշանակության հիմնախնդիրներին:
- Կազմակերպում է կոնֆերանսներ և սեմինարներ ինչպես հայության, այնպես էլ աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող զարգացումների, ընթացիկ քաղաքական գործընթացների և միտումների վերաբերյալ:

[1] *Սիրափյան Վ.,* Չոպանյան ինստիտուտի գործունեությունը, 05.10.2012, Աղավնաձոր, http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2012/Lragroghner6/Varujan%20Si rapyan.docx

Ի դեպ, ՀՀ և Արցախի անվտանգությանը սպառնացող խնդիրների վերաբերյալ ինստիտուտը տեղեկատվական և բացատրական մշտական աշխատանք է իրականացնում Արևմուտքի ազդեցիկ քաղաքական գործիչների, նաև ոչ կառավարական կազմակերպությունների պատասխանատուների, լրագրողների շրջանում[1]: Չնայած սուղ միջոցներին, ֆինանսավորել կամ համաֆինանսավորել է մեկ տասնյակից ավելի քաղաքական, աշխարհաքաղաքական բովանդակությամբ աշխատություններ:

Այսպիսով, կարելի է ասել, որ Չոպանյան ինստիտուտը Ֆրանսիայում գործող թուրքական վերլուծական կենտրոնների հակաքարոզչության դեմ, թերևս, քաղաքական հայագիտությամբ զբաղվող միակ «ուղեղային կենտրոնն» է:

3. Հայագիտական կենտրոններ: Եվրոպայում հաշվառել ենք հինգ միավոր հայագիտական հետազոտություններ իրականացնող կենտրոններ.

- Ժնևի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն (Շվեյցարիա- *Centre de recherches arménologiques Université de Genève*),
- Մեսրոպ Հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գերմանիա-*MESROP Arbeitsstelle für Armenische Studien*),
- Կոպեռնիկոսի համալսարանի Հայկական հետազոտությունների կենտրոն (Լեհաստան - *Centrum Badan Ormianskich*),
- Հայկական հիշողության ազգային կենտրոն (Ֆրանսիա - *Centre National de la Mémoire Arménienne*),

[1] Նույն տեղում:

- Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոն (Իտալիա - *Centro Studi e Documentazione della Cultura Armena*):

Կրթական գործունեություն: Հիշատակված յուրաքանչյուր կենտրոն համալսարանական որևէ բաժնի կամ ինստիտուտի մեջ մտնող նեղ մասնագիտացված ստորաբաժանում է, բացառությամբ՝ նորաբաց Հայկական հիշողությունների ազգային կենտրոնի (հիմնված 2013թ.): Դրանք ունեն իրենց հիմնական սկզբունքներն ու նպատակները, իրագործում են կրթական, հետազոտական, մշակութային ծրագրեր, որոշ դեպքերում՝ նաև հայության վերաբերյալ նյութերի արխիվացման աշխատանքներ:

Կենտրոններն իրագործում են կրթական տարբեր ծրագրեր բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար: Օրինակ՝ Ժնևի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը կրթական ծրագրերի շրջանակում ուսանողներին հնարավորություն է տալիս կատարել անհատական ուսումնասիրություններ[1]:

Կոպեռնիկոսի համալսարանի Հայկական հետազոտությունների կենտրոնը հետապնդում է դիդակտիկ-կրթական նպատակներ: Կենտրոնի գործունեությունը կանոնակարգող հայեցակարգում նշվում է, որ, բացի հայերեն լեզվի դասընթացներից, նպատակ է հետապնդվում ստեղծել առանձնահատուկ ինտեգրալ մշակույթի և լեզվի դասընթացներ ոչ միայն հայերեն

[1] Մանրամասն տե՛ս Plan d'études - Langue et littérature arméniennes Département de langues et littératures méditerranéennes, slaves et orientales, http://www.unige.ch/lettres/files/4313/9404/0376/Armenien-BA-01042011-12h38.pdf

սովորել ցանկացող ուսանողների, այլև Լեհաստանում բնակվող հայ միգրանտների երեխաների համար[1]:

Ընդհանուր առմամբ, կրթական ծրագրերով դասավանդվող առարկաներն են դասական հայերենը, հայ գրականության պատմությունը, ընդհանուր պատմությունը, արվեստի և երաժշտության պատմությունը, հայ ճարտարապետության պատմությունը (օր.՝ Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը) և այլն:

Հետազոտական գործունեություն և համագործակցություն: Հետազոտական աշխատանքներն այստեղ մեծ մասամբ իրականացվում են երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում, կատարվում են նաև միջդիսցիպլինար հետազոտություններ: Այս ուղղությամբ բեղմնավոր հայագիտական ուսումնասիրություններով աչքի են ընկնում Մեսրոպ հայագիտական հետազոտությունների (Հայ-գերմանական հարաբերությունների, Գերմանիայի հայագիտության պատմության և այլ խնդիրների վերաբերյալ հետազոտական աշխատանքներ է իրականացրել) և Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնները (հրատարակել է հայկական ճարտարապետության և երաժշտության վերաբերյալ 23 հատորից բաղկացած հետազոտական մենագրությունների շարք)[2]:

[1] Տե՛ս Institut de Sociologie Université de Mikolaj Kopernic à Torun, Le Centre des Recherches Arméniennes, http://www.centrum-armenia.umk.pl/docs/cbo_fr.pdf:

[2] Տե՛ս Արմենիակա, տվյալների շտեմարան՝ նվիրված հայկական ճարտարապետական ժառանգությանը, http://www.armeniaca.eu/, տե՛ս նաև Վենետիկի հայ մշակոյթի ուսումնասիրութեան եւ վաւերագրումի կեդրոնի 2010 տարեշրջանի գործունէութեան մասին, http://hairenikweekly.com/2010/11/04/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6-%D5%BE%D5%A5%D5%B6%D5%A5%D5%BF%D5%AB%D5%AF%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B5/

Կենտրոններն աչքի են ընկնում նաև միջազգային համատեղ ծրագրերի իրականացմամբ. այդպիսի օրինակներ են Ժնևի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից՝ Եվրոպական գիտական հիմնադրամի աջակցությամբ և Համբուրգի համալսարանի ղեկավարությամբ «Արևելյան ձեռագրերի համեմատական հետազոտություններ» (2009թ.), Բարձրագույն կրթության աջակցության միջազգային ծրագրի (*International Higher Education Support Program-HESP*) և Բուդապեշտի Կենտրոնական Եվրոպայի համալսարանի ղեկավարությամբ՝ «Կովկասը և Բյուզանդիան ուշ անտիկ շրջանից մինչև միջնադար» (2010-2013թթ.) իրականացված ծրագրերը: Իսկ, օրինակ, Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Ֆրանսիայի մասնաճյուղի, Ինսայդ Յուրոփ (Բելգիա) և Հայկական ճարտարապետության ուսումնասիրման կազմակերպության (ՀՃՈՒԿ) հետ համագործակցության արդյունքում իրականացնում է հայկական հուշարձանների ժառանգության պահպանման, արխիվների թվայնացման «Արմենիակա» ծրագիրը[1]:

Ուսանողական և դասախոսական անձնակազմի վերապատրաստման նպատակով համագործակցում են եվրոպական մի շարք երկրների հայագիտական ամբիոնների հետ: Միևնույն ժամանակ, կան համագործակցության տարբեր օրինակներ ԵՊՀ-ի, Մատենադարանի և հայրենական այլ գիտակրթական, հետազոտական հաստատությունների հետ:

[1] Արմենիակա ծրագրի մասին տե՛ս http://www.armeniaca.eu/

4. Միություններ: Եվրոպայում գործում են 3 հայագիտական միություններ.

- Հայկական ուսումներու միջազգային ընկերակցություն (Շվեյցարիա -*Association Internationale des Études Armèniennes-AIEA*),
- Հայկական հիշողության հետազոտման և արխիվացման ասոցիացիա (Ֆրանսիա - *Association pour la Recherche et l'Archivage de la Mémoire Arménienne-ARAM*),
- Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն (Ֆրանսիա -*Société des Etudes arméniennes*):

Հայկական ուսումներու միջազգային ընկերակցությունը հիմնադրվել է 1983թ. հայագետներ Մայքլ Սթոնի և Ջոզ Վայթենբերգի կողմից: Այն Եվրոպայում գործող ամենախոշոր հայագիտական միջազգային միությունն է, որին անդամակցում են մոտ 300 հայագետներ և հայագիտության հետ առնչվող այլ գիտակարգերի լավագույն մասնագետներ Եվրոպայից, Հայաստանից, Հյուսիսային Ամերիկայից, Մերձավոր Արևելքից և Ասիայից:

Հաստատությունը *«Armenian Studies 2000»* ծրագրի շրջանակում իրականացնում է հայագիտության տարբեր ոլորտներ (բանասիրություն, արվեստ, գրականություն, լեզվաբանություն և այլն) ընդգրկող գիտաժողովներ: Որպես գիտական արդյունք ծրագրի ավարտից հետո նախատեսում է հրատարակել մի քանի հատոր հետազոտությունների շարք: Համագործակցության օրինակներ կան ինչպես Հայաստանի գիտակրթական (ՀՀ

ԳԱԱ, ԵՊՀ, Մատենադարան), այնպես էլ արտերկրի հայագիտական կենտրոնների հետ[1]:

Կարելի է ասել, որ Հայկական ուսումներու միջազգային ընկերակցությունը գիտակրթական և հետազոտական համագործակցության առումով մի կողմից՝ կամուրջ է Հայաստանի, մյուս կողմից՝ արտերկրի հայագետների և նրանով հետաքրքրվող մասնագետների համար:

Հայկական հիշողության հետազոտման և արխիվացման ասոցիացիան ծավալում է Լեհահայ մշակույթի և ժառանգության հիմնադրամի նման գործունեություն: Այս ասոցիացիան մի շարք տեսանկյուններից առաջատար տեղ է զբաղեցնում հայագիտական նմանատիպ գործունեություն իրականացնող կառույցների շարքում: Մասնավորպես, այս հաստատության ջանքերով թվայնացվել են Ֆրանսիայի հայկական համայնքի կողմից հրատարակվող թերթեր, արժեքավոր հայագիտական պարբերականներ (*La Revue des Études Arméniennes de 1920 à 1933*) և աշխատություններ:

5. Հիմնադրամներ: Եվրոպայում գործող հայագիտական հաստատությունների մեջ յուրահատուկ է Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի (*Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich*) գործունեությունը[2]: Հիմնադրամը ստեղծվել է 2006թ. Հայ կաթողիկե թեմի նախկին առաջնորդ Յուզեֆ Գլեմպի

[1] Մանրամասն տե՛ս Հայկական ուսումներու միջազգային ընկերակցություն կայքում, http://aiea.fltr.ucl.ac.be/AIEAfr/Accueil.html

[2] Լեհահայոց Մշակույթի և ժառանգության հիմնարկության գործունեության վերաբերյալ մանրամասն տե՛ս http://dziedzictwo.ormianie.pl/images/stories/Sprawozdanie_FKiDOP_2013.pdf

կողմից։ Իրականացնում է աշխատանքներ Լեհաստանի հայերի պատմության վերաբերյալ փաստաթղթերի, վավերագրերի, լուսանկարների և ձեռագրերի հավաքման ու պահպանման ուղղությամբ։ Վերը հիշատակված աշխատանքների արդյունքում հիմնադրամում ձևավորվել է հայագիտական մեծ արխիվ։

Հիմնադրամն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել հավաքված հայագիտական արխիվային նյութերը՝ ցույց տալով հայերի դերակատարությունը Լեհաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական-մշակութային կյանքում և պահպանել լեհահայերի ավանդույթները։ Թվայնացնելով լեհահայերի՝ հիմնադրամի տրամադրության տակ գտնվող ժառանգությունը՝ փորձ է արվում տարածել հայկական մշակույթի մասին գիտելիքները Լեհաստանում և նրա սահմաններից դուրս։ Ուշադրության կենտրոնում է պահում Լեհաստանի «հին» ու «նոր» համայնքների կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք արտացոլվում են սոցիալ-մշակութային ուղղվածություն ունեցող «Ավեդիս» ամսագրում։

Հիմնադրամը նաև աշխատանքներ է իրականացնում Լեհաստանի հայկական հուշարձանների վերանորոգման և վերականգնման ուղղությամբ։ Ուշագրավ է նաև, որ հիմնարկությունն իր աշխատանքի արդյունքները լավագույնս ներկայացնում է համացանցում՝ դրանք հասանելի դարձնելով գիտական և ընդհանրապես դրանցով հետաքրքրվող շրջանակների համար[1]։

[1] Լեհաստանի հետ կապված հայերի կենսագրություններ (www.wiki.ormianie.pl), Լեհահայոց Վիրտուալ Դիվան, լեհահայերի վերաբերյալ արխիվային հարուստ տեղեկություն (www.archiwum.ormianie.pl) և այլն։ Բոլոր տեղեկությունները կարելի է գտնել հիմնադրամի «Լեհահայոց Վիրտուալ Աշխարհ» (www.ormianie.pl) կայքում։

Հիմնադրամի աշխատանքներից երևում է, որ այն կրթական գործառույթներ չի իրականացնում, հրատարակում է գիտական և գիտահանրամատչելի աշխատություններ, կազմակերպում կամ համակազմակերպում է գիտաժողովներ։ Հիմնադրումից ի վեր ակտիվ համագործակցում է հայաստանյան գիտական օջախների (Մատենադարան, ԵՊՀ) և ՀՀ պետական կառույցների, արևմտյան հայկական համայնքների կազմակերպությունների, ինչպես նաև ԱՄՆ, Ֆրանսիայի, Բելգիայի անհատ հայագետների հետ։ Հատկանշական է, որ հիմնադրամի գործունեությունը գտնվում է պետական հոգածության ներքո։ Դրա վկայությունն է այն, որ հաստատության կողմից իրականացվող 2013թ. ծրագրերը ֆինանսավորվել են Վարչարարության և թվայնացման, Մշակույթի և Ազգային ժառանգության նախարարությունների, ինչպես նաև Լեհաստանի Պատմության թանգարանի կողմից («Վաղվա հայրենասիրությունը» ծրագրի շրջանակում)[1]։

6. Վանական միաբանություններ։ Եվրոպայում առանձնահատուկ է Վենետիկի Ս. Ղազար կղզում և Վիեննայում գործող Մխիթարյան հայ կաթողիկե միաբանությունների դերը հայագիտության, հայապահպանության, հայ մշակույթի զարգացման և հայրենիքից դուրս հայագիտական դպրոցների հիմնադրման գործում։ Երկու միաբանություններն էլ, հիմնադրման օրվանից սկսած, իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին հնարավոր բոլոր միջոցներով Եվրոպան ճանաչել տալ հայությանը և հայությանը՝ Եվրոպային[2]։

[1] Տե՛ս Awedis, nr 19 lato 2014, s. 13.

[2] *Փաշայան Ա.,* Վիեննայի Մխիթարյանները գիտության և մշակույթի ջահակիր (Միաբանության 200-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 2011, թիվ 1, էջ 35, *Դանիելյան Է.Լ.,* Մխիթարյան Միաբանության ավանդը Հայոց քաղաքակրթական հիմունքների պահպանության գործում, «Սփյուռքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները», Երևան, 2011, էջ 90-98։

Չնայած առկա տարաբնույթ խնդիրներին՝ Մխիթարյանները շարունակում են ծավալել կրթական, գիտական, հրատարակչական, հոգևոր և այլ գործունեություն:

7. Ֆակուլտատիվ դասընթացներ: Եվրոպայի մի շարք համալսարաններում առկա են նաև ֆակուլտատիվ դասընթացներ, որի շրջանակում դասավանդվում են հայերեն, հայ գրականություն և պատմություն և այլ առարկաներ, իրականացվում են հայագիտական ծրագրեր և ուսումնասիրություններ: Դրանք չեն գործում որպես առանձին հայագիտական կենտրոններ, սակայն նպաստում են հայագիտության զարգացմանը և հնարավորության դեպքում, կախված մի շարք հանգամանքներից, կարող են վերակազմակերպվել որպես առանձին գործող ամբիոններ, բաժիններ և այլն: Այդպիսիք գործունեություն են ծավալում Եվրոպայի տասնյակ համալսարաններում: Կարելի է փաստել, որ ի տարբերություն հայագիտական մի շարք հաստատությունների, համալսարանների տարբեր կենտրոններում (օր.՝ բյուզանդագիտության, ընդհանուր լեզվաբանության և այլն) գործող հայագիտական ուղղվածություն ունեցող ծրագրերը կարող են լինել ավելի արդյունավետ: Այստեղ հայագիտական առարկաների դասավանդումն իրագործվում է միջդիսցիպլինար ուսումնասիրությունների շրջանակում, ինչը կարելի է տեսնել նաև այսօր Փարիզի Կաթոլիկ ինստիտուտում, Սենթ Էնդրյուի, Մոնպելիեի, Բոխումի, Վիեննայի և այլ համալսարաններում:

* * *

Հայագիտական կառույցներն ունեն խնդիրներ և դժվարություններ և կանգնած են ներքին և արտաքին մարտահրավերների առջև։

Վերջին տարիներին տարատեսակ խնդիրների պատճառով եվրոպական հայագիտական մի շարք ամբիոններ, բաժիններ և ծրագրեր, որոնք ունեին գիտահետազոտական և կրթական նեղ ուղղվածություն, կա՛մ իսպառ դադարեցին գործելուց, կա՛մ վարում են անկանոն գործունեություն՝ երբեմն ամբիոններից ու կենտրոններից վերածվելով ենթաբաժինների։ Միակ մխիթարանքն այն էր, որ հայագիտական առարկաները ներառվեցին ավելի լայն գիտաճյուղերի՝ կովկասյան լեզուների (հայերեն լեզուն)[1], բյուզանդագիտության և քրիստոնյա արևելքի կամ էլ արևելագիտության (հայոց պատմությունը) մեջ։

Մյուս կողմից՝ ոչ միայն հայագիտությունը, այլև Եվրոպայում խոր արմատներ ունեցող գիտաճյուղերը, օրինակ՝ դասական գրականությունը, դիտվում են որպես երկրորդական ճյուղեր, որոնք Գերմանիայում ստացել են «ծաղկական ճյուղեր» անվանումը և դադարել են քաջալերվել ակադեմիական հեղինակությունների կողմից[2]։ Ամբողջ աշխարհում հասարակական և հումանիտար որոշ գիտաճյուղեր ճգնաժամ են ապրում, և դրա հաղթահարման ուղղությամբ մշակվել են ռազմավարական տարբեր ծրագրեր, որի բուն նպատակն է հզորացնել հումանիտար գիտությունների ինստիտուցիոնալ հիմքերը[3]։

---

[1] *Գալցոլարի Վ.,* նշվ. աշխ., էջ 40։

[2] Նույն տեղում, էջ 41։

[3] Մանրամասն տե՛ս *Գզոյան Է. և ուրիշներ,* Հասարակական և հումանիտար գիտությունների արդի բնութագիրը, http://www.csiam.sci.am/pdf/texekagir%202.pdf

Կարծում ենք, որ այս դեպքում օբյեկտիվ պատճառներից մեկը կարող է լինել նաև այն, որ ողջ Եվրոպայում և նրա սահմաններից դուրս հումանիտար որոշ գիտաճյուղեր թե՛ անհատական և թե՛ պետական մակարդակով շուկայական (որպես եկամուտի աղբյուր) տեսանկյունից դիտվում են անհեռանկարային և ոչ շահութաբեր։

Եվրոպայում հայագիտական մի քանի ամբիոնների գործունեության դադարեցումը ոչ միայն պայմանավորված էր մասնագետների պակասի կամ համապատասխան քանակի ուսանողներ, այլև ֆինանսական հատկացումներ չունենալով։ Հայագիտական հաստատությունների առաջնային խնդիրը մնում է ֆինանսավորումը, որը գոյանում է տարբեր աղբյուրներից՝ համալսարանի և տվյալ երկրի պետական բյուջեից, հայ համայնքի և առանձին անհատների նվիրատվություններից, Սփյուռքի և ՀՀ պետական կառույցների կողմից։

Այսպես, քանի որ համալսարանական հայագիտական ամբիոնների, բաժինների և կենտրոնների մի մասը ֆինանսավորվում է համալսարանների բյուջեից՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով նրանք կանգնեցին գոյատևման լրջագույն խնդիրների առջև։ Օրինակ՝ Իտալիայի կրթության և գիտության նախարարության կողմից ֆինանսավորվող համալսարանները ճգնաժամի հետևանքով անցել են մասնակի ինքնաֆինանսավորման[1]։ Կամ 2010թ. Բուդապեշտի ԷԼՏԷ համալսարանում, երբ կրկին բարձրացվեց հայագիտական ամբիոն հիմնադրելու և ուսումնական ծրագիր ընդունելու

[1] Վենետիկի համալսարանի հայագիտության ամբիոնը խնդիրներ ունի («Առավոտ» օրաթերթ, դեկտեմբեր 13, 2013) http://www.aravot.am/2013/12/24/417817/

հարցը, ֆակուլտետի ղեկավարությունը հրաժարվեց ֆինանսավորել ծրագիրը, քանի որ երկրի տնտեսական ճգնաժամի հետևանքով պետհամալսարանի ֆինանսավորումը 2010-2014թթ. մեծ չափով նվազեցվել էր[1]: Գերմանիայում որոշվեց Բեռլինի երեք բուհերի միավորման քաղաքականությամբ հաղթահարել ճգնաժամը, ինչի հետևանքով «Բեռլինի Ազատ համալսարանի» ղեկավարությունը ֆինանսավորեց նույն համալսարանի հնդեվրոպական և համեմատական լեզվաբանության ամբիոնի հայկական բաժինը մինչև 2009-2010թթ. ավարտը[2], որից հետո բաժինը փակվեց: Ֆինանսական դժվարությունների պատճառով փակվեց նաև 1995-2009թթ. գործող Լեյդենի համալսարանի հայագիտական ամբիոնը, որի վերականգնման ուղղությամբ ՀՀ ԿԳՆ-ն որոշակի քայլեր է ձեռնարկում[3]: 2013թ. սկզբին աշխատանքները դադարեցրել է նաև Ֆրանսիայի Սփյուռքի հետազոտությունների և փաստագրության կենտրոնը (*CRDA - Centre de Recherche et de documentation de la diaspora arménienne*)[4]:

Այս ամենի հետևանքով համալսարանական կենտրոնները սկսեցին փնտրել այլընտրանքային ֆինանսական աղբյուրներ՝ աշխատանքային գործունեության ապահովման նպատակով՝ դրամաշնորհներ, հնարավոր նվիրատվություններ, համագործակցություն ֆինանսական կարողություններ ունեցող հիմնադրամների և այլ կառույցների հետ:

[1] Տեղեկությունները մեզ է տրամադրել հունգարացի հայագետ Ժիգմունդ Բենեդեկը:
[2] Գերմանիայի «Freie Universitat Berlin» համալսարանի հայագիտության բաժնի գոյատևման հարցը ոչ մի կերպ չի հաջողվում լուծել, http://www.panarmenian.net/arm/details/44753/
[3] Քննարկվել է Լեյդենի համալսարանում հայագիտական ամբիոնի վերականգնման հարցը (21.02.2014), http://www.edu.am/ArticleIndex.php?id=6566&topMenuArt=1
[4] http://www.centre-francais-fondations.org/annuaire-des-fondations/2704

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության ընդունած 2012-2025թթ. հայագիտության զարգացման ռազմավարությունում հատուկ կետով շեշտադրվում է արտերկրում հայագիտական կենտրոնների պահպանման և զարգացման անհրաժեշտությունը, ՀՀ մի շարք կառույցներ արտերկրի հայագիտական կենտրոններում առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկեցին համապատասխան քայլեր։

Վերջին տարիներին ԿԳՆ ջանքերով իրագործվել են մի շարք ծրագրեր՝ Եվրոպայի հայագիտական կենտրոնների պահպանման և վերաբացման ուղղությամբ։ Մասնավորապես, ԿԳՆ-ն գերմանական ակադեմիական ծրագրերի աջակցությամբ 120 հազար եվրոյի դրամաշնորհ է ստացել՝ Մարտին Լյութերի անվան Հալլե Վիտենբերգ համալսարանի Մեսրոպ հայագիտական հետազոտությունների կենտրոնի պահպանման նպատակով, վերագործարկել է Բուխարեստի համալսարանի հայագիտական կենտրոնը[1]։

Չնայած առկա դժվարություններին, Եվրոպայում բացվում են նոր կենտրոններ։ Մասնավորապես, Ռումինիայի հեղինակավոր Կլուժ-Նապոկայի Բաբեշ-Բոյայ համալսարանում 2014թ. հիմնադրվել է Հայագիտության ինստիտուտը[2], իսկ Չեխիայում Հայաստանի դեսպանության և Պրահայի Կարլի համալսարանի միջև կնքված համաձայնագրով վերսկսվել է հայագիտական առարկաների դասավանդումը, որին ՀՀ ԿԳՆ

[1] ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հարցազրույցը «Առաջին լրատվական» էլեկտրոնային կայքին, (08.06.2012), http://www.edu.am/index.php?id=5653&topMenu=-1&menu1=205&menu2=205&arch=0

[2] Ռումանիոյ մէջ՝ հայագիտութեան հարուստ աւանդութիւնները վերականգնելու փորձեր, http://asbarez.com/arm/197332/

առաջարկով ֆինանսապես օժանդակելու որոշում է կայացրել ՀՀ կառավարությունը[1]:

Եվրոպայի տարբեր երկրներում հայագիտական կենտրոնները ֆինանսավորում են ստանում նաև Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամից[2], այլ համազգային կառույցներից՝ ուսումնակրթական, գիտական ծրագրերի, հետազոտությունների, հրատարակությունների, գիտաժողովների անցկացման համար:

Եվրոպայի հայագիտական բոլոր հաստատությունները մնացած հարցերում ունեն միևնույն խնդիրները, որոնց մասին համալիր կերպով կխոսվի վերջին գլխում:

Հարկ է նկատել, որ Եվրոպայում հայագիտական հաստատությունների մեծ մասը կիբեռտարածությունում ներկայացված չէ: Դրանց գոյության մասին տեղեկությունները մեկ կամ երկու հաղորդագրություններում են նշված: Որոշ կենտրոններ չունեն կայքեր, օրինակ՝ Հայկական ուսումնասիրությունների Սայաբալիան և Հայկական հետազոտությունների Միջերկրածովյան ինստիտուտները, եղած կայքերը չեն թարմացվում նոր նյութերով (օր.՝ Կոպենհիկոսի համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոն, Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն), որոշ հայագիտական կառույցնե-

[1] Պրահայի Կարլի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում վերաբացվեցին հայագիտության առարկաները (16.09.2014), http://www.mfa.am/hy/press-releases/item/2014/09/16/prague_university/

[2] Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի՝ մի քանի տասնամյակ հայագիտության զարգացմանը ցուցաբերած ֆինանսական և այլ աջակցության վերաբերյալ տե՛ս *Ղարախանյան Վ.,* «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006թթ., Երևան, 2008, էջ 191-208, *Կ.Դալլաքյան,* Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը (Կեսդարյա հոբելյանի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թիվ 3, էջ 3-22:

րի կայքերում չկան գործունեության, կրթական ծրագրերի, դասախոսական, հետազոտական անձնակազմի, հրատարակությունների և հաստատության աշխատակարգի ձևի և բովանդակության վերաբերյալ տվյալներ։

Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին, որոշ կառուցվածքային փոփոխություններին, մի շարք հայագիտական ամբիոններ և կենտրոններ կարողանում են պահպանել Եվրոպայի դասական հայագիտության ավանդույթները և փորձում հնարավորինս զարգացնել դրանք։ Ամփոփելով նշենք, որ հայագիտական կենտրոնների, ամբիոնների առումով Եվրոպայում առաջատար դիրքերում են Իտալիան և Ֆրանսիան։

2.3 Մերձավոր Արևելք

Ներկայումս հայագիտական կենտրոններ գործում են Մերձավոր Արևելքի հետևյալ երկրներում՝ Իրանում, Իսրայելում, Կիպրոսում, և արաբական երկրներում՝ Լիբանան, Սիրիա, Եգիպտոս։

ԻՐԱՆ։ Իրանում գործում են երեք հայագիտական կենտրոններ՝ Թեհրանի համալսարանի, Թեհրանի Իսլամական ազատ համալսարանի և Սպահանի համալսարանի հայագիտական կենտրոնները։ Այսպիսով, Իրանում հայագիտությունը զարգանում է ակադեմիական շրջանակներում՝ համալսարաններում։

ԻՍՐԱՅԵԼ։ Իսրայելում հիմնական հայագիտական կենտրոնը Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտության ծրագիրն է։ Այն ստեղծվել է 1967թ.։ Ծրագիրը գործում է համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմում։ Նրա շրջանակներում դասավանդում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի դասախոսներ։ Ծրագիրը գիտակրթական գործունեություն է ծավալում հայագիտության ամենատարբեր բնագավառներում (լեզու, մշակույթ, պատմություն և այլն)։ Նրա շրջանակներում դասավանդվում է նաև վրացերեն։

Բացի ակադեմիական այս հաստատությունից, հայագիտական հետազոտություններով զբաղվում են նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանում։ Այստեղ իրականացվում են հայագիտական հետազոտություններ, կազմակերպվում դասախոսություններ և այլն։ Այսպիսով, հայագիտությունն Իսրայելում զարգանում է ակադեմիական և եկեղեցական շրջանակներում։

ՍԻՐԻԱ։ Չնայած հայ-արաբական դարավոր քաղաքական, տնտեսական, կրթամշակութային շփումներին, արաբական աշ-

խարհում ակադեմիական շրջանակներում հայագիտությունը զարգացած չի եղել: Արաբական երկրների համալսարաններում չեն եղել հայագիտական ամբիոներ կամ այլ կառույցներ: Լավագույն դեպքում եղել են անհատ հայագետներ, որոնք անհատական մակարդակով իրականացրել են հայագիտական հետազոտություններ: Այդպիսի անհատ հայագետներից են եղել Հասան Հաֆիզը՝ Եգիպտոսից, Նիզար Խալիլին, Մրվուան Մուդավարը՝ Սիրիայից և ուրիշներ[1]:

Միայն Հայաստանի անկախացումից հետո ՀՀ դիվանագիտական ջանքերի շնորհիվ փորձ արվեց լրացնել ակադեմիական կառույցներում հայագիտության բացակայության կամ թույլ լինելու բացը: ՀՀ արտաքին քաղաքականության, հայաստանյան ակադեմիական կառույցների արտաքին կապերի զարգացման շնորհիվ, ինչպես նաև Սփյուռքի ջանքերով սկիզբ դրվեց ինչպես աշխարհի տարբեր երկրների, այնպես էլ արաբական երկրների համալսարաններում հայագիտական կենտրոնների բացման գործընթացին: Սիրիայում ՀՀ դեսպանության ակտիվ ջանքերի շնորհիվ Հալեպի համալսարանում 2008թ. բացվեց հայոց լեզվի ուսուցման կենտրոն[2]:

ԵԳԻՊՏՈՍ: Եգիպտոսում Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ 2007թ. Հայագիտության կենտրոն բացվեց Կահիրեի համալսարանի Արվեստի ֆակուլտետի կազմում[3]:

[1] Հարցազրույց Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի հետ, *Փաշայան Ա., Հարությունյան Լ.,* Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, էջ 42:

[2] Նույն տեղում:

[3] New Armenian Studies Center in Cairo, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=356hlg14

Ցավոք, արաբական աշխարհում ակադեմիական կառույցների շրջանակներում հայագիտական կենտրոնների հիմնման և զարգացման գործընթացին ծանր հարված հասցրեց 2011թ. սկսված «արաբական գարունը», որը, փոթորկելով արաբական երկրների կյանքը, խաթարեց նաև գիտակրթական ոլորտի գործունեությունը։ Եթե Եգիպտոսում մոտ երկու տարի տևած փոթորկալից իրադարձությունները հարաբերականորեն հանդարտվեցին այնտեղ վերջին նախագահական ընտրություններից հետո[1], ապա Սիրիան դեռևս դուրս չի եկել և հայտնի էլ չէ, թե երբ դուրս կգա փոթորկահույզ իրադարձությունների հորձանուտից։ Այսպիսով, արաբական երկրներում ծավալվող հեղափոխական իրադարձությունները, խաթարելով այդ երկրների գիտակրթական կյանքը, ինչպես նաև արտաքին հարաբերությունները, մեծ խոչընդոտ են հանդիսանում այդ երկրներում ակադեմիական կառույցների շրջանակներում հայագիտության զարգացման ճանապարհին։

ԼԻԲԱՆԱՆ։ Թեև արաբական երկրներում ակադեմիական կառույցների մակարդակով հայագիտության զարգացմանը վերջին ժամանակներս է զարկ տրվել, սակայն այդ երկրներում ավանդաբար եղել է հայագիտություն և զարգացել է հայ համայնքների շրջանակներում։ Հայ համայնքի մակարդակով հայագիտական կենտրոններ արաբական երկրներում գործում են հայկական եկեղեցական հաստատությունների և համազգային

[1] Իրավիճակի ապակայունացման վտանգը դեռ չի վերացել, քանի որ արաբական երկրներում ծավալվող հեղափոխական ալիքը հարևան երկրներում տարածվելու հատկություն ունի։ Եգիպտոսի պարագայում իրավիճակի ապակայունացման գործոն են հանդիսանում հարևան Լիբիայում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք կարող են ազդել այդ երկրի վրա։

կառույցների տեղական մասնաճյուղերի շրջանակներում։ Հոգևոր-եկեղեցական կառույցները, որտեղ գործում են հայագիտական կենտրոններ և զարգանում է հայագիտությունը, Մերձավոր Արևելքում գործող հայկական երեք համազգային եկեղեցիներն են՝ Հայ Առաքելական եկեղեցին՝ ի դեմս Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Հայ Կաթողիկե եկեղեցին՝ ի դեմս Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանի, ինչպես նաև Հայ Ավետարանական եկեղեցին։ Իսկ համազգային կառույցներից, որոնց շրջանակներում գործում են հայագիտական կենտրոններ Մերձավոր Արևելքում, նշանավոր է Համազգային Հայ կրթական և մշակութային միությունը։ Հայտնի է Բեյրութի Համազգային հայ կրթական ու մշակութային միության հայագիտական բարձրագույն հիմնարկը։

Այսպիսով, ինչպես երևում է վերոգրյալից, արաբական երկրներից հայկական համայնքային և համազգային կառույցների շրջանակներում հայագիտությունը զարգանում է հիմնականում Լիբանանում, ինչը պայմանավորված է երկու հանգամանքով.

1. Լիբանանը եթե ոչ ամբողջ Սփյուռքի, ապա նվազագույնը մերձավորարևելյան հատվածի կենտրոնն է։ Այստեղ են կենտրոնացված համազգային և տարածաշրջանային (մերձավորարևելյան) հայկական կազմակերպությունների կենտրոնները։ Այսպես, Սփյուռքի մի զգալի հատվածի, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի հայության մեծ մասի՝ հայ առաքելականների շերտի գլխավոր հոգևոր-եկեղեցական կառույցը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկո-

սությունը, գտնվում է Անթիլիասում: Ողջ Սփյուռքի հայ կաթողիկեների գլխավոր հոգևոր-եկեղեցական կենտրոնը՝ Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանը, նույնպես գտնվում է Լիբանանում: Թեև Հայ Ավետարանական եկեղեցին չունի միասնական նվիրապետություն, սակայն ունի հայ ավետարանականներին միավորող հինգ տարածաշրջանային կառույց: Դրանցից մեկի՝ Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության գրասենյակը գտնվում է Բեյրութում:

2. Թեև Լիբանանն իր ողջ պատմության ընթացքում քիչ չի տուժել ներքաղաքական ցնցումներից[1], ինչպես նաև արաբա-իսրայելական հակամարտություններից, այնուամենայնիվ, «արաբական գարունը» կարծես թե առայժմ հիմնականում շրջանցում է Լիբանանը[2]: Համեմատաբար խաղաղ կյանքը և կայուն իրավիճակը Լիբանանում թույլ են տալիս հայկական կառույցների շրջանակում գործող հայագիտական կենտրոններին շարունակել իրենց հետազոտական և կրթական գործունեությունը: Թեև Լիբանանում փոթորկահույզ իրադարձությունների ծավալման «ներուժ» կա՝ կապված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների հետ, այնուամենայնիվ, հուսանք, որ այդ երկրում հարաբերական կայունությունը կպահպանվի և հայագիտական կենտրոններն էլ կշարունակեն իրենց գործունեությունը:

[1] Դրանց մեջ ամենանշանավորը 1975-1990թթ. լիբանանյան քաղաքացիական պատերազմն էր:

[2] Թեև այս ընթացքում այդ երկրում նույնպես նկատվել են բռնությունների և ապակայունացման դրսևորումներ:

Վերը, երբ խոսվում էր արաբական երկրների ակադեմիական կառույցների շրջանակներում հայագիտական կենտրոնների գործունեության մասին, շրջանցվեց մի շատ կարևոր կենտրոն։ Խոսքը Բեյրութի Հայկազյան համալսարանի մասին է, որտեղ գործում են երկու հայագիտական կենտրոններ՝ Հայագիտության ամբիոնը և Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը։ Բեյրութի Հայկազյան համալսարանի յուրահատկությունն այն է, որ այն, մի կողմից, ակադեմիական կառույց է, լիբանանյան բարձրագույն ուսումնական հաստատություն, սակայն մյուս կողմից՝ ոչ թե արաբական (լիբանանյան) հաստատություն է, այլ՝ հայկական։ Համալսարանը պատկանում է Հայ Ավետարանական եկեղեցուն։ Այդ է պատճառը, որ արաբական երկրների ակադեմիական կառույցների շրջանակներում հայագիտական կենտրոնների գործառնության և հայագիտության զարգացման մասին խոսելիս չանդրադարձանք Բեյրութի Հայկազյան համալսարանին։ Նպատակահարմար է նրան անդրադառնալ հայ համայնքային և համազգային կառույցների շրջանակում հայագիտության զարգացման և հայագիտական կենտրոնների գործունեության մասին խոսելիս։

Հարկ է ընդգծել, որ Բեյրութի Հայկազյան համալսարանը միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է Սփյուռքում։ Այն թեև պատկանում է Հայ Ավետարանական եկեղեցուն (հիմնադրվել է Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության կողմից 1955թ.), սակայն իր գործունեությամբ ունի համազգային նշանակություն հայության համար։ Այստեղ ուսանելու են գալիս հայ երիտասարդներ ոչ միայն Լիբանանից, այլև

այլ երկրներից։ Նույն կերպ համալսարանի շրջանավարտները հետագայում իրենց գործունեությունը ծավալում են ոչ միայն Լիբանանի, այլև այլ երկրների հայ համայնքներում և համազգային կառույցներում։ Ավելին, Բեյրութի Հայկազյան համալսարանը՝ որպես կրթական հաստատություն, ունի նաև միջազգային նշանակություն, քանի որ այնտեղ, բացի հայերից, ուսանելու են գալիս նաև այլազգի ուսանողներ։

Բեյրութի Հայկազյան համալսարանի համազգային նշանակությունը երևում է ևս երկու հանգամանքով։ Նախ՝ համալսարանը, հիմնված լինելով Հայ Ավետարանական եկեղեցու կողմից և պատկանելով վերջինիս, այնուամենայնիվ, ինչպես նշում է համալսարանի նախագահ, վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոստյանը, ֆինանսապես անկախ է նրանից։ Դա արվել է համալսարանի անկախության առավելագույն մակարդակը և համազգային բնույթն ապահովելու նպատակով[1]։

Հաջորդ փաստը, որը վկայում է Բեյրութի Հայկազյան համալսարանի գործունեության համազգային բնույթի մասին, այն է, որ համալսարանի ինչպես պրոֆեսորադասախոսական կազմում, այնպես էլ վարչական աշխատողների շրջանում, բացի հայ ավետարանականներից, մեծ է նաև հայ առաքելականների և կաթողիկեների թիվը։ Մասնավորապես, համալսարանի գիտակրթական գործունեության ապահովման մեջ իրենց նշանակալի դերն ունեն այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, որը համալսարանում հանդես

[1] Հատկանշական է, որ նույն՝ համալսարանի անկախության ապահովման նպատակով բուհի ղեկավարությունը մերժել է նաև Լիբանանի կառավարության ֆինանսական աջակցությունը, որպեսզի համալսարանի գործերին պետական մարմինների հետագա միջամտությունների տեղիք չտա։

է գալիս դասախոսություններով, և հայ կաթողիկե վարդապետ Անդրանիկ վարդապետ Կռանյանը, որը համալսարանի կողմից հրատարակվող Հայկազյան հայագիտական հանդեսի պատասխանատու խմբագիրն է։

Ինչ վերաբերում է հայագիտական տեսանկյունից համալսարանի գործունեությանը, ապա, միանշանակ, հարկ է նշել, որ իր երկու կառուցվածքային օղակների՝ Հայագիտության ամբիոնի և Հայկական Սփյուռքի ուսումնասիրությունների կենտրոնի գործունեության շնորհիվ այն հանդիսացել և այսօր էլ հանդիսանում է աշխարհի նշանավոր հայագիտական կենտրոններից մեկը[1]։

Այսպիսով, Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական կառույցների գործունեությունը հանդիսանում է արաբական երկրներում ակադեմիական կառույցների և հայկական համազգային կառույցների շրջանակում հայագիտության զարգացման համադրություն, քանի որ համալսարանը միաժամանակ և՛ լիբանանյան ակադեմիական կառույց է, և՛ պատկանում է համազգային հայկական կառույցի՝ Հայ Ավետարանական եկեղեցուն։

ԿԻՊՐՈՍ։ Մյուս երկիրը Մերձավոր Արևելքում, որտեղ ներկայումս գործում է հայագիտական կենտրոն, Կիպրոսն է։ Հարկ է նշել, որ այստեղ ակադեմիական կառույցների մակարդակով հայագիտությունը զարգացած չէ։ Չկան համալսարանական հայագիտական կենտրոններ։ Կիպրոսում հայագիտությունը զարգանում է միայն հայ համայնքի շրջանակում։ Հայագիտությունը Կիպրոսում ունի իր առանձնահատկությունները։

[1] Բեյրութի Հայկազյան համալսարանի մասին մանրամասն տե՛ս *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 42-51։

Այն չի զարգանում համազգային կամ համայնքային կառույցներին կից հայագիտական կենտրոններում: Այստեղ գործում է մեկ առանձին հայագիտական կենտրոն՝ Հայկական հետազոտությունների կենտրոնը: Այն հիմնադրվել է 1995թ.՝ Վարդան Մալյանի անհատական նախաձեռնությամբ, որն էլ կենտրոնի ղեկավարն է և իրականացնում է հիմնական հետազոտական աշխատանքները: Կենտրոնը հիմնականում զբաղվում է Հայոց ցեղասպանության փաստագրման և Կիպրոսի հայ համայնքի համար կարևոր կիրառական խնդիրներով[1]:

Մերձավորարևելյան երկրներում հայագիտական կենտրոնների հիմնումը կապված է հիմնականում հետևյալ հանգամանքների հետ.

1. Հայկական համայնքների առկայություն: Մերձավոր Արևելքը հայկական համայնքներով առատ տարածաշրջան է: Սակայն այն նաև տարբերվում է Սփյուռքի մյուս գաղթօջախներից այլ հատկանիշներով, մասնավորապես՝ իր հայեցիությամբ: Մերձավոր Արևելքի հայ համայնքներն առավել նախանձախնդիր են ազգային ինքնության հատկանիշների՝ լեզու, կրոն, մշակույթ, պատմական հիշողություն և այլն, պահպանման գործում: Դրա հիմքում ընկած են ներքին և արտաքին հանգամանքները, մասնավորապես՝ այդ համայնքների՝ անմիջապես Հայոց ցեղասպանության հետևանքով ձևավորվածության հանգամանքը, աշխարհագրական մերձավորությունը պատմական հայրենիքին և այլն: Պատահական չէ, որ Մերձավոր Արևելքի, հատկապես Լիբանանի և Սիրիայի հայությունը մասնագետների կողմից ընկալվում է որպես արևմտահայ մշակութային-լեզվա-

[1] Armenian Center in Cyprus, http://www.azg.am/EN/2001052507

կան-քաղաքակրթական կոդի կրող, քանի որ արևմտահայ լեզուն, մշակույթը, քաղաքակրթությունը հնարավորինս անխառն ձևով պահպանվել են հենց այս համայնքներում։

Ի թիվս այլ հանգամանքների՝ Սփյուռքում հայագիտական կենտրոնների գործունեությունն իմաստավորվում է նաև հայկական համայնքների համար գործիչներ և դպրոցների համար մանկավարժներ պատրաստելու հրամայականով։ Սա առավել ևս վերաբերում է Մերձավոր Արևելքի հայ համայնքներին։ Առանց անհրաժեշտ մանկավարժական կադրերի, ակնհայտ է, որ հայկական դպրոցներն ու վարժարանները չեն կարող լիարժեք գործել և արդյունավետ իրականացնել իրենց առաքելությունը։ Առանց ազգային բարձր ինքնագիտակցությամբ օժտված և բանիմաց ղեկավար գործիչների նույնպես արտերկրի հայ համայնքները կդադարեն համայնք լինել, կվերածվեն զուտ ազգությամբ հայ մարդկանց խմբերի (հավաքականությունների), որոնց ուծացումը և կորուստը հայության համար զուտ ժամանակի հարց է։

2. Հայկական և մերձավորարևելյան ժողովուրդների գիտական և մշակութային կապերի սերտացման ձգտում։ Մերձավոր Արևելքում հիմնված հայագիտական կենտրոններն իրենց գործունեությամբ նպաստում են հայկական և արևելյան քաղաքակրթությունների, մշակույթների և գիտությունների ներթափանցմանը։ Մասնավորապես, Իրանում հիմնադրված հայագիտական կենտրոնները մեծ նպաստ են բերում հայ-իրանական մշակութային և գիտական կապերի ամրապնդմանը և խորացմանը։ Նույնը կարելի է ասել արաբական երկրներում հիմնված

հայագիտական կենտրոնների մասին՝ հայ-արաբական մշակութային երկխոսության և գիտական կապերի սերտացման առումով։ Օրինակ՝ հայկական գրական ժառանգության թարգմանությունները պարսկերեն կամ արաբերեն և հակառակը, չի կարող չնպաստել հայ-արաբական և հայ իրանական գրական կապերի խորացմանը։ Նույնը կարելի է ասել պատմագիտական ժառանգության մասին և այլն։

3. Մերձավորարևելյան երկրներում գիտության զարգացման քաղաքականությունը։ Մերձավոր Արևելքի երկրներում հայագիտությունը կարևոր դեր ունի գիտության զարգացման գործում։ Հայագիտության ոլորտում արձանագրված գիտական նվաճումներն էական արժեք են ներկայացնում արաբագիտական, իրանագիտական և այլ ոլորտների գիտական հետազոտությունների և բացահայտումների տեսանկյունից։

Օրինակ՝ հայոց լեզվի, մասնավորապես՝ հին հայերենի՝ գրաբարի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հին իրաներենի հետ լեզվական կապերը բացահայտելու և ընդհանրապես հնդեվրոպական լեզուների համեմատության շրջանակում՝ այդ երկու լեզուները հետազոտելու տեսակետից։ Բացի այդ, իրանական պատմագրության համար որպես սկզբնաղբյուր արժեքավոր է 5-րդ դարում ստեղծված Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Փավստոս Բուզանդի և վաղ միջնադարի մյուս պատմիչների թողած գրական ժառանգությունը։ Իրանական պատմագրության համար կարևոր արժեք են ներկայացնում նաև հետագա դարերի հայկական աղբյուրները՝ ընդհուպ մինչև Առաքել Դավրիժեցի (17-րդ դար)։ Կրոնագիտության առումով՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկը «Պարսկաստանում և հա-

րակից երկրներում տարածված զրվանական ուսմունքի ուսումնասիրության հիմնական աղբյուրներից է»[1]:

Նույնը գրեթե վերաբերում է նաև արաբագիտությանը: Ընդհանուր առմամբ, պատմության ընթացքում այնքան սերտ են եղել հայ-իրանական և հայ-արաբական հարաբերությունները, որ առանց հայագիտության թերի կլինեին ինչպես իրանագիտությունը, այնպես էլ արաբագիտությունը:

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները, ըստ պատկանելության, կարելի է դասակարգել երկու խմբի՝ ոչ հայկական և հայկական:

- *Ոչ հայկական են* այն հայագիտական կենտրոնները, որոնք գործում են տարբեր համալսարանների կառուցվածքում: Այդպիսի կենտրոններ են Թեհրանի, Սպահանի (Իրան), Երուսաղեմի (Իսրայել), Կահիրեի (Եգիպտոս) և Հալեպի (Սիրիա) համալսարանների հայագիտական կենտրոնները: Բացառություն են կազմում միայն Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնը և Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը: Չնայած այս խմբի կենտրոնների ոչ հայկական պատկանելությանը, պետք է նշել, որ ոչ հայկական պատկանելություն ասվածն այս հարցում հարաբերական է, քանի որ Մերձավոր Արևելքի համալսարանների շատ հայագիտական ստորաբաժանումներ ստեղծվել և պահվում են (ամբողջությամբ կամ մասնակիորեն) հայկական՝ սփյուռքյան և հայաստանյան միջոցների հաշվին: Օրինակ՝ Կահիրեի համալսարանի Հայագիտական ծրագիրը[2]:

[1] *Զաքարյան Ս.,* նշվ. աշխ., էջ 10:
[2] New Armenian Studies Center in Cairo, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=356hlg14

- *Հայկականն* այն կենտրոններն են, որոնք պատկանում են Հայկական համազգային կառույցներին։ Դրանք գործում են Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանի, Հայ Ավետարանական եկեղեցու և Համազգային Հայ կրթական և մշակութային միության շրջանակներում։ Այս խմբին կարելի է դասել նաև այն առանձին հայագիտական կենտրոնները, որոնք, մաս չկազմելով որևէ հայկական կառույցի, հանդիսանում են ինքնուրույն հաստատություններ։ Այդպիսի միակ կառույցը Մերձավոր Արևելքում Նիկոսիայում (Կիպրոս) գործող Հայկական հետազոտությունների կենտրոնն է։

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները կարելի է դասակարգել նաև ըստ մակարդակների։ Այդ կերպ հայագիտական կենտրոնները բաժանվում են համալսարանական, համայնքային և անհատական խմբերի։ Համալսարանական հայագիտական կենտրոնները նրանք են, որոնք ստեղծվել և գործում են համալսարանների կառուցվածքում։ Համայնքային հայագիտական կենտրոնները նրանք են, որոնք գործում են հայկական համազգային կառույցների շրջանակներում։ Նշենք, որ Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնը և Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը միաժամանակ դասվում են և՛ համալսարանական, և՛ համայնքային հայագիտական կենտրոնների շարքին, քանի որ համալսարանը, լինելով Լիբանանի բուհերից մեկը, միաժամանակ հայկական կառույց է։ Եվ վերջապես, անհատական մակարդակում գտնվող հայագիտական կենտրոնները (գործնականում՝ միակը) նրանք

են, որոնք, չպատկանելով որևէ կառույցի, ինքնուրույն կամ առանձին հաստատություններ են։

Մեկ այլ՝ ստեղծման ժամանակագրության չափանիշով Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները կարելի է բաժանել հետևյալ երեք խմբերի՝ ավանդական, նոր և նորագույն։

Ավանդական հայագիտական կենտրոններն են Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքության և Երուսաղեմի Հայոց պատրիարքության կառուցվածքում ավանդաբար գործող հայագիտական կառույցները։ Այս հոգևոր-եկեղեցական հաստատություններն իրենց հիմնման ժամանակից ի վեր միայն կրոնական հաստատություններ չեն եղել։ Դրանք եղել են նաև գիտակրթական և մշակութային կենտրոններ՝ զարկ տալով հայագիտության զարգացմանը։ Հետևաբար, այդ եկեղեցական կառույցներում ավանդաբար զբաղվել են հայագիտությամբ։

Նոր հայագիտական կենտրոնները հիմնվել են 20-րդ դարի կեսերին։ Դրանք են Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոնը, Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտության ծրագիրը, Սպահանի համալսարանի Հայագիտության ամբիոնը և այլն։ Այս խմբին կարելի է դասել նաև հոգևոր-եկեղեցական կառույցներին (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն և Զմմառի Հայ Կաթողիկե միաբանություն) և Համազգային Հայ կրթական և մշակութային միությանը կից գործող այն հայագիտական կենտրոնները, որոնք հիմնվել են 20-րդ դարի կեսերին։

Եվ վերջապես, նորագույնների շարքին են դասվում այն հայագիտական կենտրոնները, որոնք սկսել են հիմնադրվել 1990-ականներից առայսօր։ Այդպիսի կենտրոններ են Թեհրանի Իսլամական ազատ համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը (հիմնվել է 1995թ.), Կահիրեի համալսարանի Հայագիտական ամբիոնը (2007թ.), Հալեպի համալսարանի Հայագիտական ամբիոնը (2008թ.)։ Նորագույն հայագիտական կենտրոն է նաև Նիկոսիայում 1995թ. հիմնադրված Հայկական հետազոտությունների կենտրոնը։

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների գործունեության մեջ կարելի է առանձնացնել չորս հիմնական ուղղություն՝ գիտահետազոտական, կրթական, գիտաժողովների և այլ գիտական հավաքների կազմակերպման և հրատարակչական։

Հայագիտական կենտրոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ամփոփվում են մենագրությունների, հոդվածների, զեկույցների, ինչպես նաև ավարտաճառերի, մասնավորապես՝ մագիստրոսական թեզերի և ատենախոսությունների մեջ։ Օրինակ՝ Սպահանի համալսարանի Հայագիտական ամբիոնի՝ որպես հայագիտական հետազոտական կառույցի, զարգացման մասին է վկայում այնտեղ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բացումը։ Այդ ամբիոնում պաշտպանվող մագիստրոսական թեզերը և դոկտորական ատենախոսությունները համարվում են գիտական հետազոտություններ։ Դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվում նաև Բեյրութի Հայկազյան համալսարանում։ Օրինակ՝ Զավեն Մսրլյանի «Հայերի մասնակցությունը Լիբանանի խորհրդարա-

նական ընտրություններին 1934-2009թթ.» դոկտորական ատենախոսությունը:

Հետազոտական աշխատանքի յուրահատուկ ուղղություն է փաստագրությունը՝ տարբեր խնդիրների (Հայոց ցեղասպանություն և այլն) վերաբերյալ փաստերի և փաստաթղթերի, իրեղեն ապացույցների հավաքումը, առկա և կորսված գույքի հաշվառումը և այլն: Այդպիսի փաստագրական աշխատանքով զբաղվում է, մասնավորապես, Նիկոսիայի Հայկական հետազոտությունների կենտրոնը (Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստերի և փաստաթղթերի հավաքում և հաշվառում, Կիպրոսի՝ Թուրքիայի կողմից գրավված հատվածում հայկական շինությունների և գույքի ցուցակագրում[1]):

Կրթական գործունեությունը բնորոշ է այն հայագիտական կենտրոններին, որոնք գործում են գիտակրթական հաստատությունների կառուցվածքում կամ իրենք են հանդիսանում նման կառույցներ: Այդպիսի գործունեությամբ զբաղվում են Կահիրեի, Սպահանի և այլ համալսարանների հայագիտական կենտրոնները, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության և Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքության դպրեվանքերը:

Գիտաժողովների և այլ գիտական հավաքների (կլոր սեղաններ, աշխատաժողովներ և այլն) կազմակերպմամբ և դրանց ակտիվ մասնակցությամբ առավելապես զբաղվում են Մերձավոր Արևելքի առավել կայացած հայագիտական կենտրոնները: Օրինակ՝ հայագիտական միջազգային գիտաժողովներ է կազմակերպել Սպահանի համալսարանի Հայագիտական ամբիոնը: Գիտական տարատեսակ հավաքների կազմակերպման

[1] Armenian Center in Cyprus, http://www.azg.am/EN/2001052507

և դրանց մասնակցության մեծ փորձ ունի նաև Բեյրութի Հայկազյան համալսարանը, որի Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոնն անցկացնում է ամենամյա գիտաժողովներ։

Հրատարակչական գործունեությամբ իրականացվում է երեք տիպի գործողություն՝ գրքերի հրատարակություն, ամսագրերի հրատարակություն, տարբեր ժողովածուների հրատարակություն։ Գրքերը հրատարակվում են որպես հետազոտությունների արդյունք հանդիսացող անհատական և կոլեկտիվ մենագրություններ, դասագրքեր և այլ ուսումնական ձեռնարկներ։ Օրինակ՝ վերջին տարիներին Բեյրութի Հայկազյան համալսարանը հրատարակել է հետևյալ գրքերը.

- Dr. Zaven Messerlian, Armenian participation in the Lebanese Legislative Elections 1934-2009, Beirut, 2014.
- Հաճնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ, կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Անդրանիկ Տագէսեան, Պէյրութ, 2013։
- Լիբանանահայ Գիրքը 1894-2012. Մատենագիտական Ցանկ, աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տագէսեան եւ Դոկտ. Արմէն Իւրնէշլեան, Պէյրութ, 2013։
- Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, Beirut, 2011. (translated into Arabic by Dr. Alexan Keshishian, Beirut 2012.)

Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոնը ծրագրում է հրատարակել լիբանանահայության և Մերձավոր Արևելքի հայ համայնքների վե-

բաբերյալ դոկտորական ատենախոսությունները։ Այս շրջանակներում, ինչպես նշում է կենտրոնի տնօրեն Ա.Տագեսյանը, արդեն հրատարակվել է Զավեն Մսրլյանի «Հայերի մասնակցությունը Լիբանանի խորհրդարանական ընտրություններին 1934-2009թթ.» վերոնշյալ անգլերեն աշխատությունը։ Դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հրատարակության առումով կենտրոնը ցանկություն ունի նաև ստեղծել Մերձավոր Արևելքի հայ համայնքների վերաբերյալ դասագրքեր։ Կենտրոնի տնօրեն Ա.Տագեսյանն անձամբ աշխատում է Լիբանանի հայ համայնքի վերաբերյալ ընդհանրական դասագրքի ստեղծման վրա։

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները որոշակիորեն զբաղվում են նաև ամսագրերի հրատարակությամբ։ Բեյրութի Հայկազյան համալսարանը 1970թ. ի վեր հրատարակում է Հայկազյան հայագիտական հանդեսը, որն աշխարհի նշանավոր հայագիտական հանդեսներից է։ Համալսարանի Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը նախատեսում է հիմնել «Հայկական Սփյուռքի մատենաշար» հրատարակությունը, որը կընդգրկի կենտրոնի կազմակերպած ամենամյա գիտաժողովների նյութերը։

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հրատարակում է «Հասկ» ամսագիրը։ Այնտեղ, բացի եկեղեցական կյանքը լուսաբանող, համայնքային կյանքին անդրադարձող նյութերից, տեղ են գտնում նաև հայագիտության տեսակետից արժեքավոր հրապարակումներ։

Հոգևոր-եկեղեցական կառույցներին կից հայագիտական կենտրոններից Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանի Դպրոցական հայագիտության զարգացման գրասենյակը հրատարակում է «Հայ մանկավարժ» ուսումնագիտական և մանկավարժական հանդեսը։

Ինչ վերաբերում է ժողովածուների հրատարակությանը, ապա Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոններն ակտիվ են իրենց կազմակերպած գիտաժողովների և գիտական հավաքների զեկույցները և այլ նյութերն առանձին ժողովածուներով հրատարակելու գործում։ Օրինակ՝ Սպահանի համալսարանի Հայագիտական ամբիոնը ժողովածուների տեսքով հրատարակել է իր կազմակերպած հայագիտական գիտաժողովների զեկույցները։ Գիտաժողովների և այլ գիտական հավաքների զեկույցների և նյութերի հրատարակությամբ ակտիվ է նաև Բեյրութի Հայկազյան համալսարանը։

Չենք կարող չանդրադառնալ Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների ֆինանսավորման խնդիրներին։ Մերձավոր Արևելքի հայ համայնքները ֆինանսապես այնքան էլ բարվոք պայմաններում չեն գտնվում՝ այլ տարածաշրջանների (Ամերիկայի, Եվրոպայի, հետխորհրդային տարածքի) հայ համայնքների համեմատ։ Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների պարագայում ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում այն հաստատությունների ֆինանսական միջոցները կամ բյուջեները, որոնց մաս են կազմում հայագիտական կառույցները, ֆինանսավորումը՝ Սփյուռքի համազգային կառույցներից և ՀՀ-ից։

Ֆինանսավորումն այն հաստատությունների բյուջեների կամ ֆինանսական միջոցների հաշվին, որոնց պատկանում են Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները, առկա է համալսարանական կենտրոնների պարագայում: Սպահանի, Թեհրանի, Հալեպի և մյուս համալսարանների հայագիտական կենտրոնները, բնականաբար, ամբողջությամբ կամ մասնակիորեն պետք է ֆինանսավորվեն այդ համալսարանների ընդհանուր բյուջեներից: Երբեմն լինում են իրավիճակներ, երբ համալսարանի ղեկավարությունը, կարևորելով հայագիտության զարգացումը տվյալ համալսարանում, գնում է լրացուցիչ զիջումների՝ հատկացնելով հավելյալ ֆինանսավորում: Օրինակ, երբ ուսուցման վճարովի համակարգի անցնելու հետևանքով Սպահանի համալսարանի Հայագիտության ամբիոնը հայտնվել էր ֆինանսական ճգնաժամի մեջ և կանգնել փակման սպառնալիքի առաջ՝ կապված ուսանողների թվաքանակի խիստ պակասի հետ, բուհի ղեկավարությունը ստանձնեց ամբիոնի ֆինանսական ծախսերը հոգալու գործը՝ հրաժարվելով ուսուցման վճարովի համակարգից:

Ինչպես հայտնի է, Սփյուռքի համազգային կառույցները նախանձախնդիր են արտերկրում հայագիտության պահպանման և զարգացման գործում: Դա ենթադրում է եղած հայագիտական կենտրոնների պահպանում, նորերի հիմնում և զարգացում: Ինչպես աշխարհի մյուս տարածաշրջաններում, Մերձավոր Արևելքում նույնպես Սփյուռքի համազգային կառույցները որոշակի ֆինանսական աջակցություն են ցուցաբերում հայագիտական կենտրոններին: Օրինակ՝ 2007թ. Հայկական բա-

ռեգործական ընդհանուր միության Եգիպտոսի մասնաճյուղը $30.000 հատկացրեց Կահիրեի համալսարանում Հայագիտական կենտրոն հիմնադրելու նպատակով։ Կամ Բեյրութի Հայկազյան համալսարանի կողմից հրատարակվող «Հայկազեան հայագիտական հանդէսը», որը, ինչպես արդեն նշվեց, աշխարհի խոշորագույն հայագիտական հրատարակություններից է, լույս է տեսնում Գալուստ Գյուլբենկյան հաստատության ֆինանսական հովանավորությամբ։

ՀՀ-ն նույնպես նախանձախնդիր է արտերկրում հայագիտության զարգացմամբ։ Այդ է պատճառը, որ ՀՀ գործադրած դիվանագիտական ջանքերի արդյունքում արտերկրի տարբեր բուհերի կազմում բացվում են հայագիտական կենտրոններ։ Այս առումով Մերձավոր Արևելքը նույնպես դուրս չի մնում ՀՀ դիվանագիտական ջանքերի ծիրից։ Մասնավորապես, Թեհրանի, Հալեպի համալսարաններում հայագիտական կենտրոնների բացումն իրականացվել է ՀՀ դիվանագիտական ջանքերի շնորհիվ։ ՀՀ նախաձեռնությամբ արտերկրի տարբեր բուհերի կազմում հայագիտական կենտրոնների բացումը և պահպանումը, բնականաբար, ենթադրում են նաև որոշակի ֆինանսական հատկացումներ ՀՀ բյուջեից՝ այդ կենտրոնների հիմնման, պահպանման և զարգացման նպատակով։

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները խիստ հազվադեպ կարող են ունենալ նաև անհատական ֆինանսավորում (այսինքն՝ ֆինանսավորման աղբյուրը մեկ անհատի ֆինանսական միջոցներն են)։ Այդպիսի ֆինանսավորմամբ գործում են հիմնականում փոքր կենտրոնները, որոնք ունեն սակա-

վաթիվ աշխատակազմ, ինչպես նաև փոքր ենթակառուցվածք։ Միևնույն ժամանակ, այդ բնույթի կենտրոնները հիմնականում ֆինանսավորվում են իրենց հիմնադիր անհատների կողմից։ Նման ֆինանսավորմամբ գործող միակ հայագիտական կենտրոնը Մերձավոր Արևելքում Նիկոսիայի Հայկական հետազոտությունների կենտրոնն է, որը գործում է իր հիմնադիր և ղեկավար Վարդան Մալյանի միջոցների հաշվին[1]։

Հարկ է նշել, որ ֆինանսական հնարավորությունների սահմանափակությունը կաշկանդում է Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների գործունեությունը։ Օրինակ՝ ինչպես մեր հարցմանն ի պատասխան նշում է Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոնի տնօրեն Ա.Տագեսյանը, կենտրոնը ֆինանսական դժվարությունների հետևանքով կանգնում է լուրջ խնդիրների առջև իր գործունեության մեջ անհրաժեշտ կադրերի ներգրավման հարցում։ Իսկ Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտական ծրագիրը վերջին շրջանում, կապված ֆինանսական խնդիրներից ածանցվող կադրային խնդիրների հետ, ստիպված է պարբերաբար փոխել առաջարկվող դասընթացների ցանկը։

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները համագործակցում են ինչպես արտերկրի այլ, այնպես էլ Հայաստանի հայագիտական կենտրոնների հետ։ Դա կարևոր նշանակություն ունի ոչ միայն այդ կենտրոնների զարգացման, այլև պահպանման և նորմալ կենսագործունեության ապահովման տեսանկյունից։ Դրա շնորհիվ է, որ լուծվում են կադրերի անբա-

[1] Նույն տեղում։

վարարության, անհրաժեշտ գիտաուսումնական նյութերի, գրականության պակասի և այլ խնդիրներ։ Հայագիտական կենտրոնների զարգացման տեսակետից համագործակցությունը կարևոր նշանակություն ունի փորձի փոխանակման, միմյանց ձեռքբերումներին հասու լինելու և այլ առումներով։

Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների՝ արտերկրի այլ, ինչպես նաև հայաստանյան հայագիտական կենտրոնների հետ համագործակցության ձևերն են հրատարակությունների փոխանակումը, մասնագետների և ուսանողների փոխանակության ծրագրերը, առանձին դասախոսությունների կամ հետազոտությունների իրականացման համար փոխադարձաբար մասնագետներ հրավիրելը, համատեղ գիտաժողովների կազմակերպումը, համատեղ հրատարակությունները և այլն։ Օրինակ՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոնը համագործակցում է ԵՊՀ Սփյուռքագիտության ամբիոնի, Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ուսումնասիրության գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի), ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրպանճյան կենտրոնի հետ։ Կենտրոնը համագործակցում է նաև ՀՀ Սփյուռքի նախարարության (հրատարակչական հարցերում) և Հայաստանի Ազգային գրադարանի հետ (գրքափոխանակության, մասնագիտական աջակցության և փորձի փոխանակման հարցերում)։ Մասնավորապես, ԵՊՀ Սփյուռքագիտության ամբիոնի հետ կենտրոնը կազմակերպել է ինքնության խնդիրներին նվիրված երկու գիտաժողով՝ 2012թ. և 2013թ.։

Երկու կենտրոններն ունեն նաև համատեղ հրատարակությունների փորձ: Կենտրոնը համագործակցության փորձ ունի նաև Հայաստանի անհատ հայագետների հետ, համագործակցում է նաև արտերկրի այլ հայագիտական կենտրոնների հետ դասախոսությունների համար մասնագետներ (հյուր բանախոսներ) հրավիրելու, կենտրոնի գիտաժողովների, Հայկազյան հայագիտական հանդեսի աշխատանքներին նրանց մասնակից դարձնելու միջոցներով:

Անհնար է չանդրադառնալ Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների հետաքրքրության ոլորտում գտնվող թեմատիկ ուղղություններին: Ա՛րդ, հայագիտական կենտրոնների հետաքրքրության ոլորտում գտնվող թեմատիկ ուղղություններն են հայ բանասիրությունը (լեզվաբանություն, գրականագիտություն), հայոց պատմությունը, հայ մշակույթն ու քաղաքակրթությունը, կրոնը, ազգագրությունը, Հայկական Սփյուռքը, հայ և այլ ժողովուրդների[1] փոխհարաբերությունները, արդի քաղաքականությունը:

Կարևորելով հայագիտության բոլոր ոլորտներում իրականացվող հետազոտությունները՝ «Նորավանք» ԳԿՀ-ին՝ որպես Հայաստանի արդի քաղաքական և այլ խնդիրներով զբաղվող «ուղեղային կենտրոնի», այնուամենայնիվ, առավել հետաքրքրում են երկու ոլորտների՝ արդի քաղաքականության և Սփյուռքի մասին հետազոտությունները, քանի որ դրանք գործնական քաղաքականության տեսանկյունից ունեն առավել մեծ կիրառական նշանակություն:

[1] Խոսքը, մասնավորապես, այն ժողովրդի մասին է, որի երկրում գտնվում է տվյալ հայագիտական կենտրոնը:

Սփյուռքի ոլորտում Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոններին հետաքրքրում են ինչպես ընդհանուր Հայկական Սփյուռքին, այնպես էլ Մերձավոր Արևելքի և մասնավորապես՝ այն երկրների հայ համայնքներին վերաբերող խնդիրները, որտեղ գտնվում է տվյալ հայագիտական կենտրոնը։ Սփյուռքի արդի հիմնախնդիրներով զբաղվում է, մասնավորապես Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոնը։ Ինչպես մեր հարցումին ի պատասխան նշում է կենտրոնի տնօրեն Անդրանիկ Տագեսյանը, կենտրոնի հետաքրքրության կիզակետում են ինքնության, համարկման, իրենց երկրների զարգացման մեջ մերձավորարևելյան հայ համայնքների սոցիալական, տնտեսական, գիտակրթական և մշակութային ավանդի, արևմտահայերենի, Սփյուռքի կյանքում լիբանանահայության տեղի ու նպաստի խնդիրները։ Որպես Լիբանանի հայ համայնքի վերաբերյալ կատարված հետազոտություն՝ Հայկազյան համալսարանում պաշտպանված դոկտորական ատենախոսություններից է, օրինակ, Զավեն Մսրլյանի «Հայերի մասնակցությունը Լիբանանի խորհրդարանական ընտրություններին 1934-2009թթ.» աշխատանքը։

Նիկոսիայի Հայկական հետազոտությունների կենտրոնը նույնպես զբաղվում է կիրառական հետազոտություններով։ Նրա հետաքրքրության ոլորտում են հայկական Սփյուռքի (տվյալ պարագայում՝ Կիպրոսի հայ համայնքի) հրատապ խնդիրները։ Կենտրոնը ստեղծել է հանձնաժողով Կիպրոսի հյուսիսային՝ Թուրքիայի կողմից գրավված հատվածում հայկական գույքի ցուցակագրման համար[1]։ Կենտրոնի ջանքերի շնորհիվ կասեցվեց Մակարավանքի քանդումը[2]։

[1] Armenian Center in Cyprus, http://www.azg.am/EN/2001052507
[2] Նույն տեղում։

Արդի քաղաքականության ուղղությամբ Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների հետազոտական և կրթական ծրագրերում գերակշռում են Հայաստանի միջազգային դրության, Հայաստանի և այլ երկրների[1] արդի քաղաքական փոխհարաբերությունների և այլ խնդիրների վերաբերյալ թեմաները։ Այս ոլորտում վերջին շրջանում հրատարակված կարևոր աշխատություններից է, օրինակ, «Ժամանակակից հայկական պետությունը միջազգային աշխարհաքաղաքականության մեջ» արաբերեն հոդվածը[2]։

[1] Հատկապես այն երկրի, որտեղ գտնվում է տվյալ հայագիտական կենտրոնը։

[2] Տաատ Պու Մալհապ Աթալլա, Ժամանակակից հայկական պետութիւնը միջազգային աշխարհագրաքաղաքականութեան մէջ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2010, էջ 311-318 (արաբերեն)։

2.4 Հետխորհրդային երկրներ

Հետխորհրդային տարածքում հայագիտական կենտրոններ գործում են հիմնականում երեք երկրներում՝ Ռուսաստանում, Ուկրաինայում և Վրաստանում։ Ընդ որում՝ այս երեք երկրներում էլ հայագիտությունն ավանդաբար եղել է զարգացած գիտաճյուղ։ Հայագիտության նկատմամբ հետաքրքրությունն այս երկրներում պայմանավորված է նաև մի շարք այլ գործոնների ամբողջությամբ, որպիսիք են.

1. *Հայկական ստվար համայնքների առկայությունը։* Ռուսաստանը, Ուկրաինան և Վրաստանը հետխորհրդային տարածքի ամենահայահոծ երկրներն են։ Ռուսաստանում հայերի թվաքանակը, ըստ ոչ պաշտոնական տվյալների, կազմում է մոտ 2.5 մլն, իսկ Ուկրաինայում և Վրաստանում՝ մի քանի հարյուր հազար՝ յուրաքանչյուր երկրում։ Ռուսաստանաբնակ հայությունը Սփյուռքի ամենամեծ համայնքն է։
2. *Այդ երկրների և Հայաստանի միջև ավանդական գիտական և մշակութային կապերը։* Վրաստանի պարագայում այս հարցում կարևոր դեր է խաղում նաև Հայաստանի հետ այդ երկրի սահմանակցությունը։
3. *Մեր տարածաշրջանում այդ երկրների ունեցած շահերը։* Այս հարցն առավելապես վերաբերում է Ռուսաստանին՝ որպես գերտերություն, և Վրաստանին՝ որպես տարածաշրջանի երկիր։

Հետխորհրդային տարածքում հայկական թեմատիկայով «զբաղվում» են նաև Ադրբեջանում գործող մի շարք կառույցներ,

սակայն հիմնականում հակահայկական քարոզչության նպատակով: Ուստի, դրանք իրականում հեռու են գիտական կառույցներ լինելուց: Դրանց գլխավոր առաքելությունը տեղեկատվական հարթությունում Ադրբեջանի արտաքին քաղաքականությանն աջակցությունն է: Ուստի, դրանք անհրաժեշտ է բնորոշել որպես «կեղծ հայագիտական կենտրոններ» կամ «հակահայագիտական կենտրոններ»:

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները կարելի է բաժանել երեք խմբի.

1. Կենտրոններ, որոնք անվանապես չեն համարվում հայագիտական կենտրոններ, սակայն դրանցում, ի թիվս այլ հետազոտությունների, իրականացվում են նաև հայագիտական (Հայաստանին և հայությանն առնչվող) հետազոտություններ: Դրանք հումանիտար ոլորտի գիտակրթական և ակադեմիական կառույցներն են: Ռուսաստանում այդպիսի կառույց է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետը: Վերջինս 2014թ. սեպտեմբերի 23-35-ը կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ «Հայկական ժառանգության գրավոր հետքերը» խորագրով: Մեկ այլ օրինակ է Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտը, որտեղ «2012-ից հայոց լեզուն հանդիսանում է պարտադիր դասավանդվող առարկա՝ որպես առաջին արևելյան լեզու, ինչն ինստիտուտի ղեկավարությունը պայմանավորում է ոչ միայն ռուսաստանաբնակ հայերի, այլև ողջ ռուսաստանյան հասարակության շրջանում հայկական մշակույթի բջիջ ձևավորելու անհրաժեշտությամբ»[1]: Վրաստանում

[1] *Саядов С.,* նշվ. աշխ., էջ 75:

այդպիսի կառույցներ են Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը, Արևելագիտության ինստիտուտը, Ձեռագրերի ինստիտուտը: Ուկրաինայում հայագիտական հետազոտություններ իրականացվում են Լվովի և Խարկովի պետական համալսարաններում:

Այս կառույցները չունեն հատուկ հայագիտական ուղղվածություն: Դրանց հետազոտական ոլորտը՝ պատմություն, արևելագիտություն և այլն, թեմատիկ առումով բավական լայն ու բազմազան է, որն իր մեջ, ի թիվս այլ թեմաների կամ բնագավառների, ընդգրկում է նաև հայագիտական՝ Հայաստանին և հայությանն առնչվող թեմաներ: Այսպիսի կառույցներում հայագիտական հետազոտությունները պայմանավորված են հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-ուկրաինական դարավոր պատմական, գիտական և մշակութային կապերով ու փոխներթափանցմամբ: Օրինակ՝ «17-18-րդ դարերում ընդլայնվում են հայ-վրացական փիլիսոփայական-մշակութային կապերը, ընդ որում՝ հայերենից վրացերեն են թարգմանվում բազմաթիվ փիլիսոփայական աշխատություններ, որոնք կարևոր դեր են խաղում վրացական փիլիսոփայության զարգացման գործում»[1]: Այս պարագայում հայագիտական հետազոտությունները կարևոր արժեք են ձեռք բերում ռուսագիտական, վրացագիտական, ուկրաինագիտական հետազոտությունների համար:

2. Գիտակրթական և ակադեմիական կառույցների շրջանակներում գործող հատուկ հայագիտական կենտրոններ: Այդպիսի կենտրոններից են, օրինակ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի Հայկա-

[1] *Զաքարյան Ս.,* նշվ. աշխ., էջ 50:

կան ֆոնդը, որտեղ իրականացվում են հայագիտական հետազոտություններ, Ուրալի պետական համալսարանի, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի, Ռյազանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնները։ Վրաստանում այդպիսի կենտրոնները երկուսն են՝ Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտական ամբիոնը և մանկավարժական ինստիտուտի հայագիտական ամբիոնը։ Ուկրաինայում այդպիսի հայագիտական կենտրոն է համարվում Կիևի համալսարանի հայագիտական ամբիոնը, որի հիմնումը կապված է ՀՀ-ում Ուկրաինայի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ա.Բոժկոյի անվան հետ[1]։

3. Գիտակրթական և ակադեմիական կառույցներից դուրս գործող հայագիտական կենտրոններ, որոնք կա՛մ առանձին կառույցներ են, կա՛մ էլ հայկական համայնքային կառույցների մաս են կազմում։ Երկու պարագայում էլ այդ հայագիտական կենտրոնները պատկանում են հայ համայնքին։ Այդպիսի կառույց է, օրինակ, Ուկրաինայի հայերի միության Հայագիտական կենտրոնը։

Այս խմբին են պատկանում նաև հասարակական կազմակերպությունների կարգավիճակ ունեցող և երկկողմ հիմունքներով ստեղծված հայագիտական կառույցները։ Դրանք առկա են միայն Ռուսատանում և իրենց անվան մեջ որպես բաղադրիչ կրում են «ռուս-հայկական» արտահայտությունը։ Այդ կենտրոններն են «Ռուս-հայկական բարեկամությունը» (2003թ.), «Ռուս-հայկական հարաբերությունների զարգացմանն աջակցության

[1] В Государственном университете Киева будет открыта кафедра арменоведения, http://www.panarmenian.net/rus/society/news/53666/

տարածաշրջանային հասարակական շարժումը» (2010թ.), «Ռուս-հայկական ռազմավարական և հասարակական նախաձեռնություններին աջակցության կենտրոնը» (2012թ.)[1]։

Այսպիսով, եթե փորձենք դասակարգել հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները պատկանելության սկզբունքով, ապա դրանք կարելի է բաժանել երեք խմբի.

1. Գիտակրթական և ակադեմիական կառույցներին պատկանող կամ նրանց մաս կազմող հայագիտական կենտրոններ, որոնց շարքին են դասվում վերը թվարկված խմբերից առաջին երկուսի մեջ մտնող հայագիտական կենտրոնները։
2. Հայ համայնքներին պատկանող հայագիտական կենտրոններ, որոնց շարքին են դասվում վերը թվարկված խմբերից երրորդի մեջ մտնող հայագիտական այն կենտրոնները, որոնք կա՛մ առանձին կառույցներ են, կա՛մ մաս են կազմում ավելի մեծ հայկական համայնքային կառույցների։
3. Որպես երրորդ խումբ առանձնանում են հասարակական հիմունքներով ստեղծված այն կառույցները, որոնք ունեն երկակի պատկանելություն՝ պատկանում են հայ համայնքներին և տվյալ երկրի քաղաքացիական հասարակությանը։

Հիմնադրման ժամանակագրության առումով հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնների նման կարելի է դասակարգել ավանդականների, նորերի և նորագույնների։

[1] *Саядов С.,* նշվ. աշխ., էջ 76։

Ավանդական են այն կենտրոնները, որոնք ունեն ավելի քան մեկդարյա պատմություն։ Դրանք, թերևս, հիմնականում Ռուսաստանի գիտակրթական և ակադեմիական կառույցների շրջանակներում գործող այն կենտրոններն են, որոնք թեև չունեն հատուկ հայագիտական անվանում, սակայն իրենց ընդհանուր հետազոտությունների շրջանակում իրականացնում են հայագիտական հետազոտություններ։ Սա պայմանավորված է երկու հանգամանքով։ Նախ՝ Ռուսաստանը տարբերվում է հետխորհրդային մյուս երկրներից նրանով, որ այստեղ ակադեմիական և գիտակրթական կառույցներն ունեն ավելի երկար պատմություն (հիմնադրվել են շատ ավելի վաղ, քան հետխորհրդային այլ երկրներում. օրինակ՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիան հիմնադրվել է 1755թ.)։ Երկրորդ պատճառն այն է, որ վաղ փուլում հայագիտությունը Ռուսաստանում զարգանում էր այլ գիտությունների (պատմություն, արևելագիտություն, կովկասագիտություն և այլն) շրջանակներում՝ չհանդիսանալով առանձին գիտաճյուղ։

Նոր հայագիտական կենտրոնները 20-րդ դարում հիմնված կառույցներն են։ Օրինակ՝ Թբիլիսիի համալսարանի հայագիտական ամբիոնը և մանկավարժական համալսարանի հայագիտական ամբիոնը։ Քանի որ խորհրդային ժամանակաշրջանում հասարակական հիմունքներով հնարավոր չէր ստեղծել գիտակրթական կառույցներ, այդ տարիներին գիտակրթական և ակադեմիական կառույցներից դուրս հայագիտական կենտրոններ չեն ստեղծվել։

Նորագույն հայագիտական կենտրոնները 1990-ական թվականներից մինչև օրս հիմնադրված կառույցներն են։ Դրանք հիմնադրվել են ինչպես ՀՀ դիվանագիտական ջանքերի և Հայաստանի գիտակրթական և ակադեմիական կառույցների արտաքին կապերի ընդլայնման արդյունքում, այնպես էլ այլ գործոնների ազդեցությամբ։ Որպես գիտակրթական կառույցների շրջանակում գործող կառույցներ՝ նորագույն հայագիտական կենտրոններից են, օրինակ, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հայագիտական կենտրոնը, Ուրալի համալսարանի հայագիտական կենտրոնը, Կիևի համալսարանի հայագիտական կենտրոնը։ Որպես համայնքային կառույց նորագույն շրջանում հիմնադրված հայագիտական կենտրոններ են «Հայագիտության կենտրոնը», *«Time to analyze»* կենտրոնը Ռուսաստանում, Ուկրաինայի հայերի միության Հայագիտական կենտրոնն Ուկրաինայում, Վիրահայոց թեմի Հայագիտական կենտրոնը Վրաստանում։ Նորագույն կառույցների շարքին են դասվում նաև Ռուսաստանում հասարակական հիմունքներով ստեղծված երկկողմ պատկանելություն ունեցող վերոհիշյալ երեք կառույցները։

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնների ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում այն գիտակրթական և ակադեմիական կառույցների բյուջեները, որոնց շրջանակում գործում են հայագիտական կենտրոնները, հայ համայնքային կառույցները, Հայաստանի պետական բյուջեն։ Քանի որ Սփյուռքի համազգային կառույցները (ՀԲԸՄ, Համազգային Հայ կրթական և մշակութային միություն և այլն) ակ-

տիվ գործունեություն չեն ծավալում հետխորհրդային երկրներում, ուստի, թերևս, այդ է պատճառը, որ այստեղ նրանց կողմից հայագիտական կենտրոնների ֆինանսավորման փաստեր չունենք։

Հարկ է նշել, որ հայագիտական կենտրոններն աջակցություն են ստանում ոչ միայն իրենց գոյությունն ապահովելու նպատակով ընթացիկ ծախսերը հոգալու, այլև կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար։ Օրինակ՝ ինչպես նշում են Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտության կենտրոնի ղեկավարները՝ ի պատասխան մեր հարցմանը, «Նիժնի Նովգորոդի հայ համայնք» հասարակական կազմակերպությունը, որ տեղական հայ համայնքի կառույցն է, աջակցում է կենտրոնին գիտաժողովների, սեմինարների կազմակերպման, հրատարակչական հարցերում։ Կամ՝ 2014թ. Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմակերպած «Հայկական ժառանգության գրավոր հուշարձանները» թեմայով գիտաժողովի անցկացմանն իրենց աջակցությունն են ցուցաբերել Սանկտ Պետերբուրգի Հայ Առաքելական եկեղեցին և Սանկտ Պետերբուրգում Հայաստանի գլխավոր հյուպատոսությունը։

Հետխորհրդային երկրներում հասարակական հիմունքներով ստեղծված և երկկողմ պատկանելություն ունեցող հայագիտական կենտրոնների ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում նաև այդ երկրների ռուսական, ուկրաինական, վրացական հասարակական և մասնավոր շրջանակների միջոցները։

Եվ վերջապես, հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնների ֆինանսավորման որոշ մասն ապահովվում է տարատեսակ դրամաշնորհային ծրագրերով։

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնների գործունեության ուղղություններն են գիտահետազոտական աշխատանքը, ուսումնական գործունեությունը, գիտաժողովների, աշխատաժողովների, կլոր սեղանների և այլ գիտական հավաքների կազմակերպումը և հրատարակչական գործունեությունը։

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոններն իրականացնում են հայագիտական տարատեսակ գիտական հետազոտություններ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, որոնք արտացոլվում են մենագրությունների, գիտավերլուծական հոդվածների, զեկույցների և այլնի մեջ։ Հայագիտական կենտրոնների գիտահետազոտական գործունեության մասին է վկայում հետխորհրդային երկրների գիտակրթական հաստատությունների շրջանակներում գործող հայագիտական կենտրոններում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի առկայությունը։ Սա վկայում է այն մասին, որ հայագիտական կենտրոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներն ամփոփվում են նաև ատենախոսությունների, մագիստրոսական թեզերի մեջ։ Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնում պաշտպանվել է չորս թեկնածուական ատենախոսություն՝ հայագիտական թեմաներով, ամեն տարի կատարվում են մագիստրոսական, դիպլոմային և բակալավրի հայագիտական հետազոտություններ։

Ուսումնական գործունեությամբ զբաղվում են հատկապես այն հայագիտական կենտրոնները, որոնք հանդիսանում են հետխորհրդային երկրների բուհերի կառուցվածքային բաղադրիչ, ինչպիսիք են, օրինակ, Թբիլիսիի համալսարանի Հայագիտական ամբիոնը, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հայագիտական կենտրոնը, Ուրալի դաշնային համալսարանի Հայագիտական ամբիոնը և այլն։ Օրինակ, ինչպես նշում են Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնի ղեկավարները՝ մեր հարցմանն ի պատասխան, կենտրոնում դասավանդվում է հայոց լեզու՝ որպես երկրորդ օտար լեզու, բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև ֆակուլտատիվ։ Կենտրոնում կարդացվում են նաև հանրային դասախոսություններ Հայաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ։

Ուսումնական գործունեությունը որոշակիորեն բնորոշ է նաև հայ համայնքներին պատկանող, ինչպես նաև հասարակական հիմունքներով ստեղծված երկկողմ պատկանելություն ունեցող հայագիտական կենտրոններին, որոնց թվում՝ հատկապես նրանց, որոնք զբաղվում են ժամանակակից կիրառական հետազոտություններով ու վերլուծություններով, այլ կերպ ասած՝ այն հայագիտական կենտրոններին, որոնք նմանվում են «ուղեղային կենտրոնների»։ Այսպիսի կենտրոններն իրենց ուսումնական գործունեությունն իրականացնում են ամառային դպրոցների, հատուկ դասընթաների, դասախոսությունների, աշխատաժողովների միջոցով։

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները զբաղվում են նաև գիտաժողովների և այլ գիտական հավաքների կազմակերպմամբ։ Կազմակերպվում են ինչպես տեղական, այնպես էլ հանրապետական և միջազգային գիտաժողովներ։ Վերն արդեն նշվել է 2014թ. սեպտեմբերի 23-25-ը Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմակերպած «Հայկական ժառանգության գրական հուշարձանները» խորագրով միջազգային գիտաժողովի մասին։ Իսկ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնն արդեն կազմակերպել է երկու միջազգային գիտաժողով հետևյալ թեմաներով՝ «Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի արտաքին քաղաքականության խնդիրներն ու հեռանկարները» (2009թ.) և «Հայաստանը քաղաքակրթությունների երկխոսությունում» (2011թ.)։ Իսկ Ռյազանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնը 2012թ. հոկտեմբերին կազմակերպել է միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ «Գիրքը՝ որպես ազգային մշակույթի հիմք. Ռուսաստան-Հայաստան-Եվրոպա» խորագրով[1]։

Հարկ է նշել, որ հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները հրատարակում են գրքեր, ժողովածուներ և պարբերական հանդեսներ։

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները հրատարակում են ինչպես անհատական և կոլեկտիվ մենագրություններ, որոնցում ամփոփված են իրականացված հետազոտությունները, այնպես էլ ուսումնական ձեռնարկներ։ Օրի-

[1] *Саядов С.,* նշվ. աշխ., էջ 76։

նակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնը հայ-ռուսական հարաբերությունների, Հայաստանի արտաքին քաղաքականության և Մերձավոր Արևելքի հայ համայնքների վերաբերյալ ունի երեք կոլեկտիվ մենագրություն[1] և մեկ անհատական մենագրություն՝ Հայ Առաքելական եկեղեցու վերաբերյալ[2]: Կենտրոնը 2014թ. հրատարակել է «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացը» ուսումնամեթոդական ձեռնարկը[3]: Որպես ուսումնական ձեռնարկ նշանավոր է նաև Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հրատարակած «Հայոց լեզուն ԱՊՀ երկրների համար» ուսումնական ձեռնարկը[4]:

Հայագիտական կենտրոնները հրատարակում են նաև գիտաժողովների ժամանակ հնչած զեկույցների ժողովածուներ: Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտության կենտրոնը ժողովածուների տեսքով հրատարակել է իր կազմակերպած վերոհիշյալ երկու միջ-

[1] *Колобов О.А., Корнилов А.А., Симонян А.Г.*, Российско-армянские отношения. Исторический опыт, стратегические вызовы и перспективы развития, Н. Новгород – Ереван, 2001, 160 с; *Асатрян Ю.С., Колобов О.А., Корнилов А.А.*, Геополитика Армении на Кавказе: генезис, историческая эволюция, перспективы, Н. Новгород-Саров, 2010, 228 с; *Егиазарян А.О., Корнилов А.А.*, Армянские общины в странах Ближнего Востока: история, идентичность, институты, Н.Новгород: Саров, 2010, 139 с.

[2] *Григорян Л.С.,* Армянский Иерусалим. Повествование паломников, Н.Новгород: Кварц, 2013, 160 с.

[3] *Корнилов А.А., Коротышев А.П., Сорокин А.С.,* Процесс формирования внешней политики Республики Армения, Практикум, Нижний Новгород, 2014, 69 с.

[4] *Комарова Р.А. и др.,* Армянский язык для стран СНГ: учебник, М, 2009.

ազգային գիտաժողովների նյութերը[1]: 2014թ. սեպտեմբերի 23-25-ը Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմակերպած «Հայկական ժառանգության գրավոր հուշարձանները» խորագրով գիտաժողովի զեկույցները նույնպես նախատեսվում է հրատարակել ժողովածուի տեսքով:

Ինչ վերաբերում է պարբերական հրատարակություններին, ապա կան հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնների կողմից հրատարակվող տարեգրքեր, ավելի հաճախ լույս տեսնող պարբերական հրատարակություններ և այլն: Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոնը 2004թ. հրատարակում է «Նաիրի» տարեգիրքը՝ Հայաստանի և Սփյուռքի մասին: Իսկ Ուկրաինայի հայերի միությունը 2013թ. նախատեսում էր հրատարակել «Բանբեր հայագիտության» *(«Вестник арменистики»)* պարբերական գիտական հանդեսը՝ նվիրված Ուկրաինայի, Մոլդովայի, Լեհաստանի և Ռուսաստանի հայ համայնքների պատմության և մշակույթի հրատապ խնդիրներին[2]:

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնների հետաքրքրության ոլորտում են գտնվում հետևյալ թեմատիկ բնագավառները՝ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատ-

[1] Проблемы и перспективы внешней политики Республики Армении и Спюрка, Материалы международной научной конференции, Нижний Новгород, 2009, 72 с; Армения в диалоге цивилизаций, Материалы международной научной конференции, 28 апреля 2011 года, Нижний Новгород, 2011, 208 с.

[2] В Украине готовится к изданию научное периодическое издание «Вестник Арменистики», http://sau.net.ua/content/v-ukraine-gotovitsya-k-izdaniyu-nauchnoe-periodicheskoe-izdanie-vestnik-armenistiki

մություն, հայ մշակույթ և քաղաքակրթություն, կրոն, ազգագրություն, հայ և այլ ժողովուրդների[1] պատմական, մշակութային, քաղաքակրթական առնչություններ, Սփյուռք, արդի քաղաքականություն։ Օրինակ՝ 2014թ. սեպտեմբերի 23-25-ը Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմակերպած «Հայկական ժառանգության գրավոր հուշարձանները» խորագրով միջազգային գիտաժողը նվիրված էր հիմնականում հայ բանասիրությանը (գրականություն, լեզվաբանություն) վերաբերող հարցերին։ Կամ ինչպես նշում են Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտության կենտրոնի ղեկավարները՝ մեր հարցմանն ի պատասխան, կենտրոնի հետաքրքրության ոլորտում են գտնվում հայ ժողովրդի և հայոց պետականության պատմությունը, Հայոց ցեղասպանության պատմությունը, Հայաստանի մշակույթը, Հայ Առաքելական եկեղեցին։

Հայկական Սփյուռքի թեմատիկայի շրջանակներում հայագիտական կենտրոնների հետազոտությունները կենտրոնանում են ինչպես առհասարակ Հայկական Սփյուռքի հիմնախնդիրների, այնպես էլ տվյալ երկրի հայ համայնքի ուսումնասիրությունների վրա, որտեղ գտնվում են այդ հայագիտական կենտրոնները։ Օրինակ՝ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտության կենտրոնի հետաքրքրության ոլորտում են գտնվում 21-րդ դարում Հայկա-

[1] Խոսքն առավելապես վերաբերում է այն ժողովուրդներին, որոնց երկրներում գտնվում են հայագիտական կենտրոնները։

կան Սփյուռքի կենսագործունեության խնդիրները, աշխարհի նշանավոր հայերը։

Արդի քաղաքականության ասպարեզում հայագիտական կենտրոններին հետաքրքրում են Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը, նրա տարածաշրջանային և միջազգային դրությունը, Հայաստանի և այն երկրների միջև հարաբերությունները, որտեղ գտնվում է տվյալ կենտրոնը։ Այս տեսակետից, օրինակ, ինչպես ի պատասխան մեր հարցմանը նշում են Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտության կենտրոնի ղեկավարները, կենտրոնի հետաքրքրության ոլորտում են գտնվում ՀՀ ներքաղաքական գործընթացները, ՀՀ արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացը, Հայաստանի արդի դիվանագիտությունը, ռուս-հայկական հարաբերությունների պատմությունն ու ժամանակակից դինամիկան։ Կենտրոնի ղեկավարները ժամանակակից հայագիտության հրատապ ոլորտներ են համարում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո Միջազգային հարաբերություններում Հայաստանի դերի փոփոխության, Հայկական Սփյուռքի խնդիրների առաջնահերթությունների, Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների զարգացման թեմատիկան։

Արդի քաղաքականության թեմատիկայով առավելապես զբաղվում են հայ համայնքային, ինչպես նաև հասարակական հիմունքներով ստեղծված երկկողմ պատկանելություն ունեցող

հայագիտական կենտրոնները։ Վերջիններս, նման լինելով «ուղեղային կենտրոների», առավել մեծ ուշադրություն են դարձնում արդի ժամանակաշրջանում հրատապ համարվող կիրառական ուսումնասիրություններին և վերլուծություններին։

Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոններն ունեն միմյանց, այլ երկրների և Հայաստանի հայագիտական կենտրոնների հետ համագործակցության որոշակի փորձ։ Հայաստանի տարբեր բուհերի հետ համագործակցության փորձ ունի, օրինակ, Ռյազանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնը[1]։ Իսկ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտության կենտրոնը հայաստանյան գիտակրթական կառույցներից համագործակցում է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի Քաղաքագիտության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հետ։ Կենտրոնը համագործակցում է նաև Ռուսաստանի և Հայաստանի մի շարք անհատ գիտնական հայագետների հետ։

Հարկ է նկատել, որ համագործակցությունն իրականացվում է հրատարակությունների, մասնագետների փոխանակման, դասախոսական և հետազոտական աշխատանքի համար փոխադարձաբար մասնագետներ հրավիրելու, համատեղ գիտաժողովների կազմակերպման, միմյանց գիտաժողովներին մասնակցության և այլ միջոցներով։

[1] *Саядов С.,* նշվ. աշխ., էջ 76։

Համատեղ գիտաժողովներ կազմակեպելու օրինակ է այն, որ 2014թ. սեպտեմբերի 23-25-ը Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կազմակերպած «Հայկական ժառանգության գրավոր հուշարձանները» թեմայով միջազգային գիտաժողովի կազմակերպմանն իրենց աջակցությունն են ցուցաբերել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան և Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելյան ձեռագրերի ինստիտուտը: Հայաստանից գիտաժողովի կազմակերպչական կոմիտեի անդամներ են եղել ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի տնօրեն Ա.Իսահակյանը, փոխտնօրեն Վ.Դևրիկյանը, նույն ինստիտուտի գրականության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Գրիգորյանը:

Հարկ է նշել, որ հետխորհրդային երկրներում հայագիտական կենտրոնների, ինչպես նաև առանձին հայագետների գործունեությունն ընդհանուր առմամբ համակարգված չէ: Չկան այդ նպատակով ստեղծված կառույցներ: Ռուսաստանում հայագիտական կենտրոնների, ինչպես նաև առանձին հայագետների գործունեությունը համակարգող կառույցի ստեղծման գաղափարը, չնայած բավական երկար ժամանակ դրված է շրջանառության մեջ, սակայն կոնկրետ գործնական քայլեր կատարելու փորձեր այդ ուղղությամբ արվում են միայն վերջերս: Փորձ է արվում Եվրոպայում գործող Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության և ԱՄՆ-ում գործող Հայագիտական ընկերության օրինակով այստեղ նույնպես ստեղծել հայագիտական կառույցների, ինչպես նաև առանձին հայագետների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ մարմին[1]:

[1] Մոսկվայում ստեղծվում է «Ռուսաստանի հայագետների ընկերությունը», http://hayernaysor.am/մոսկվայում-ստեղծվում-է-ռուսաստանի-հ/

ԳԼՈՒԽ 3
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայագիտական կենտրոնների խնդիրները

Այսօր արտերկրի հայագիտական կենտրոնների առջև կանգնած են լրջագույն խնդիրներ և մարտահրավերներ, որոնք ոչ միայն խոչընդոտում են նրանց բնականոն գործունեությանը, այլև սպառնալիքի տակ են դնում նրանց գոյությունը: Այդ խնդիրներն ունեն ֆինանսական, կադրային, գիտահետազոտական և ուսումնական նյութերի անբավարարության, գործունեության չհամակարգվածության և այլ բնույթ:

Արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսական խնդիրները պատկերացնելու համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ դրանց ֆինանսավորման աղբյուրներին: Արտերկրի հայագիտական կենտրոնները ֆինանսավորվում են հետևյալ հիմնական աղբյուրներից.

- Սփյուռքի համազգային կառույցներից (Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, ՀԲԸՄ և այլն):
- Տեղական հայ համայնքներից:
- Հայաստանից՝ ՀՀ պետական բյուջեից:
- Այն գիտական և/կամ կրթական հաստատությունների բյուջեներից, որոնց մաս են կազմում:

Վերոհիշյալի հիման վրա արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսավորման աղբյուրները կարելի է բաժանել երկու մասի՝ հայկական և օտարերկրյա։ Հայկական աղբյուրներն են ՀՀ պետբյուջեն, սփյուռքյան համազգային կառույցները և տեղական հայ համայնքները։ Օտարերկրյա ֆինանսավորման աղբյուրներն այն գիտական և/կամ կրթական հաստատությունների բյուջեներն են, որոնց մաս են կազմում հայագիտական կենտրոնները։ Հաճախ լինում է նաև ֆինանսական աղբյուրների (այդ թվում նաև հայկական և ոչ հայկական) համադրություն։

Այսպիսով, ինչպես երևում է, արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսավորման աղբյուրները հիմնականում հայկական են. մեծ մասամբ կազմում են ՀՀ և Սփյուռքի միջոցները։ Իսկ Սփյուռքի և ՀՀ միջոցներն անսահմանափակ չեն։ Արդ, ֆինանսական սղության պատճառով արտերկրի շատ հայագիտական կենտրոններ կանգնել են անգամ փակման սպառնալիքի առջև[1]։

Հաջորդ կարևոր մարտահրավերը, որ կանգնած է արտերկրի հայագիտական կենտրոնների առջև, կադրային խնդիրն է։ Հաճախ անհրաժեշտ կադրերի սղության կամ բացակայության պատճառով հայագիտական կենտրոնները չեն կարողանում լիարժեք իրականացնել իրենց գործառույթները, երբեմն մատնվում են անգործության, իսկ երբեմն էլ՝ կանգնում փակման սպառնալիքի առջև։ Օրինակ՝ Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտական ծրագիրը[2]։ Այսպիսի խնդիրներ

[1] Տե՛ս, օրինակ, Вопрос существования отдела арменоведения германского «Freie Universitat Berlin» никак не удается решить http://www.panarmenian.net/rus/details/44753/; *Սարուխանյան Ս. և ուրիշներ,* նշվ. աշխ., էջ 100-101։

[2] Տե՛ս *Սարուխանյան Ս. և ուրիշներ*, նշվ. աշխ., էջ 100-101։

ունեն նույնիսկ Եվրոպայի հայագիտական կենտրոնները։ Օրինակ՝ Իտալիայում, «երբ ամպիոնի մը վարիչը թոշակառու դարձաւ, անոր ամպիոնը ի վիճակի չեղաւ իր գործունէութիւնը շարունակել իբր բուն ամպիոն, փրոֆեսօր տիտղոսով»[1]։

Հաջորդ կարևոր խնդիրը գիտահետազոտական և ուսումնական նյութերի անբավարարությունն է։ Գտնվելով Հայաստանից հեռու՝ արտերկրի հայագիտական կենտրոնները հաճախ բախվում են դասագրքերի, անհրաժեշտ գրականության, փաստաթղթերի, արխիվային և այլ նյութերի պակասի խնդրին։

Որպես հայագիտական կենտրոնների առջև ծառացած լուրջ խնդիր կարելի է մատնանշել նաև դրանց գործունեության անբավարար համակարգվածությունը։ Միայն Եվրոպայում և ԱՄՆ-ում գործող հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունն է համակարգված։ Այդ նպատակով 1981 թվականից Եվրոպայում գործում է Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունը[2]։ ԱՄՆ-ում նույն նպատակով գործում են Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցությունը (1955թ.) և Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցությունը (1974թ.)։ Վերջերս հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունը համակարգող կառույցի ստեղծման փորձեր են արվում նաև Ռուսաստանում[3]։

Եթե Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունը (Եվրոպա) տարածաշրջանային կամ միջազ-

[1] *Գալցոլարի Վ.*, նշվ. աշխ., էջ 40։
[2] Նույն տեղում, էջ 36, 42-43։
[3] Տե՛ս Մոսկվայում ստեղծվում է «Ռուսաստանի հայագետների ընկերությունը», http://hayernaysor.am/մոսկվայում-ստեղծվում-է-ռուսաստանի-հ/

գային կառույց է, որը համակարգում է Եվրոպայի հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունը, ապա ԱՄՆ վերոհիշյալ հայագիտական ընկերակցությունները համապետական (ոչ տարածաշրջանային կամ միջազգային) կառույց են ներկայացնում, որոնց գործունեությունը տարածվում է մեկ երկրի՝ ԱՄՆ հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների վրա։ Այդպիսին պետք է լինի նաև Ռուսաստանում ստեղծվելիք հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունը համակարգող կառույցը։ Սա ինչ-որ տեղ բնական է, քանի որ ԱՄՆ-ը և Ռուսաստանը, լինելով հսկայական տարածությամբ և գիտական հաստատությունների մեծ ցանց ունեցող երկրներ, հայագիտական կենտրոնների քանակով ու տեղաբաշխվածությամբ հասնում են տարածաշրջանային կամ միջազգային մակարդակի։

Աշխարհի այլ երկրներում և տարածաշրջաններում, որտեղ գործում են հայագիտական կենտրոններ կամ քիչ թե շատ զարգացած է հայագիտությունը, հայագիտական կառույցների գործունեությունը համակարգող հաստատություններ չկան, ինչը նշանակում է, որ չկան նաև նրանց արդյունավետ փոխգործակցության և փոխօգնության մեխանիզմներ։ Մինչդեռ համակարգված փոխգործակցությունը կարող է էապես բարձրացնել հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետությունը։

Հարկ է նշել, որ, չնայած վերջին տարիներին գործադրված ջանքերին, գործունեության անբավարար համակարգվածության խնդիրն առկա է նաև հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև[1]։ Մինչդեռ Հայաստանի և արտերկրի

[1] *Հակոբյան Հ.,* նշվ. աշխ., էջ 84։

հայագիտական կենտրոնների միջև համագործակցության խորացումն ու համակարգումը մեր օրերի հրամայականն են։

Այն բխում է արդի ժամանակաշրջանում ի հայտ եկած նոր իրողություններից.

1. Ի դեմս ՀՀ-ի և ԼՂՀ-ի՝ Հայոց ազգային անկախ պետության վերածննդից, որը հայության և նրա մտավոր ներուժի համախմբման ու զարգացման կենտրոնն է։ Իսկ այդ գործում մեծ դերակատարում է վերապահված հայագիտությանը։

2. Ներկայումս հայության առջև ծառացած նոր մարտահրավերներից։ Ժամանակակից աշխարհում առաջացած նոր իրողությունները՝ աշխարհի հայահոծ շրջաններում անկայունության և պատերազմական իրավիճակների առաջացումը, ահաբեկչության ծավալումը, տեղեկատվական պատերազմների թեժացումը, Հայաստանի նկատմամբ թուրք-ադրբեջանական ագրեսիվ քաղաքականությունը և այլն, հարկադրում են հայությանը համախմբել իր ներուժը (այդ թվում նաև մտավոր) ազգային պետության շուրջ։

Հասկանալի է, որ արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառացած կադրային և այլ խնդիրները հաճախ ծագում են ֆինանսական խնդիրներից։ Ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով է, որ հաճախ հայագիտական կենտրոնները լուրջ խնդիրներ են ունենում իրենց կադրերին պահելու, նոր կադրեր ներգրավելու, անհրաժեշտ գրականության և նյութերի ձեռքբերման և այլ հարցերում։

Խնդիրների լուծման ուղիները

Որպես վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներ կարելի է առաջ քաշել երկու ուղի՝ Հայաստանի հետ կապերի ու համագործակցության խորացում և կազմակերպական մակարդակի բարձրացման միջոցով հայագիտական կենտրոնների գործունեության համակարգում։

Ակնհայտ է, որ առանց Հայաստանի հետ համագործակցության՝ արտերկրի հայագիտական կենտրոնների համար խիստ դժվար կլինի բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը։

Արտերկրի հայագիտական կենտրոնների հետ համագործակցող հայաստանյան կառույցներն են հիմնականում.

- պետական գերատեսչությունները՝ ի դեմս Մշակույթի նախարարության, Կրթության և գիտության նախարարության, Արտաքին գործերի նախարարության և այլն,
- գիտակրթական հաստատությունները՝ ԵՊՀ (Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, պատմության ֆակուլտետ, բանասիրության ֆակուլտետ և այլն), Մատենադարան, ԳԱԱ (Պատմության ինստիտուտ, Արևելագիտության ինստիտուտ և այլն), «Նորավանք» ԳԿՀ և այլն։

Ինչպես արդեն նշվեց, արտասահմանյան հայագիտական կենտրոնների առջև ծառացած ամենամեծ մարտահրավերը ֆինանսական միջոցների սղությունն է, որից էլ ածանցվում են այլ խնդիրները։ Ֆինանսական խնդիրների լուծմանն աջակցությունն ակնկալվում է վերջիններիս կողմից Հայաստանի հետ համագործակցության ենթատեքստում։ Հայաստանի Հանրապետությունն

իր սուղ հնարավորություններով առ այսօր հնարավորին չափով ֆինանսապես աջակցել է արտերկրի հայագիտական կենտրոններին։ Դա իր դրսևորումն է ստացել ՀՀ Սփյուռքի նախարարության և արտերկրի հայագիտական կենտրոնների կողմից համատեղ իրականացված բազմաթիվ ծրագրերում, ինչպիսիք են.

1. *Ֆինանսավորումը՝ հայկական ժառանգության պահպանման նպատակով։* Սա ՀՀ-ից արտերկրի հայագիտական կենտրոններին ֆինանսական աջակցության ամենաակնառու դրսևորումն է։ Այս առումով ուշագրավ է ՀՀ պետբյուջեից 100.000 եվրոյի չափով գումարի հատկացումը Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում և գրադարանում պահվող շուրջ 3.000 ձեռագրերի, 200.000 հնատիպ գրքերի և 18-րդ դարից մինչ օրս հավաքված դիվանագիտական և այլ բազմաթիվ փաստաթղթերի թվայնացման նպատակով։ ՀՀ Սփյուռքի նախարարության և Երևանի Հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանի աջակցությամբ ներկայումս ընթացքի մեջ են նաև Զմմառի Պատրիարքական միաբանության մատենադարանում պահվող հայկական ձեռագրերի թվայնացման, հաշվառման, մատենագրման և հրապարակման աշխատանքները[1]։
2. *Աջակցություն գիտաժողովների կազմակերպմանը։* Օրինակ՝ 2011թ. ՀՀ Սփյուռքի նախարարությունը Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ կազմակերպել է «Հայ գրքի հետքերով» գիտաժողովը։ Սփյուռքի նախարարությունը, համագործակցելով հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների հետ, կազմակերպել է նաև

[1] Նույն տեղում, էջ 82-83։

հայագիտական ուղղվածությամբ բազմաթիվ այլ գիտաժողովներ, ինչպիսիք են՝ «1946-48թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր», «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» և այլն։

3. *Աջակցություն ցուցահանդեսների կազմակերպմանը։* Այս առումով նշանավոր է, օրինակ, հայ տպագրության 500-ամյա հոբելյանին նվիրված հայկական տպարանների մնայուն ցուցահանդեսը Վենետիկի Սուրբ Ղազար կղզում։ Կամ 2012թ. նոյեմբերի 26-28-ը ՀՀ Սփյուռքի նախարարության և Զմմառի միաբանության համագործակցությամբ կազմակերպված՝ Միաբանությունում պահվող հայկական ձեռագրերի և հնատիպ գրքերի ցուցահանդեսը։
4. *Հայագիտական կենտրոններում կատարվող արժեքավոր հետազոտությունների հովանավորում։* Այս առումով հետաքրքիր օրինակ է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից Վենետիկի Մխիթարյան միաբանության Ընդհանուր Աթոռակալի տեղապահ, հայր Վահան ծ. վրդ. Օհանյանի և Ոսկան Մխիթարյանի հեղինակած «Հայերը Օսմանյան կայսրության վերջալույսին» աշխատության հովանավորումը։

Այսպիսով, ՀՀ Սփյուռքի նախարարության հովանավորությամբ արտերկրի հայագիտական կենտրոնների կողմից իրականացվել է մեծ ծավալի աշխատանք՝ կազմակերպվել են գիտաժողովներ և ցուցահանդեսներ, հրատարակվել են արժեքավոր աշխատություններ։ Սակայն ակնհայտ է, որ արտերկրի

հայագիտական կենտրոնների ֆինանսական խնդիրների լուծումը մեծապես կապված է Հայաստանի տնտեսական զարգացման և, հետևաբար, վերջինիս ֆինանսական հնարավորությունների մեծացման հետ։

Բացի ֆինանսական աջակցությունից, Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցության՝ ներկայումս հնարավոր այլ եղանակներն են.

- *Մեթոդաբանական աջակցություն։* Համագործակցության սույն ձևը վերաբերում է փոխադարձ աջակցությանը կուտակված փորձի փոխանակման միջոցով։ Հայաստանի հայագիտական կենտրոններն իրենց երկարամյա աշխատանքի ընթացքում կարողացել են կուտակել հսկայական փորձ թե՛ հետազոտական աշխատանքի, թե՛ ուսումնական գործունեության, թե՛ գիտաուսումնական աշխատանքի կազմակերպման և թե՛ այլ բնագավառներում։ Այդ փորձը կարող է ուսանելի լինել արտերկրի հայագիտական կենտրոնների համար։ Իհարկե՛, խոսքը չի վերաբերում Հայաստանի հայագիտական կենտրոնների փորձի մեխանիկական ընդօրինակմանը։ Դա կարող է արդյունավետ չլինել՝ հաշվի առնելով հայաստանյան և արտասահմանյան հայագիտական կենտրոնների գործունեության պայմանների և այլ հանգամանքների տարբերությունը։ Խոսքն ավելի շուտ սեփական գործունեության մեջ հայաստանյան հայագիտական կենտրոնների փորձը հաշվի առնելու մասին է։ Այս առումով խորհրդատվությունների տեսքով հայաստանյան հայագիտական կենտրոնների մեթոդաբանական աջակցու-

թյունն արտերկրի հայագիտական կենտրոններին կարող է նպաստել վերջիններիս խնդիրների լուծմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

- *Ուսումնական և հետազոտական նյութերի տրամադրում*: Ինչպես վերը նշվեց, արտերկրի հայագիտական կենտրոնների հիմնական խնդիրներից մեկն էլ հետազոտական և ուսումնական նյութերի անբավարարությունը կամ պակասն է: Հայագիտական կենտրոնները Հայաստանում այս առումով գտնվում են համեմատաբար բարվոք պայմաններում: Նախ՝ հայ ժողովրդի պատմական հայրենիքը և ազգային պետությունը լինելու բերումով Հայաստանում է կենտրոնացված հայագիտական արժեք ներկայացնող հետազոտական նյութերի մեծ մասը: Դրանք պահվում են այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են Հայաստանի ազգային արխիվը, Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանը, Պատմության և այլ թանգարանները, ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և այլն: Չենք խոսում այն մասին, որ Հայաստանի պատմամշակութային հուշարձանները, առանձին վայրերն ինքնին հետազոտության ենթակա հայագիտական նյութ են հանդիսանում: Բացի այդ, Հայաստանում է ամենաշատը ստեղծվում հայագիտական նշանակություն ունեցող գրականությունը՝ ի դեմս հետազոտական աշխատությունների, ուսումնական ձեռնարկների և այլն: Ա՛րդ, Հայաստանի հայագիտական կենտրոններն իրենց ունեցած հետազոտական նյութերը, իրենց

ստեղծած և ձեռք բերած գրականությունը կարող են տրամադրել նաև արտերկրի հայագիտական կենտրոններին՝ նրանց կողմից հետազոտական նյութերի և անհրաժեշտ գրականության անբավարարության խնդիրը թեկուզ մասնակիորեն լուծելու նպատակով: Ի դեպ, այս հարցում ժամանակակից տեխնիկական միջոցները կիրառման մեծ տեղ ունեն: Մասնավորապես, անհրաժեշտ գրականությունը կարող է տրամադրվել ոչ միայն տպագիր, այլև էլեկտրոնային տարբերակով: Կամ՝ հանրապետության տարածքից դուրսբերման ենթակա չեղող հայագիտական հետազոտական նյութերը (օրինակ՝ ձեռագիր մատյանները) կարող են տրամադրվել արտերկրի հայագիտական կենտրոններին թվայնացման միջոցով՝ տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով: Այդ խնդիրը կարելի է լուծել ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների լայն կիրառման միջոցով:

- *Համատեղ հետազոտություններ:* Գիտական կառույցների միջև համագործակցության սույն ձևն ամենատարածվածներից է ժամանակակից աշխարհում: Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնները կարող են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների և խնդիրների շուրջ իրականացնել համատեղ հետազոտություններ: Ջանքերի նման համատեղումը կնպաստի հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացմանը, քանի որ տեղի կունենան որևէ կոնկրետ նպատակի (ի դեմս հետազոտության) շուրջ ռեսուրսների

համախմբում և փոխլրացում։ Բացի այդ, այն կնպաստի նաև հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև կապերի ընդլայնմանն ու խորացմանը։ Հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոններն իրենց հարաբերություններում ունեն համատեղ հետազոտությունների որոշակի փորձ։ Ուշագրավ է, օրինակ, Բեյրութի Համազգային հայ կրթական և մշակութային միության Հայագիտական բարձրագույն հիմնարկի և ԵՊՀ համագործակցության անմիջական արդյունք հանդիսացող, 1998թ. Բեյրութում հրատարակված «Հայոց պատմություն (սկզբից մինչև մ.թ. 1 թվականը)» դասագիրքը, որը հայոց պատմության միասնական դասագիրք ստեղծելու առաջին փորձն էր և համապատասխանում էր Լիբանանի հայկական դպրոցների ուսումնական ծրագրերին[1]։

- *Համատեղ գիտաժողովներ։* Արտերկրի և հայաստանյան հայագիտական կենտրոնների միջև կապերի և համագործակցության ամրապնդման գործուն ձևերից մեկն էլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաներով համատեղ գիտաժողովների կազմակերպումն է, ինչը նույնպես ժամանակակից աշխարհում գիտական հաստատությունների միջև համագործակցության ամենատարածված և արդյունավետ մեխանիզմներից մեկն է։ Համատեղ գիտաժողովների կազմակերպման միջոցով արտերկրի և հայաստանյան հայագիտական կենտրոնները ռեսուրսնե-

[1] *Մինասյան Էդ.,* Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները, *Մինասյան Էդ., Վարդանյան Ա.,* Հայրենիք-սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.) հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 25։

րի փոխլրացման միջոցով կկարողանան համատեղ ուժերով հասնել ընդհանուր խնդիրների լուծմանը: Ընդ որում՝ համատեղ գիտաժողովների կազմակերպման շրջանակներում նույնպես կարող են լայնորեն կիրառվել ժամանակակից հեռահաղորդակցային տեխնոլոգիաները՝ էապես նվազեցնելով տարածական հեռավորությունից բխող խնդիրները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է առցանց գիտաժողովների, աշխատաժողովների, դասախոսությունների կազմակերպմանը կամ դրանց որոշ մասնագետների մասնակցությանը:

- *Հետազոտությունների պատվիրում:* Արտերկրի հայագիտական կենտրոններին համազգային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը ներգրավելու արդյունավետ միջոցներից կարող է լինել Հայաստանից՝ պետական մարմինների, հայագիտական կենտրոնների և այլ հաստատությունների կողմից, նրանց այնպիսի հետազոտությունների պատվիրումը, որոնք հայության համար այժմեական են, ինչպես նաև գիտական նորույթ (ակադեմիական և կիրառական) են պարունակում: Ինքնին հասկանալի է, որ այդպիսի հետազոտություններ իրականացնելու համար արտերկրի հայագիտական կենտրոնները պետք է ունենան համապատասխան ներուժ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է անհրաժեշտ քանակությամբ մասնագետների, գիտահետազոտական նյութերի և այլնի առկայությանը:
- *Հրատարակությունների փոխանակում:* Փոխադարձ ճանաչողության խորացման, միմյանց գիտական և այլ նվա-

ճումներին, խնդիրներին ու մարտահրավերներին հասու լինելու արդյունավետ միջոցներից է հրատարակությունների փոխանակումը հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև։ Խոսքը թե՛ էլեկտրոնային, թե՛ տպագիր հրատարակությունների մասին է։ Էլեկտրոնային հրատարակությունների առումով փոխանակման ձևերից են համացանցային բաններների (*banner*) տեղադրումը միմյանց կայքերում, էլ. փոստի միջոցով հրատարակությունների (առանձին հոդվածներ, զեկույցներ, ամսագրեր, մենագրություններ և այլն) էլեկտրոնային տարբերակների առաքումը միմյանց և այլն։ Տպագիր հրատարակությունների առումով խոսքը հայագիտական կենտրոնների հրատարակած պարբերական հանդեսների (գիտական, վերլուծական), անհատական և կոլեկտիվ մենագրությունների տեսքով իրականացված հետազոտությունների և այլնի փոխանակման մասին է։

- *Մասնագետների փոխանակում։* Համագործակցության սույն եղանակը ենթադրում է հայագիտական մի կենտրոնից մասնագետների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործուղումներ մեկ այլ կենտրոն՝ գիտահետազոտական, ինչպես նաև ուսումնական նպատակներով, և հակառակը։ Այս եղանակը նույնպես կարևոր նշանակություն ունի փորձի (գիտահետազոտական աշխատանքի, մանկավարժության, ուսուցման մեթոդիկայի և այլ առումներով) փոխանակման միջոցով փոխհարստացման տեսանկյունից։ Մասնագետների փոխանակումը կարևոր

նշանակություն ունի նաև ինչպես հայագիտական կենտրոնների գործունեությանը նոր լիցք հաղորդելու, այնպես էլ առանձին մասնագետների մասնագիտական աճի տեսանկյունից։ Հայտնվելով գիտահետազոտական և ուսումնական աշխատանքի նոր միջավայրում, շփվելով նոր կադրերի հետ, ինչպես նաև հասու լինելով մինչ այդ իրենց համար անհասանելի գիտահետազոտական նյութերին (արտերկրի կամ Հայաստանի հայագիտական կենտրոններում պահվող ձեռագրեր, հնատիպ գրքեր և այլ հրատարակություններ, արխիվային փաստաթղթեր, թանգարանային նմուշներ և այլն), մասնագիտական գրականությանը և այլն՝ գործուղված մասնագետները կբարձրացնեն իրենց մասնագիտական պատրաստվածության աստիճանը, կհարստացնեն գիտելիքները, կտիրապետեն գիտահետազոտական և ուսումնական աշխատանքի նոր մեթոդների։ Դա էլ իր հերթին կնպաստի նրանց կենտրոնների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, քանի որ, վերադառնալով իրենց կենտրոններ, գործուղված մասնագետները կկիրառեն ձեռք բերած գիտելիքներն ու փորձն իրենց կենտրոններում՝ տարածելով դրանք նաև իրենց գործընկերների շրջանում։

- *Համատեղ հրատարակությունների հիմնում։* Հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոններն իրենց համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու նպատակով կարող են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմատիկայի վերաբերյալ (ինչպիսիք են,

օրինակ, ցեղասպանագիտությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման, հատուցման, հետևանքների վերացման հարցը, արդի Հայկական Սփյուռքը և այլն) հիմնել հրատարակություններ՝ ամսագրեր, տարեգրքեր, համացանցային կայքեր և այլն։

Համագործակցության այս միջոցների կիրառումն ունի փոխշահավետ նշանակություն, քանզի նպաստում է կողմերի հարստացմանը՝ փորձով, գիտելիքներով, նոր մեթոդներով և այլն։ Հետևաբար, համակարգված փոխգործակցությունն անհրաժեշտություն է ոչ միայն արտերկրի, այլև հայաստանյան հայագիտական կենտրոնների համար[1]։ Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, վերոհիշյալ և այլ[2] եղանակներով համագործակցությունը կարող է բարձրացնել Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև փոխադարձ ճանաչողության մակարդակը, նպաստել նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, միմյանց խնդիրների համատեղ լուծմանը, համազգային խնդիրների լուծման գործում նրանց ջանքերի համադրմանը և այլն։

Նշենք նաև, որ համագործակցության վերոնշյալ եղանակներն առկա են Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների հարաբերություններում։ Ուշագրավ է, օրինակ, 2009թ. հոկտեմբերի 3-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի և ԵՊՀ-ի միջև ստորագրված համագործակցության պայմանագիրը, որում,

[1] *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 51։

[2] Թվարկված եղանակները չեն սպառում Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցության ողջ հնարավորությունը և, հետևաբար, չեն բացառում համագործակցության այլ ձևեր։

մասնավորապես, ասվում է. «Երկու համալսարաններն, ընդունելով, որ ակադեմիական և գիտական հետազոտական նպատակների համար գործակցությունն անփոխարինելի ազդակ է երկուստեք զարգացման համար, հանձն են առնում ըստ կարիքի և հնարավորության պայմաններ ստեղծել իրենց աշխատակիցների, մասնագետների, ուսանողների և հրատարակությունների փոխանակության համար»[1]: Խնդիրը ներկայումս այդ եղանակների համակարգումն է[2], զարգացումը և խորացումը:

Արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառացած խնդիրների լուծման միջոցներից մեկն էլ նրանց գործունեության համակարգման արդյունավետ մեխանիզմների ստեղծումն է: Այս խնդրի լուծումը կապված է հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների և անհատ հայագետների գործունեությունը համակարգող համաշխարհային կազմակերպական կառույցի ձևավորման հետ:

Համաշխարհային մասշտաբով հայագիտական կենտրոնների գործունեությունը համակարգող կառույցի մի տարբերակ ստեղծելու առաջարկություն արդեն հնչել է 2013թ. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի ընթացքում: Խոսքը Համահայկական Հայագիտական խորհրդի՝ որպես համահայկական հայագիտության ղեկավար և համակարգող մարմնի, գաղափարի մասին է: Խորհրդի գործունեության մեջ կարևորվում են հայագիտության միասնական և համակարգված քաղաքականության ու հայեցակարգի գիտական լրամշակումը, նրա

[1] «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», Երևան, 2009, թիվ 4, էջ 18:

[2] Տարերայնություններից և զուտ պահի թելադրանքով պայմանավորված քայլերից խուսափելու նպատակով:

գերակա ուղղությունների հստակեցումը, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում գործող հայագիտական հաստատությունների առավել արդյունավետ ծրագրերի մշակումը և դրանց համադրումը, էլեկտրոնային կայքի միջոցով ոլորտի միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորումը՝ հետազոտվող թեմաների և նյութերի առավելագույն հասանելիություն ապահովելու նպատակով, խմբագրական խորհրդի ստեղծումը՝ տարվա հայագիտական լավագույն աշխատանքներն առանձնացնելու, խմբագրելու և դրանք հատուկ ալմանախում օտար լեզուներով, մասնավորապես անգլերենով հրատարակելու համար[1]։

[1] *Հակոբյան Հ.,* նշվ. աշխ., էջ 90։

ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՑԱՆԿ[1]

ԱՄՆ

1. Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարան, Վաշինգտոն (Armenian Genocide Museum of America)
   http://www.armeniangenocidemuseum.org/

2. Արիզոնայի պետական համալսարանի ռուսերենի, եվրասիական և արևելաեվրոպական լեզուների հետազոտությունների «Մելիքյան» կենտրոն (Arizona State University, The Melikian Center)
   http://melikian.asu.edu/

3. Բերքլիի Կալիֆորնիայի պետական համալսարանի Սլավոնական, արևելաեվրոպական և եվրասիական ուսումնասիրությունների ինստիտուտի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագիր (University of California, Berkeley Institute of Slavic, East European, and Eurasian Studies, Armenian Studies Program)
   http://iseees.berkeley.edu/asp

4. Բոստոնի համալսարանի Հայոց նոր պատմության և գրականության ամբիոն (Charles K. and Elisabeth M. Kenosian Chair in Modern Armenian History and Literature at Boston University)

[1] Ցանկում ներկայացված են սույն հետազոտության ընթացքում հաշվառված հայագիտական միավորները։

5. Գրիգոր և Կլարա Զոհրաբ տեղեկատվական կենտրոն (Krikor and Clara Zohrab Information Center)
http://zohrabcenter.org/
6. Դիրբոռնի Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն (Armenian Research Center at the University of Michigan-Dearborn)
https://www.umd.umich.edu/dept/armenian/
7. Զորյան ինստիտուտ (Zoryan Institute)
http://www.zoryan institute.org/
8. Թաֆթսի համալսարանի Արվեստի և արվեստի պատմության բաժանմունք / Քրիստինա Մարանչին դասավանդում է «Art of the Armenian Manuscript» առարկան
http://ase.tufts. edu/art/courses/
9. Իրվինի Կալիֆորնիայի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիր (Armenian Studies program at University of California, Irvine)
http://sites.uci.edu/armenianstudies/
10. Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայոց լեզվի և մշակույթի Գրիգոր Նարեկացու անվան ամբիոն (Grigor Narekatsi Chair in Armenian Language and Culture at UCLA)
http://www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/index.html
11. Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Հայոց նոր պատմության ամբիոն (UCLA, Chair of Modern Armenian History)
http://www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/index.html

12. Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և մշակույթների բաժանմունքի Հայագիտության բակալավրի ծրագիր (BA degree in Armenian Studies, The Department of Near Eastern Languages and Cultures (NELC) at UCLA)
http://www.nelc.ucla.edu/

13. Լոս Անջելեսի Կալիֆորնիայի պետական համալսարանի Քոսթըն հնագիտության ինստիտուտի Հայ հնագիտության և ազգագրության հետազոտական ծրագիր (Research Program for Armenian Archaeology and Ethnography UCLA Cotsen Institute of Archaeology)
   - http://www.ioa.ucla.edu/resources/cotsen-labs-archives/hampartzoum-and-ovsanna-chitjian-collection-and-archive/
   - Armenian Professors
   - http://www.nelc.ucla.edu/people/faculty/2-uncategorised/144-armenianprofessors.html)
   - Armenian Courses
   - http://www.registrar.ucla.edu/schedule/catalog.aspx?sa=ARMENIA&funsel=3)

14. Կալիֆորնիայի պետական համալսարանի Ֆրեզնոյի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագիր (California State University Fresno / Armenian Studies Program)
http://www.fresnostate.edu/artshum/armenianstudies/

15. Կոլումբիայի համալսարանի Միջինարևելյան, հարավասիական և աֆրիկյան ուսումնասիրությունների բաժանմունքի հայոց լեզվի ծրագիր

(The Armenian language program of the department of Middle Eastern, South Asian, and African studies (MESAAS) of Columbia University)

- http://www.college.columbia.edu/bulletin/depts/mealac.php
- http://www.columbia.edu/cu/mesaas/languages/armenian/

16. Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն, Ֆրեզնո (SAS-Society for Armenian Studies)
http://societyfor armenianstudies.com/

17. Հայկական ազգային ինստիտուտ (Վաշինգտոն) (Armenian National Institute)
http://www.armenian-genocide.org/

18 Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցություն (The National Association for Armenian Studies and Research, NAASR)
http://www.naasr.org/

19. Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբ (The Armenian International Policy Research Group, AIPRG)
http://www.aiprg.net

20. Հայոց եկեղեցու հետազոտության և վերլուծության խումբ (Armenian Church Research and Analysis Group)
http://acrag.wordpress.com/

21. Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների ինստիտուտ (University of Southern California, Institute of Armenian Studies)

http://dornsife.usc.edu/cf/faculty-and-staff/staff-by-dept.cfm?did=1001730000

22. Հարվարդի համալսարանի Մաշտոցի անվան հայագիտական ուսումնասիրությունների ամբիոն (Mashtots Chair in Armenian Studies at Harvard University)

23. Մինեսոթայի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնի Հայագիտական հետազոտական նախագիծ (University of Minnesota Center for Holocaust and Genocide Studies, Armenian Research Project)

    - http://www.chgs.umn.edu/pdf/ArmenianResearchProject.pdf

    Armenian Genocide

    - http://www.chgs.umn.edu/histories/armenian/

24. Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ծրագիր (Armenian Studies Program, University of Michigan, Ann Arbor)
    https://www.lsa.umich.edu/asp

25. Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյանի անվան ամբիոն (Marie Manoogian Chair in Armenian Language and Literature, University of Michigan, Ann Arbor)

26. Միչիգան-Էնն Արբոր համալսարանի Հայոց նոր պատմության Ալեք Մանուկյանի անվան ամբիոն (Alex Manoogian Chair in Modern Armenian History, University of Michigan, Ann Arbor)

27. Նորթրիջում Կալիֆորնիայի պետական համալսարանի Նոր ու դասական լեզուների և գրականության բաժանմունքի Հայկական բաժին (California State University Northridge, Department of Modern and Classical Languages and Literatures/ Armenian program)
http://www.csun.edu/~fl51594/
28. Չիկագոյի համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և քաղաքակրթությունների բաժանմունքի Հայոց լեզվի ուսուցման ծրագիր (University of Chicago, Department of Near Eastern Languages and Civilizations/ The Armenian Program)
http://cmes.uchicago.edu/page/armenian
29. Քլարկի համալսարանի Հայոց նոր պատմության և Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ամբիոն (Kaloosdian/Mugar Chair in Modern Armenian History and Armenian Genocide Studies, Clark University)
30. Քոնեկթիկուտի համալսարանի Նորյան հայագիտական ծրագրեր (Norian Armenian Programs at the University of Connecticut)
http://armenia.uconn.edu/
31. Armenian Review
http://www.armenianreview.org/

Ավստրիա

32. Զալցբուրգի համալսարանի լեզվաբանության ինստիտուտ, Մայր-Մելնհոֆի անվ. Քրիստոնյա Արևելքի ինստիտուտի հայագիտության բաժին (Dept. for Armenian Studies at Mayr-Melnhof- Institute for Eastern Christian Studies / University of Salzburg/ Dept. for Linguistics)
33. Վիեննայի համալսարանի Բյուզանդագիտության բաժին (դասավանդվում է «Հայկական ճարտարապետություն» (Armenische Architektur) առարկան)
34. Վիեննայի Մխիթարյան միաբանություն www.mechitharis ten.org

Արգենտինա

35. Արգենտինայի Ջոն Ֆ. Քենեդու անվան համալսարանի հայագիտական ամբիոն (Universidad Argentina John F. Kennedy Cátedra Armenia)
36. Բուենոս Այրեսի համալսարանի հայագիտության ազատ ամբիոն (Cátedra Libre de Estudios Armenios) http://www.filo.uba.ar/contenidos/secretarias/seube/catedras/cont/armenios.html
37. Դել Սալվադոր համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայագիտական ամբիոն (Armenia de la carrera de Estudios Orientales de la Universidad del Salvador)
38. Ռոսարիոյի ազգային համալսարանի հայագիտական ամբիոն (Cátedra Armenia Universidad Nacional de Rosario) http://catedrarmeniaunr.blogspot.com/

Բելգիա

39. Լուվենի Կաթոլիկ համալսարանի Հայագիտության բաժին

Բրազիլիա

40. Սան Պաուլոյի համալսարանի Հայոց լեզվի ամբիոն (Departamento de Letras Orientais, Armenio)
http://www.letrasorien tais.fflch.usp.br/armenio

Բուլղարիա

41. Սուրբ Կլիմենտ Օհրիդսկու անվան Սոֆիայի համալսարանի Արևելյան լեզուների և մշակույթների ուսումնասիրության կենտրոնի Հայկական և կովկասյան ուսումնասիրությունների ծրագիր (Armenian and Caucasus Studies Program Center for the Study of Eastern Languages and Cultures, Sofia University "St. Kliment Ohridski")
http://sitekreator.bg/armenianstudies/welcome.html

Գերմանիա

42. Հայկական հարցերի հաստատություն (Instituts für armenische Fragen)
www.haydat-institut.org
43. Մեսրոպ հայագիտական հետազոտությունների կենտրոն (MESROP Arbeitsstelle für Armenische Studien-Orientalisches Institut der MLU Halle-Wittenberg)
www.mesrop.uni-halle.de

Եգիպտոս

44. Կահիրեի համալսարանի Հայագիտական ամբիոն

Իսրայել

45. Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտության ծրագիր
    - http://micro5.mscc.huji.ac.il/~armenia/
    - http://unix ware.mscc.huji.ac.il/~armenia/
46. Երուսաղեմի Հայոց պատրիարքության դպրեվանք

Իտալիա

47. Բոլոնիայի համալսարանի Բանասիրության ֆակուլտետի Հայագիտության ամբիոն
48. Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոն (Centro Studi e Documentazione della Cultura Armena)
49. Պիզայի համալսարանի լեզվաբանության բաժին (դասավանդվում է «Հայ բանասիրություն» (Filologia Armena) առարկան)
    http://unimap.unipi.it/registri/dettregistriNEW.php?re=153848:::&ri=8049
50. Վենետիկի Մխիթարյան միաբանություն
    www.mechitar.com
51. Վենետիկի Կա-Ֆոսկարի անվան համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոն

Իրան

52. Թեհրանի համալսարանի Հայագիտության ամբիոն
53. Սպահանի համալսարանի Հայագիտության ամբիոն
54. Թեհրանի Իսլամական ազատ համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոն

Կիպրոս

55. Նիկոսիայի Հայկական հետազոտությունների կենտրոն

Լեհաստան

56. Լեհահայեր պարբերական (Lehahayer)
www.lehahayer.com
57. Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամ (Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich)
www.dziedzictwo.ormianie.pl
58. Կոպեռնիկոսի համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոն (Centrum Badan Ormianskich)
www.centrum-armenia.umk.pl

Լիբանան

59. Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայագիտության ամբիոն
http://www.haigazian.edu.lb/Academics/Documents/Armenian%20Studies.pdf
60. Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի հետազոտության կենտրոն
http://www.haigazian.edu.lb/ADRC/Pages/default.aspx

61. Բեյրութի Համազգային Հայ կրթական և մշակութային միության Հայագիտական բարձրագույն հիմնարկ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանք
http://www.armenianorthodoxchurch.org/դպրեվանք
62. Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքության «Իգնատիոս Մալոյեան» դպրեվանք
http://www.bzommarvank.com/?page=seminaire-st-ignace
63. Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքության «Ս. Միքայէլ» դպրեվանք
http://www.bzommarvank.com/?page=seminaire-st-michel
64. Հայ Կաթողիկե պատրիարքարանի դպրոցական հայագիտության զարգացման գրասենյակ
65. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Խաչեր Գալուստեան» մանկավարժական կենտրոն
http://www.armenianorthodoxchurch.org/խաչեր-գալուստեան-մանկավարժական-կե

Կանադա

66. Հայկական հետազոտական կենտրոն (Տորոնտո) (Armenian Research Center)
http://www.armenianresearchcenter.com/

Մեծ Բրիտանիա

67. Կոմիտաս ինստիտուտ (Gomidas Institute)
www.gomidas.org

68. Հայկական ինստիտուտ (Armenian Institute) www.armenianinstitute.org.uk
69. Օքսֆորդի համալսարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան հայագիտության ամբիոն (Calouste Gulbenkian Professorship of Armenian Studies Oxford http://www.orinst.ox.ac.uk/administration/trust_funds/calouste_gulbenkian_professorship_of_armenian_studies.html)

Շվեյցարիա

70. Ժնևի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն (Centre de recherches arménologiques Université de Genève) http://www.unige.ch/lettres/meslo/armenien/CentredeRecherches.html
71. Հայկական ուսումներու միջազգային ընկերակցություն (Association Internationale des Études Armèniennes-AIEA) http://aiea.fltr.ucl.ac.be/AIEAfr/Accueil.html

Ռումինիա

72. Կլուժ-Նապոկայի Բաբեշ-Բոյայ համալսարանի Հայագիտության ինստիտուտ

Ռուսաստան

73. Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների և համաշխարհային պատմության ֆակուլտետի Հայագիտական կենտրոն

(Центр арменоведения Института международных отношений и мировой истории Нижегородского государственного университета)

74. Հայագիտության կենտրոն (Центр арменоведения)
http://armenology.ru/

75. ՌԴ ԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտի Հայկական ֆոնդ (Армянский фонд Института восточных рукописей Российской академии наук)

76. Ռյազանի պետական համալսարանի Հայագիտական կենտրոն (Центр арменоведения Рязанского государственного университета)

77. Ռուս-հայկական բարեկամություն (Русско-армянское содружество)

78. Ռուս-հայկական հարաբերությունների զարգացմանն աջակցության տարածաշրջանային հասարակական շարժում (Региональное общественное движение содействия развитию русско-армянских отношений)
http://rus-arm.org/

79. Ռուս-հայկական ռազմավարական և հասարակական նախաձեռնությունների աջակցության կենտրոն (Центр поддержки Русско-Армянских стратегических и общественных инициатив)
http://russia-armenia.info/

80. Ուրալի դաշնային համալսարանի Սոցիալական և քաղաքական գիտությունների ինստիտուտի Միջազգային հարաբերությունների բաժանմունքի Հայագիտության կենտրոն

(Центр Арменоведения Департамента Международных отношений Института Социальных и Политических наук Уральского Федерального института)
http://ispn.urfu.ru/departamenty/departament-mezhdunarodnykh-otnoshenii/
(գործում է Միջազգային հարաբերությունների տեսության և պատմության ամբիոնի կազմում)

81. «Time to analyze»
http://tta.am/

Սիրիա

82. Հալեպի համալսարանի Հայագիտության ամբիոն

Վրաստան

83. Թբիլիսիի պետական համալսարանի Հայագիտական ամբիոն
84. Թբիլիսիի մանկավարժական ինստիտուտի Հայագիտական ամբիոն
85. Վիրահայոց թեմի Հայագիտական կենտրոն

Ուկրաինա

86. Կիևի պետական համալսարանի Հայագիտության ամբիոն
87. Ուկրաինայի հայերի միության Հայագիտական կենտրոն

Ֆրանսիա

88. Էքս-Ան-Պրովանս քաղաքի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոն (Section d'arménien de l'Université de Provence à Aix-en-Provence)
89. Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն (Société des Etudes arméniennes)
www.etudes-armeniennes.org
90. Հայկական հետազոտությունների Միջերկրածովյան ինստիտուտ (Institut Méditerranéen de recherches Arméniennes)
91. Հայկական հիշողության ազգային կենտրոն (Centre National de la Mémoire Arménienne)
www.cnma.fr
92. Հայկական հիշողության հետազոտման և արխիվացման ասոցիացիա (Association pour la Recherche et l'Archivage de la Mémoire Arménienne-ARAM)
www.webaram.com
93. Հայկական ուսումնասիրությունների Սայաբալիան ինստիտուտ (Institut Sayabalian d'Etudes Armeniennes)
94. Նուբարյան գրադարան (Bibliothèque Nubar)
http://ugabfrance.org/program-type/bibliotheque-nubar/
95. Չոպանյան ինստիտուտ (Institut Tchobanian)
www.tchobanian.org
96. Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի հայագիտության բաժին (INALCO)

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ հայագիտական կենտրոնները հաստատություններ են, որոնք իրականացնում են գիտահետազոտական և կրթական գործունեություն հայոց լեզվի, հայոց պատմության, հայ մշակույթի, քաղաքականության և ընդհանրապես Հայաստանին և հայությանը վերաբերող թեմաներով։

Հայաստանից դուրս այսօր այդպիսի կառույցներ գործում են Ամերիկայում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և հետխորհրդային որոշ երկրներում։ Ամերիկա աշխարհամասում հայագիտության ամենամեծ օջախը ԱՄՆ-ն է։ Այստեղ գործում են ավելի մեծ թվով հայագիտական կենտրոններ, քան աշխարհամասի այլ երկրներում։ Եվրոպայում համեմատաբար առաջատար դիրքերում են գտնվում Իտալիան և Ֆրանսիան։ Մերձավոր Արևելքում հայագիտական կենտրոնների ներուժով (նրանց քանակով և գործունեության ակտիվությամբ) Լիբանանը և Իրանն ունեն որոշակի առավելություն մյուս երկրների նկատմամբ։ Իսկ հետխորհրդային երկրներից հայագիտությունն առավել մեծ ներուժ ունի Ռուսաստանում։

Արտերկրում հայագիտական կենտրոնների հիմնադրման նախադրյալներն են այլ երկրներում հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը, հայկական Սփյուռքի և Հայաստանի՝ օտար միջավայրում հայ ինքնության պահպանմանը, ողջ աշխարհում հայկական մշակույթի և քաղաքակրթության տարած-

մանն ուղղված ջանքերը։ Այլ երկրներում հայկական հարուստ գրական և պատմամշակութային ժառանգության առկայությունը, որը որպես հետազոտության նյութ իր վրա է հրավիրում մասնագետների ուշադրությունը, ինչպես նաև հայ և այլ ժողովուրդների (օրինակ՝ հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-իրանական) պատմական առնչությունները մշակույթի, կրոնի, քաղաքականության և այլ ոլորտներում, լրացուցիչ խթան են հանդիսանում արտերկրում հայագիտական կենտրոնների հիմնադրման համար։

Արտերկրի հայագիտական կենտրոններն իրականացնում են մի շարք կարևոր գործառույթներ, ինչպիսիք են հայապահպանությունը Սփյուռքում, հայկական մշակույթի և քաղաքակրթության տարածումն աշխարհում, հայագիտության զարգացումը, հակահայ քարոզչության դեմ պայքարը, հայ և այլ ժողովուրդների միջև գիտամշակութային կապերի ամրապնդումն ու խորացումը, Սփյուռքի համար մանկավարժական կադրերի և հասարակական գործիչների պատրաստումը, քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում կատարվող կիրառական հետազոտությունները։

Կան նաև այնպիսի կենտրոններ, որոնց գործունեությունը շեղվում է վերոհիշյալ նպատակներից և հաճախ հակադրվում է դրանց։ Այդպիսի կենտրոններ գործում են Թուրքիայում, Ադրբեջանում և նրանց հովանավորությամբ՝ այլ երկրներում։ Նրանց նպատակը աջակցությունն է Թուրքիայի և Ադրբեջանի արտաքին քաղաքականությանը տեղեկատվական-քարոզչական ասպարեզում, ինչպես նաև այդ երկրների հատուկ ծառայությունը-

ների գործունեության սպասարկումը։ Այդ է պատճառը, որ դրանց գործունեությունը հաճախ կրում է հակահայ բնույթ և զուրկ է գիտականությունից։ Եվ պատահական չէ, որ դրանք հաճախ անվանում են «հակահայագիտական» կամ «կեղծ հայագիտական» կենտրոններ։

Ներկայումս արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառացած խնդիրներից կարելի է մատնանշել հատկապես ֆինանսական միջոցների սղությունը, անհրաժեշտ կադրերի պակասը, հետազոտական և ուսումնական նյութերի անբավարարությունը, նրանց գործունեության համակարգվածության անբավարար մակարդակը։ Այս խնդիրներից հիմնականը ֆինանսականն է, որից էլ հաճախ ածանցվում են մյուսները։

Արտերկրում գործող հայագիտական կենտրոնների ֆինանսավորման աղբյուրներն են այն գիտական ու կրթական հաստատությունների բյուջեները, որոնց կազմում դրանք գործում են, Սփյուռքի համազգային կառույցները, տեղական հայ համայնքները և ՀՀ պետբյուջեն։ Արտերկրի հայագիտական կենտրոնները հիմնականում ֆինանսավորվում են հայկական աղբյուրներից՝ Սփյուռքից և Հայաստանից։ Իսկ վերջիններիս ֆինանսական հնարավորություններն անսահմանափակ չեն։

Ակնհայտ է, որ արտերկրի հայագիտական կենտրոնների համար, առանց Հայաստանի պետական մարմինների և հայագիտական կենտրոնների հետ համագործակցության, դժվար կլինի լուծել իրենց առջև ծառացած խնդիրները։

ՀՀ-ն իր սուղ միջոցներով մշտապես նպաստել է արտասահմանում հայագիտական կենտրոնների ստեղծմանը,

պահպանմանը և գործունեության ապահովմանը։ Այնուամենայնիվ, խնդրի վերջնական լուծումը կապված է Հայաստանի տնտեսական զարգացման և նրա ֆինանսական հնարավորությունների ընդլայնման հետ։

Հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցությունը կարող է իրականացվել մեթոդաբանական աջակցության, հետազոտական և ուսումնական նյութերի տրամադրման, համատեղ հետազոտությունների իրականացման, համատեղ գիտաժողովների կազմակերպման, հետազոտությունների պատվիրման, հրատարակությունների և մասնագետների փոխանակման, համատեղ պարբերականների հիմնման և այլ միջոցներով։ Համագործակցության այս ձևերը ներկայումս որոշակիորեն առկա են։ Խնդիրը դրանց համակարգման, զարգացման և խորացման մեջ է։

Արտերկրի հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացման տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև ամբողջ աշխարհի հայագիտական կենտրոնների գործունեությունը համակարգող գլոբալ կառույցի ստեղծումը։

РЕЗЮМЕ

Таким образом, арменоведческие центры – учреждения, осуществляющие научно-исследовательскую и образовательную деятельность, связанную с армянским языком, армянской историей, культурой, политикой и в целом темами, относящимися к Армении и армянству.

На сегодня за пределами Армении такие структуры действуют в Америке, Европе, на Ближнем Востоке и в некоторых постсоветских странах. На американском континенте крупнейшим центром арменоведения выступают США. Здесь действует больше армяноведческих центров, чем в других странах континента. В Европе в этом плане лидируют Италия и Франция. На Ближнем Востоке по потенциалу арменоведческих центров (количество и степень активности) Ливан и Иран имеют определенное преимущество по сравнению с остальными странами региона. А среди постсоветских стран наибольшим арменоведческим потенциалом обладает Россия.

Предпосылки основания арменоведческих центров за рубежом – интерес к армянству, усилия Армении и Диаспоры, направленные на сохранение армянской идентичности в чужой среде, распространение армянской культуры и цивилизации в мире. Наличие богатого литературного и историко-культурного армянского наследия в других странах, привлекающее внимание исследователей как материал для изучения, а также историче-

ские связи армянского и других народов (например, армяно-российские, армяно-грузинские, армяно-иранские) в области культуры, религии, политики и других выступают стимулом для открытия арменоведческих центров за рубежом.

Зарубежные арменоведческие центры выполняют ряд важных функций: сохранение армянской идентичности в Диаспоре, распространение армянской культуры и цивилизации по миру, борьба с антиармянской пропагандой, укрепление и развитие научно-культурных связей между армянским и другими народами, подготовка педагогических кадров и общественных деятелей для Диаспоры, прикладные исследования в политической, экономической и других сферах.

Есть и такие центры, деятельность которых отклоняется от указанных целей и подчас противопоставляется им. Такие центры действуют в Турции, Азербайджане и – при их поддержке – в других странах. Их цель – поддержка внешней политики Турции и Азербайджана в информационно-пропагандистской сфере, а также обслуживание спецслужб этих стран. Поэтому деятельность подобных центров зачастую носит антиармянский характер и далека от научности. Не случайно, их часто называют «антиарменоведческими» или «псевдоарменоведческими» центрами.

В настоящее время из числа стоящих перед арменоведческими центрами проблем можно выделить недостаток финансирования, дефицит необходимых кадров, нехватку исследовательских и учебных материалов, неудовлетворительный уровень ко-

ординации их деятельности. Основная проблема здесь финансовая, зачастую именно ею обусловлены остальные.

Источники финансирования зарубежных арменоведческих центров – бюджеты тех научных и учебных заведений, в составе которых они функционируют, общенациональные структуры Диаспоры, местные армянские общины и госбюджет РА. У зарубежных арменоведческих центров в основном два источника финансирования: Армения и Диаспора. А финансовые возможности последних не беспредельны.

Очевидно, что без сотрудничества с арменоведческими структурами и государственными органами Армении зарубежным арменоведческим центрам трудно будет решать стоящие перед ними задачи.

При всей скудости своих средств РА всегда содействовала созданию, сохранению и развитию деятельности зарубежных арменоведческих центров. Тем не менее окончательное решение проблемы связано с экономическим развитием Армении и расширением ее финансовых возможностей.

Сотрудничество находящихся в РА и зарубежных арменоведческих центров может осуществляться посредством методологической поддержки, предоставления исследовательских и учебных материалов, организации совместных исследований, организации совместных научных конференций, заказе исследований, публикаций и обмена специалистами, учреждением совместного периодического издания и т.д. Эти формы сотрудничества в той или иной степени используются и сегодня. Проблема в их координации, развитии и углублении.

Для повышения эффективности деятельности зарубежных арменоведческих центров важное значение имеет и создание глобальной структуры, координирующей деятельность арменоведческих центров по всему миру.

SUMMARY

The centers for Armenian Studies are institutions that implement research and educational activities related to Armenian language, history, culture, politics and generally Armenia and Armeniancy.

Outside Armenia such organizations exist in America, Middle East and some post-Soviet countries. In the American continent the USA is the largest hub for Armenian Studies. There are more centers for Armenian Studies in this country than in the other countries of the continent. Italy and France have relatively more centers in Europe. In the Middle East Lebanon and Iran prevail over the other countries in terms of the potential, i.e. number and activity level of the centers for Armenian Studies. As for the post-Soviet countries, Russia holds the highest potential for Armenian Studies.

The prerequisites for establishment of centers for Armenian Studies abroad include interest in other countries toward Armenian Studies, the efforts of Armenia and Armenian Diaspora to preserve Armenian identity in foreign environment, and to spread Armenian culture and civilization around the world. The rich Armenian literary, historical and cultural legacy attracts attention of specialists as a research object, while the relations between Armenian and other peoples (e.g. Armenian-Russian, Armenian-Georgian, Armenian-Iranian relations) provide additional impetus to establishment of centers for Armenian Studies abroad.

The centers for Armenian Studies in foreign countries implement a number of important functions, such as preservation of Armeniancy in diaspora, spreading Armenian culture and civilization globally, struggle against anti-Armenian propaganda, strengthening scientific and cultural ties between Armenians and other peoples, training teachers and public figures for diaspora, conducting applied research in policy, economy and other fields.

There are also some centers the activities of which deviate from the mentioned objectives and often contradict those. Such centers function in Turkey, Azerbaijan and under their sponsorship also in other countries. Their goal is to provide information and propaganda support to the foreign policies of Turkey and Azerbaijan, as well as to serve the special intelligence services of these two countries. For this reason the activities of such centers are often anti-Armenian by nature and non-scientific. Unsurprisingly, these are often dubbed as centers for “anti-Armenian studies” or “pseudo-Armenian studies”.

Among the problems that foreign centers for Armenian Studies currently face the following have to be noted: insufficient financial resources, lack of necessary specialists, scarcity of research and educational materials, and insufficient level of coordination of their activities. The financial problem is the main one and the others are often derivatives of that.

The main sources of financing for the centers of Armenian Studies abroad are the scientific and educational institutions within frameworks of which they function, as well as pan-national structures of Diaspora, the local Armenian communities and the state

budget of the Republic of Armenia. Foreign centers for Armenian Studies are mainly financed from Armenian sources, both Armenia and Diaspora, the financial capacities of which are not unlimited.

Obviously, without cooperation between government bodies of Armenia and centers for Armenian Studies, it would be very difficult for the latter to solve the problems they face.

The Republic of Armenia has always contributed with its scarce resources to establishing, maintaining and supporting the activities of the centers for Armenian Studies. However, the final solution of the problem is related to the economic development and better financial capacities of Armenia.

The cooperation between centers for Armenian Studies in Armenia and abroad can be accomplished through methodological support, provision of research and educational materials, organization of joint conferences, placing research contracts, exchange of publications and specialists, creation of joint periodicals, etc. All of these forms of collaboration are already present to one or another extent. The coordination, development and deepening of these cooperative efforts should be the goal.

From the perspective of increasing the effectiveness of the centers for Armenian Studies around the world it is also critical to establish a global structure for their coordination.

Նշումների համար

ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գիտական խմբագիր՝
Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հեղինակային խումբ՝
Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ
Տիգրան ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 11,5 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 250։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։